

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ
ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՅՆՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

Հանրակրթության առարկայական չափորոշիչների և ծրագրերի բարեփոխման շրջանակներում «Օտար լեզուներ» բնագավառը ներկայանում է մի շարք լեզուներով: Դրանք են անգլերենը, գերմաներենը, ռուսերենը և ֆրանսերենը: Հանրակրթության պետական չափորոշով թվարկված երկու լեզուներից առնվազն երկուսի ուսուցումը պարտադիր պահանջ է:

ԿԳՄՄՆ նախարարի N-405-Ն հրամանով երրորդ օտար լեզվի ընտրության հնարավորության հետ համակցությամբ՝ «Օտար լեզուներ» բնագավառը և այն ներկայացնող առարկաները միտված են աշակերտների շրջանում բազմալեզվության և միջմշակութային իրազեկության զարգացմանը: Բնագավառը շեշտադրում է աշակերտի՝ բազմալեզու հաղորդակցության ժամանակ ակտիվ սոցիալական դերակատար լինելը, որտեղ օտար լեզուներով հաղորդակցությունը օգնում է աշակերտին ճանաչել աշխարհը և այլ մշակույթներ, իր մշակույթը ներկայացնել այլ լեզուներով, հանդես գալ որպես ստեղծագործ և քննական մտածողությամբ օժտված անհատ, համագործակցել անձնական, խմբային, համայնքային և հասարակական հնչեղության հարցերի լուծման նպատակով:

Օտար լեզուների դասավանդման **նպատակն** է ձևավորել տարբեր լեզուների տիրապետող անձ, որն ունակ է հաղորդակցվել և գործել ժամանակակից բազմալեզու և բազմամշակույթ աշխարհում:

Օտար լեզուների դասավանդման **խնդիրները/նպատակին հասնելու ուղիներն** են՝

- Լեզվական գիտելիքների փոխանցում և ձևավորում,
- Յուրացված լեզվական գիտելիքների կիրառման և հաղորդակցման հմտությունների և կարողունակությունների ձևավորում,
- Ուսումնառողների համար օտար լեզվով հաղորդակցվելու համար նպաստավոր միջավայրի ստեղծում,
- Քննական մտածողության, հետազոտականության և հիմնավորված դատողունակության զարգացում,
- Ինքնուրույն ուսումնառության և ինքնազարգացման կարողությունների խթանում,
- Միջմշակութային իրազեկության և բազմազանության նկատմամբ հարգալից վերաբերմունքի խրախուսում,
- Ուսումնառողների նորարարական, ստեղծարար և համագործակցային կարողությունների զարգացում:

Օտար լեզուներ բնագավառի դասընթացները նպատակաուղղված են Հանրակրթության պետական չափորոշով սահմանված հետևյալ կարողունակությունների ձևավորմանը՝

- հայրենասիրություն, ազգային, պետական, հասարակական շահերի և առաջնահերթությունների գիտակցում տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում, քաղաքացիական պարտքի կարևորում.
- մայրենի և օտար լեզուներով արդյունավետ հաղորդակցվելու հմտություններ, լեզվական գրագիտություն՝ որպես ուսումնառության համապիտանի գործիք.
- բնության և հասարակության փոխազդեցությունների ճանաչում, դրանց հետևանքների գնահատում՝ կայուն զարգացման համատեքստում.

- տեղեկատվական հոսքի մեջ կողմնորոշվելու հմտություն և մեղիագրագիտություն.
- սեփական ինքնության, ընտանիքի, համայնքի և պետության արժևորում.
- ազգային և համաշխարհային հոգևոր և նյութական ժառանգության և մշակութային բազմազանության արժևորում և գրագիտություն, գրականության և արվեստի իմացություն, ճաշակ.
- հասարակության կյանքի (մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներ) ճանաչում և անկողմնակալ ընկալում.
- իր և այլոց հանդեպ հարգանքի, ազնվության և պատասխանատվության դրսևորում՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից.
- վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, նորի հանդեպ բաց և անկողմնակալ մոտեցում, կենսական խնդիրների լուծմանը ճանաչողական և ստեղծագործական մոտեցում.
- վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ, ինքնազնահատման կարողություն, ինքնաճանաչման ձգտում.
- ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ.
- առողջ և անվտանգ կենսակերպի դրսևորում.
- ընկերակցելու ունակություն և ձգտում, ընկերության արժևորում, համագործակցային և կոնֆլիկտների խաղաղ կարգավորման հմտություններ, դրականություն՝ մարդկանց և երևույթների հանդեպ.
- մարդու կյանքի, արժանապատվության և իրավունքների արժևորում.
- ժողովրդավարության, սոցիալական արդարության, և օրենքի գերակայության արժևորում.
- ազատության ձգտում և նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:

Օտար լեզուներ բնագավառի դասընթացները դասավանդվում են 2 – 12 դասարաններում՝ ծածկելով հանրակրթության բոլոր երեք աստիճանները:

«Օտար լեզուներ» բնագավառի դասընթացների միջոցով սովորողի վերաբերմունքի, արժեքների, դիրքորոշման ձևավորումն ու զարգացումը, ըստ դպրոցի աստիճանների, ուղղակի հիմնված է Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված և վերոնշյալ կարողունակություններին միտված ակնկալվող վերջնարդյունքների վրա: Մնացած վերջնարդյունքներին «Օտար լեզուներ» բնագավառի դասընթացներն առնչվում են անուղղակիորեն կամ չեն առնչվում:

Տարրական դպրոց

- առնվազն երկու օտար լեզվով հասկանա և օգտագործի ծանոթ և պարզ նախադասություններ՝ բավարարելու կոնկրետ կարիքները, կարողանա ներկայանալ, ներկայացնել իր շրջապատի մարդկանց՝ իր և նրանց՝ մասին հաղորդելով պարզ տեղեկություններ, հաղորդակցվել գրավոր և բանավոր՝ գործածելով պարզագույն կառույցներ.
- մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ,

- դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, ընդհանրացնելու պարզ հմտություններ և կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին,
- հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար,
- ունենա նախնական գիտելիք շրջակա աշխարհի օբյեկտների, երևույթների և դրանց փոխադարձ կապերի մասին և կարողանա նկարագրել դրանք,
- համատեղ կամ ինքնուրույն իրականացնի պարզ ուսումնասիրություններ, կատարի առաջադրանքներ, անի եզրակացություններ և ներկայացնի ստացած արդյունքները,
- ճանաչի իր բնակավայրի և համայնքի բնության և պատմամշակութային ժառանգության նշանակալի օբյեկտները, հոգատար վերաբերմունք ցուցաբերի դրանց հանդեպ,
- իմանա և պահպանի հասարակական վարքի՝ իրեն առնչվող կանոններն ու իրավունքները, հարգի ուրիշ մարդկանց, ընկալի յուրաքանչյուր մարդու առանձնահատուկ, արժեքավոր և հետաքրքիր լինելը,
- գիտակցի սովորելու կարևորությունը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ,
- պատկերացում ունենա տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազանության մասին,
- ստեղծի ընկերական հարաբերություններ, լսի, հասկանա, ապրումակցի, քաջալերի և աջակցի մյուսներին, համագործակցի տարբեր ձևաչափերով, դրսևորի դրականություն, ձգտի կոնֆլիկտների խաղաղ լուծմանը,
- ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, գիտակցի դրանց դերը աշխարհաճանաչողության գործում,
- գիտակցի իր առօրյան կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ժամանակ տրամադրելով հանգստին, խաղին և դասերին,
- գտնի իր սխալները և ձգտի դրանք ուղղել ինքնուրույն կամ աջակցությամբ,
- գիտակցի իր ընտանեկան, ազգային և քաղաքացիական պատկանելիությունը,
- ցուցաբերի այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք,
- զբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ,
- ճանաչի և խուսափի վնասակար սովորություններից, բացատրի դրանց հետևանքները,
- պահպանի սեփական մարմնի խնամքի, հիգիենայի և անվտանգ վարքագծի կանոնները, գիտակցի առողջ և բալանսավորված սնվելու անհրաժեշտությունը,
- ծանոթ լինի տարբեր մասնագիտություններին ու զբաղմունքներին, ըստ մասնագիտության աշխատանքային գործիքներին և գործառույթներին, կարևորի աշխատանքն ու մասնագիտությունները:

Միջին դպրոց

- առնվազն երկու օտար լեզուներով (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում՝ առնվազն մեկ) հասկանա ծանոթ, պարբերաբար հանդիպող թեմաներով բանավոր և գրավոր խոսքի հիմնական իմաստը, լեզվակիր երկրներում կարողանա կողմնորոշվել և շփվել առօրյա կենցաղային հաղորդակցական պարզ իրավիճակներում,
- հետևի հասարակական համակեցության կանոններին և նորմերին, բացատրի դրանց կարևորությունը,
- ցուցաբերի պատասխանատու և հանրօգուտ վարքագիծ,

- ներկայացնի և քննարկի համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները,
- տարբերակի և համեմատի աշխարհաճանաչողության ձևերը և դրանց առանձնահատկությունները,
- գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ,
- ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակը արդյունավետ տնօրինելու կարողություններ,
- բացատրի գիտելիքի կարևորությունը, սովորելիս դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ,
- դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր,
- ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ,
- գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ,
- արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.
- արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքները առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ,
- ճանաչի իր ուժեղ ու թույլ կողմերը և դրսևորի ինքնագարգացմանը միտված վարքագիծ,
- արդյունավետ համագործակցի և հաղորդակցվի տարբեր ձևաչափերով, ակտիվորեն լսի և հարգանքով վերաբերվի այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին,
- բացատրի կոնֆլիկտների ազդեցությունը միջանձնային և միջխմբային հարաբերությունների վրա, կիրառի կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբեր ձևեր ըստ անհրաժեշտության,
- մեկնաբանի և վերլուծի իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկությունները և հակումները,
- դիմակայի ճնշումներին և իմանա՝ ում դիմի աջակցության և խորհրդատվության համար,
- իմանա երեխայի, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, բացատրի, թե ինչ դեր ունի անհատը և պետությունը դրանք հարգելու և պաշտպանելու գործում,
- գիտակցի և հիմնավորի հասարակական բոլոր գործընթացներում հավասար հնարավորությունների ընձեռնման նշանակությունը,
- ցուցաբերի հանդուրժողականություն, ապրումակցում և մարդասիրություն,
- դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ,
- ճանաչի տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրի դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ,
- Կարողանա բացահայտել և զարգացնել իր անհատական առանձնահատկությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները.

- Կարողանա կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա:

Ավագ դպրոց

- Առնվազն երկու օտար լեզվով բավականին սահուն և հանպատրաստից բանավոր շփվի լեզվակիրների հետ իրեն հետաքրքրող թեմաներով, կարդա և հասկանա տարաբնույթ տեքստերի, այդ թվում՝ ընտրած մասնագիտության ոլորտի բառապաշար պարունակող, հիմնական միտքը, տարբեր թեմաների շուրջ կառուցի գրավոր շարադրանք,
- առաջադրի հետազոտական հարցադրումներ և վարկածներ, պլանավորի և իրականացնի հետազոտություններ՝ առաջարկելով համապատասխան մեթոդներ և բարելավման եղանակներ: Վերլուծի ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարի վերացարկումներ և ընդհանրացումներ,
- ճանաչի և պահպանի ակադեմիական ազնվություն տեղեկության աղբյուրներն օգտագործելիս,
- վերլուծի Հայաստանի Հանրապետության արդի հիմնախնդիրները և մարտահրավերները տեղական, տարածաշրջանային և գլոբալ համատեքստում, արձագանքի դրանց որպես իրազեկ, պատասխանատու և հայրենասեր քաղաքացի,
- ցուցաբերի քննական մոտեցում հասարակական համակեցության կանոնների վերաբերյալ՝ դիտարկելով դրանք մարդու իրավունքների և այլ անձանց նկատմամբ հարգանքի տեսանկյունից,
- անկողմնակալ և առանց նախապաշարմունքների վերաբերվի իր և ուրիշների ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծի հասանելի տեղեկությամբ, ճանաչի, կառուցի և գնահատի փաստարկները,
- ուսումնասիրի և ընդլայնի սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնագարգացման վարքագիծ,
- վերլուծի իր ուսումնառության գործընթացը, ընտրի ինքնակրթության մեթոդներ և գնահատի դրանց արդյունավետությունը,
- քննադատաբար վերլուծի տեղեկատվական հոսքը, տարբերակի քարոզչության մանիպուլատիվ գործիքները և նպատակները,
- ստեղծի մեդիա՝ պահպանելով համացանցից օգտվելու անվտանգության և էթիկական կանոնները,
- ուրիշների հետ համագործակցելով և ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր՝ ձեռք բերած տեղեկությունը ներկայացնելով տարբեր միջոցներով,
- նախաձեռնի կամ ակտիվորեն ներգրավվի տարատեսակ հանրօգուտ միջոցառումներում՝ ըստ սեփական հետաքրքրությունների,
- արդյունավետ օգտագործի կոնֆլիկտին միջամտելու և լուծելու տարբեր մեթոդներ, պատրաստական լինի ապրումակցել և աջակցել դժվար իրավիճակում հայտնված ցանկացած մարդու կամ կենդանու,
- կառավարի իր զգացմունքները և ցանկությունները, իր առջև դնի նպատակներ, մշակի դրանց հասնելու ուղիներ և լինի հետևողական,
- կիրառի իր կրթական և աշխատանքային հնարավորությունները ինքնուրույն գործունեություն ծավալելու համար, ուսումնասիրի և գնահատի իր՝ տարբեր

մասնագիտությունների համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարողունակությունները, պատճառաբանված ընտրություն կատարի,

- վերլուծի և գիտակցի տարբեր գործոնների ազդեցությունն իր անձի ձևավորման վրա,
- հարգի ցանկացած մարդու արժանապատվությունը, հիմնարար իրավունքները և ազատությունները,
- կարևորի իր՝ որպես քաղաքացու դերը հասարակության մեջ սոցիալական արդարության և ժողովրդավարական մշակույթի ձևավորման գործում,
- ճանաչի և տարբերակի բռնության դրսևորումները, կարողանա արձագանքել, դիմակայել, խուսափել և պաշտպանվել,
- ունենա ակտիվ դիրքորոշում հասարակական գործընթացներում կանանց և սղամարդկանց հավասար հնարավորությունների ընձեռնման ապահովման համար,
- գիտակցի իր դերը և պատասխանատվությունը ընտանիքում, խմբում և հասարակության մեջ,
- դրսևորի հարգալից և հոգատար վերաբերմունք ազգային և համաշխարհային արվեստի արժեքների նկատմամբ, ցուցաբերի մշակույթի իմացություն և դրա հետ հաղորդակցվելու ձգտում,
- իմանա հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթում և համաշխարհային մշակույթի դերը համամարդկային արժեքների համատեքստում,
- գիտակցի, որ ինքը հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ է և ցուցաբերի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում,
- վարի առողջ և անվտանգ ապրելակերպ,
- ունենա ամբողջական պատկերացում իր նախընտրած մասնագիտության վերաբերյալ.
- ունենա մասնագիտական կողմնորոշում՝ հիմնված աշխատաշուկայի պահանջարկի և ինքնաճանաչման վրա:

Ուսուցման համար հիմք են ընտրվել հետևյալ չորս հասկացությունները՝ *հաղորդակցություն, միջմշակութային իրազեկություն, քննական և ստեղծարար մտածողություն և ինքնություն*, որոնք այնուհետ տրոհվում են ենթահասկացությունների:

Տարրական դպրոցում Օտար լեզուներ բնագավառի համապատասխան դասընթացները նպատակ ունեն սովորողների մոտ զարգացնել Լեզուների իմացության եվրոպական շրջանակի (այսուհետ՝ ԼԻԵՇ) **A1** մակարդակի կարողունակություններ:

Միջին դպրոցում Օտար լեզուներ բնագավառի համապատասխան դասընթացները նպատակ ունեն սովորողների մոտ զարգացնել ԼԻԵՇ-ի **B1** մակարդակի կարողունակություններ: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ 5 – 6 դասարաններում բովանդակությունը կառուցվում է այնպես, որ 6-րդ դասարանի ավարտին սովորողները կունենան **A2** մակարդակի կարողություններ:

Ավագ դպրոցում Օտար լեզուներ բնագավառի համապատասխան դասընթացները նպատակ ունեն սովորողների մոտ զարգացնել ԼԻԵՇ-ի **B2** մակարդակի կարողունակություններ:

Դասընթացների բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները:

Դասընթացների բովանդակությունը կառուցվել է նկատի առնելով վերը նշված կարողունակությունների և ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ թեմաների ընտրությունը:

Դասընթացների բովանդակության կառուցման մյուս սկզբունքը ԼԻԵՇ-ի համապատասխան մակարդակների համար նախասահմանված լեզվական նյութի և կարողությունների բաշխումն է ըստ համապատասխան կրթական աստիճանների, ապա և դասարանների:

Հաշվի առնելով բովանդակային թեմատիկայի և այն ուսումնասիրելու համար անհրաժեշտ լեզվանյութի փոխկապվածությունն ու փոխապայմանավորումը՝ թեմատիկ շրջանակն ընտրվել է ԼԻԵՇ-ի համապատասխան մակարդակի համար նախատեսված թեմատիկայի, Հանրակրթության պետական չափորոշիչներով կոնկրետ կրթական աստիճանի համար սահմանված վերջնարդյունքների և անձի զարգացման ու երեխայի հոգեբանության համապատասխան փուլի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Դասընթացի բովանդակային մշակման հիմքում ընկած են մի շարք առանցքային հիմնադրույթներ, մասնավորապես՝

- Օտար լեզուն առաջնայնորեն հաղորդակցության միջոց է,
- Օտար լեզուն ուսումնառության միջոց է,
- Օտար լեզվով հաղորդակցումը աշխարհճանաչման, ինքնաճանաչման և այլ մշակույթների ճանաչման հիմնական գրավականն է,
- Լեզվական փաստացի գիտելիքի՝ բառապաշարի, քերականական կանոնների կամ օրինաչափությունների տիրապետումը, առանց հաղորդակցական կարողունակությունների, ցանկալի արդյունք չէ, քանի որ լեզվական նյութը ծառայում է հաղորդակցության գերնպատակին,
- Օտար լեզվի դասընթացները տրամադրում են արժեհամակարգային և վերաբերմունքային կրթության և զարգացման անսպառ հնարավորություններ:

Դասընթացների կառուցման հիմքում ընկած է լեզվանյութի այնպիսի մատուցում, որը, պարուրաձև ընդլայնմամբ, ելք է ունենում դեպի հաղորդակցական չորս կարողություն՝ լսողական ընկալում, ընթերցանական ընկալում, բանավոր (մենախոսություն) և գրավոր խոսք, փոխազդեցություն: Դասընթացներում կարևորվում է այս չորս կարողությունների հավասարաչափ և զուգահեռ զարգացումը: Այսպիսով՝ **այս դասընթացներում հաղորդակցական կարողությունների զարգացումը գերակա է լեզվական նյութի յուրացման և տիրապետման նկատմամբ:**

Դասընթացների բովանդակային կառույցում կարևոր հիմնապուն է միջմշակութային իրազեկության բարձրացումը՝ առաջին հերթին ուսումնասիրվող լեզուների երկրների և մշակույթների, ապա ուսումնասիրվող լեզուների միջոցով այլ երկրների և մշակույթների,

իսկ հաջորդիվ նաև սեփական երկրի և մշակույթի ճանաչման, իմաստավորման և արժևորման միջոցով:

Դասընթացների բովանդակային կառույցը հնարավորություն է տալիս սովորողներին հանդես գալ որպես **սոցիալական ակտիվ դերակատար** (քննական և ստեղծարար մտածողություն, ինքնություն)՝ օտար լեզուների ուսուցման ընթացքն ու ուսումնառության արդյունքը գործածելով այլ փոխանցելի կարողությունների՝ համագործակցայնության, քննականության, ստեղծագործականության զարգացմանը և հանդես գալով որպես սեփական համայնքի/երկրի և համաշխարհային հանրության մի մասնիկ:

Դասընթացների բովանդակային կառույցը ենթադրում է միջառարկայական կապեր հիմնականում հասարակագիտական կառուցամասի առարկաների հետ, թեև չեն բացառվում նաև կապերը բնագիտական առարկաների հետ՝ CLIL մեթոդաբանության շրջանակներում:

Ծրագրային նյութն ընտրված է այնպես, որ նպաստի սովորողների հետաքրքրությունների խթանմանը, ձևավորի այս կամ այն երևույթի վերաբերյալ սեփական կարծիքն արտահայտելու և հիմնավորելու մշակույթ: Բացի այդ, դասընթացների բովանդակությունը միտված է օգնել սովորողներին կարևորել հանդուրժողականությունը, հարգանքը, մեղիագրագիտությունը, կոնֆլիկտների խաղաղ լուծումը, մարդու իրավունքը, հավասար հնարավորությունները և այլն:

Դասընթացը նախատեսում է լեզվի հաղորդակցական ուսուցում՝ հնարավորինս զերծ մնալով լեզվի դասավանդման քերականական և թարգմանության մեթոդներից: Դասընթացը նախատեսում է անդրադարձ լեզվին բնորոշ արտասանական և առոգանական առանձնահատկություններին աութենտիկ խոսքին հաղորդակից դառնալու միջոցով:

Լեզվի հաղորդակցական ուսուցման մոտեցմամբ՝ լեզվանյութը դրվում և մատուցվում է համապատասխան, ցանկալի է աութենտիկ, երբեմն և՛ ուսումնական հաղորդակցական համատեքստի մեջ: Այս առումով ակնկալվում է, որ A1 և A2 մակարդակներում չեն շեշտադրվի քերականական երևույթների տեսական կողմը, հաղորդակցական համատեքստից զերծ դրանց կիրառումները: Փոխարենը, ակնկալվում է, որ բառապաշարային միավորները և քերականական կառույցները/կաղապարները կներդրվեն որպես հաղորդակցության միջոց, ոչ թե լեզվահամակարգի տարր: B1 մակարդակում և այնուհետ՝ բառապաշարը, իմաստաբանական և քերականական երևույթները դիտարկվում են որպես առաջնայնորեն հաղորդակցական միջոցներ, որոնք նաև լեզվահամակարգի մի մասն են, փոխազդում են այդ համակարգի այլ տարրերի հետ և փոխկախյալ են դրանցից:

Դասընթացները նախատեսում են լեզվանյութի յուրացում ուսումնական տարբեր նյութերի՝ հիմնականում աութենտիկ նյութերի միջոցով: Այստեղ հատկապես կարևորվում են տեսանյութերն ու ձայնագրությունները, ինչպես նաև լեզվակիրների կողմից գրված կամ

նրանց հասցեագրված նամակները, բացիկները, լեզվակիր/բնախոս հանրույթում լայնորեն կիրառվող նշանները, պաստառները, քարտեզները, տեքստերը և այլն:

Հաղորդակցության բոլոր կարողությունների զարգացումը դասընթացներում ենթադրում է նաև անհատական և խմբային, հետազոտական և նախագծային աշխատանքներներ, ցուցադրություններ, դերախաղեր, լեզվական բովանդակությունն ու հաղորդակցական կարողություններն արտացոլող արդյունքների ստեղծում (պաստառ, բացիկ, զեկույց, ներկայացում), որոնք նաև կարձագանքեն դասընթացների վերաբերմունքային և արժեհամակարգային բաղադրիչին:

7-րդ դասարանից հետո (B1 մակարդակ) դասընթացում կարևորվում է նաև սովորողների կողմից ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը՝ ինչպես նոր տեղեկությունների և բովանդակության հայթայթման, այնպես և նոր մեդիա բովանդակության (բլոգ, փոդքասթ և այլն) ստեղծման միջոց:

Դասընթացներում հաղորդակցական կարողությունների կարևորումը ենթադրում է, որ հատկապես ամփոփիչ գնահատման բոլոր գործողությունները խարսխված կլինեն ոչ թե լեզվանյութի իմացության, այլ հենց հաղորդակցական չորս կարողունակությունների ստուգման վրա:

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Հաղորդակցություն

| Դպրոցներ | Ունկնդրում/Ընկալում | Ընթերցանություն | Մենախոսություն | Գրավոր Խոսք | Փոխներգործություն | Լեզվանյութի կիրառում |
|-----------------|---|--|---|--|--|---|
| Տարրական | <p>1. Լսել և հասկանալ շատ պարզ հրահանգները և իրեն ծանոթ թեմաներով խոսքի ընդհանուր բովանդակությունը:</p> | <p>1. Ընկալել շատ պարզ և ծանոթ տեքստի փաստերը և հիմնական բովանդակությունը:</p> | <p>1. Համառոտ վերարտադրել պարզ, տարբեր ուղիներով ստացված (ռադիո, հեռուստատեսություն, համացանց) գրավոր կամ բանավոր խոսքի/տեքստի բովանդակությունը:</p> <p>2. Համառոտ նկարագրել իրեն, իր շրջապատը, իր առօրյան:</p> | <p>1. Շարադրել կարճ տեքստ իր շրջապատի, առօրյայի, նախասիրությունների մասին:</p> <p>2. Լրացնել պարզ տեղեկություններ պահանջող ձևաթուղթ:</p> | <p>1. Սկսել երկխոսություն իրեն ծանոթ թեմայով՝ արձագանքելով իրեն ուղղված հարցերին:</p> <p>2. Արտահայտել համաձայնություն կամ անհամաձայնություն՝ տալով պարզ պատասխաններ կամ խնդրելով հստակեցումներ:</p> <p>3. Խոսակցին տալ պարզ հարցեր իրեն ծանոթ թեմաների շուրջ:</p> | <p>1. Կիրառել տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցակա ն իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք (բառապաշար, քերականություն, ուղղգրություն, արտասանություն):</p> |

| | | | | | | |
|---------------------|--|--|--|--|--|--|
| <p>Միջին</p> | <p>1. Լսել և հասկանալ տարբեր թեմաներով զեկույցների, էլույթների, հեռուստամեդիա բովանդակության և իր շուրջը ծավալվող քննարկման հիմնական կետերը, երբ խոսքը բավականին դանդաղ է և հստակ:</p> | <p>1. Կարդալ և հասկանալ ծանոթ թեմաներով անծանոթ տեղեկատվական տեքստերի ընդհանուր բովանդակությունը, գլխավոր փաստերը, դեպքերի տրամաբանական զարգացումը, փաստարկները, եզրահանգումները, հեղինակի տեսակետը:</p> | <p>1. Նկարագրել իրական կամ երևակայական իրադարձություն հիմնավորելով և բացատրելով իր մոտեցումները և կանխատեսելով հնարավոր զարգացումները:</p> <p>2. Ներկայացնել նախապես պատրաստված պարզ էլույթ արձագանքելով դրան հաջորդող հարցերին:</p> | <p>1. Վարել մասամբ պաշտոնական նամակագրություն թղթային և էլեկտրոնային ձևաչափերում:</p> <p>2. Կազմել կարճ տեղեկատվական, նկարագրական, վերլուծական տեքստեր իր փորձի, առօրյա կամ հանրային իրադարձություններ ի մասին՝ ներառելով փաստացի տեղեկություններ, փաստարկներ, կարծիքի հիմնավորումներ:</p> | <p>1. Հաղորդակցվել բազմապիսի, այդ թվում վերացական, գիտահանրամատչելի, հասարակությանը և մշակույթին վերաբերող թեմաներով՝ քննարկելով գոյություն ունեցող խնդիրը և առաջարկելով լուծման տարբերակներ:</p> <p>2. Վարել նամակագրություն թղթային կամ էլեկտրոնային ձևաչափում, արտահայտելով իր մտքերն ու վերաբերմունքը տարբեր հասարակական և մշակութային թեմաների շուրջ:</p> | <p>1. Կիրառել տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք (բառապաշար, քերականություն, ուղղգրություն, արտասանություն):</p> |
| <p>Ավագ</p> | <p>1. Հասկանալ մեծամասամբ անծանոթ և լեզվակիրների (աութենտիկ) տարբեր ժանրերի խոսքի հիմնական միտքը,</p> | <p>1. Հասկանալ պաշտոնական և մասնագիտական թեմաներով տարբեր ժանրերին պատկանող տեքստեր՝ ճանաչելով հեղինակի տեսակետը, անելով համապատասխան</p> | <p>1. Հանդես գալ տարբեր, այդ թվում՝ մասնագիտական թեմաներով էլույթ-մենախոսություններով, հանպատրաստից պատասխանելով</p> | <p>1. Շարադրել իր հետաքրքրություններ ի շրջանակին վերաբերող և հանրային նշանակության զանազան թեմաներով համակարգված և</p> | <p>1. Հաղորդակցության տարբեր մասնակիցների դերում հանդես գալիս ընտրել տվյալ (ընտանեկան, աշխատանքային և հանրային միջավայրին համապատասխան լեզվական միջոցները՝</p> | <p>1. Կիրառել տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք</p> |

| | | | | | | |
|--|---|--|--|--|--|--|
| | <p>2. Լսել և հասկանալ կենդանի հնչող և հեռարձակվող ծանոթ և անծանոթ թեմաներով զրույցը, դասախոսությունը կամ հասարակական, մասնագիտական և գիտական ոլորտներին առընչվող մեդիա հաղորդումների բովանդակությունը, խոսողի տեսակետը և վերաբերմունքը:</p> | <p>դատողություններ և եզրահանգումներ:</p> | <p>մասնագիտական թեմաներով տրված հարցերի:</p> | <p>զրագետ փաստարկային տեքստ՝ համադրելով և գնահատելով տարբեր աղբյուրներից քաղած տեղեկություններն ու փաստարկները</p> | <p>ձգտելով արդյունավետ հաղորդակցության:</p> <p>2. Հանդես գալ որպես բանավեճի կողմ՝ քննադատելով կոնկրետ դեպքի, իրադարձության, երևույթի մասին այլ տեսակետները և հիմնավորելով սեփականը:</p> <p>3. Գործածել օտար լեզուն՝ բանակցային միջոցներով կոնֆլիկտների հարթման և համագործակցային մթնոլորտի ձևավորման համար:</p> <p>4. Բանակցել հավասարակիցների հետ՝ հարթելու աշխատանքի ընթացքում ի հայտ եկած խնդիրները և ստեղծելու համագործակցության նոր հնարավորություններ:</p> <p>5. Դեմ առ դեմ, ինչպես նաև հեռախոսով բանակցել, պայմանավորվածություններ ձևափոխել և</p> | <p>(բառապաշար, քերականություն, ուղղգրություն, արտասանություն):</p> |
|--|---|--|--|--|--|--|

| | | | | | | |
|--|--|--|--|--|---|--|
| | | | | | <p>կարգավորել խնդիրներ տարբեր հաստատությունների հետ:</p> <p>6. Քննարկել համամարդկային արժեքների կարևորությունը նաև հակամարտությունների լուծման գործում:</p> | |
|--|--|--|--|--|---|--|

| Մշակույթ | | | | |
|-----------------|--|--|---|---|
| Դպրոցներ | Արժեքներ | Վերաբերմունք | Նորմեր/Կանոններ | Հետաքրքրություններ/Նախասիրություններ |
| Տարրական | Ճանաչել ազգային և ուսուցանվող լեզվի մշակույթների մի շարք տարրեր, դրանց դրսևորումներն առօրյա կյանքում և դրսևորել հանդուրժողականություն: | Ցուցաբերել հարգալից, հոգատար և պատասխանատու վերաբերմունք այլ ազգությունների, նրանց մշակույթների, իր շրջապատի մարդկանց, առարկաների և շրջակա միջավայրի նկատմամբ: | <p>1. Իմանալ տանը, դպրոցում և այլ հասարակական վայրերում վարքի տարրական կանոնները</p> <p>2. Ճանաչել առողջ ապրելակերպի սկզբունքները և հետևել դրանց:</p> | 1. Ճանաչել սեփական և այլոց նախասիրություններն ու հետաքրքրությունները: |

| | | | | |
|---------------------|---|--|--|---|
| <p>Միջին</p> | <p>1. Ճանաչել ազգային և համաշխարհային մշակութային բազմազանությունը, ժառանգությունը և արժեքները:</p> <p>2. Գիտակցել բազմալեզու կրթության դերը՝ որպես գլոբալ աշխատաշուկայում հաջողության գրավական:</p> <p>3. Կարևորել համակեցության նախապայման հանդիսացող արժեքները (ընկերասիրություն, հանդուրժողականություն, հարգանք, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն, ժողովրդավարություն և այլն):</p> | <p>1. Դրսևորել պատասխանատու և հոգատար վերաբերմունք մշակութային ժառանգության հանդեպ:</p> <p>2. Դրսևորել պատասխանատու քաղաքացիական վերաբերմունք՝ ճանաչելով իր իրավունքներն ու պարտականությունները որպես հասարակության անդամ:</p> | <p>1. Ճանաչել համակեցության կանոնները և օրենքները և հետևել դրանց:</p> <p>2. Ճանաչել անվտանգության կանոնները ըստ միջավայրի և գործել դրանց համապատասխան:</p> | <p>1. Ցուցաբերել հետաքրքրություն ազգային և համաշխարհային մշակույթների հանդեպ:</p> |
| <p>Ավագ</p> | <p>1. Արժևորել համաշխարհային մշակույթի և միջմշակութային հաղորդակցության դերը մարդու և քաղաքակրթության զարգացման գործում:</p> | <p>1. Դրսևորել համաշխարհային մշակութային արժեքների հետ հաղորդակցվելու ձգտում,</p> <p>2. Դրսևորել գիտակցական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ՝ որպես սոցիալական</p> | <p>1. Ճանաչել հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում, այդ թվում՝ լեզվական հաղորդակցության ոլորտում գործող տարբեր նորմերը և հետևել դրանց ըստ նշանակության:</p> | <p>1. Ցուցաբերել հետաքրքրություն համաշխարհային մշակույթի, գիտության, քաղաքակրթության, մասնագիտությունների հանդեպ:</p> |

| | | | | |
|--|--|---|--|--|
| | | <p>պատասխանատվություն և անհատի ինքնաճանաչման դրսևորում: 3. Կարևորել գիտությունը որպես աշխարհաճանաչողության ձև և գիտության զարգացումը որպես հասարակական առաջընթացի նախապայման:</p> | | |
|--|--|---|--|--|

Քննական և ստեղծարար միտք

| Դպրոցներ | Միտք | Տրամաբանական կապեր | Վերլուծություն | Առաջընթաց |
|-----------------|---|---|---|---|
| Տարրական | 1. Ձևակերպել կապակցված միտք արտահայտող պարզ խոսք: 2. Բերել պարզ հիմնավորումներ: 3. Ընտրել, ստեղծել և կիրառել մտքերն արդյունավետ կերպով ներկայացնող տեսողական միջոցներ: | 1. Շարադրել մտքերը տրամաբանական հաջորդականությամբ և փոխկապակցվածությամբ: 2. Հասկանալ պարզ խնդիրը՝ առաջարկելով դրա լուծման պարզ քայլաշար: | 1. Դասակարգել շրջապատի իրերն ու երևույթները՝ ըստ դրանց հատկանիշների: 2. Համեմատալ իրերն ու երևույթները՝ ճանաչելով հատկանիշների նմանություններն ու տարբերությունները: | 1. Հասկանալ դրված խնդիրը և լուծել այն ըստ հրահանգների: 2. Բերել լուծումների համար պարզ հիմնավորումներ: |
| Միջին | 1. Առաջարկել նորարական գաղափարներ և լուծումներ՝ հիմնվելով նախնական գիտելիքի վրա: 2. Դրսևորել ստեղծագործ մոտեցում իր տեսակետներն ու գաղափարներն արդյունավետ հաղորդակցելու և հիմնավորելու համար: | 1. Կառուցել մտքերը տրամաբանական կուռ կառուցվածքով: 2. Բացատրել տարբեր իրավիճակների շուրջ, այդ թվում նաև սեփական որոշումների հիմքերը: | 1. Համեմատել և համադրել տարբեր աղբյուրներից քաղված փաստերն ու տեղեկությունները: 2. Վերլուծել խնդիրների հիմնական պատճառները և դրանց հավանական հետևանքները: 3. Մեկնաբանել սեփական որոշումները՝ հղվելով նախապայմաններին: | 1. Գնահատել իր՝ որպես սովորողի առաջընթացը՝ համեմատելով իր գիտելիքը և կարողությունները տարբեր փուլերում: 2. Կարևորել նախկին ձեռքբերումների և սեփական սխալների հիման վրա սովորելը: |
| Ավագ | 1. Արտահայտել իր տեսակետը՝ հիմնավորելով այն նախապես հավաքված փաստերով, բերելով օրինակներ սեփական կամ այլոց փորձից: | 1. Վեր հանել ուսումնասիրվող տեքստերում տրամաբանական կապերը՝ ճանաչելով հեղինակի մտադրությունը, | 1. Պլանավորել և իրականացնել հետազոտություններ, վերլուծել հասանելի տեղեկույթը՝ ընդգծելով առավելություններն ու | 1. Գիտակցել սեփական ուժերի ճիշտ գնահատման կարևորությունը ապագայում կանխատեսվող քայլերի |

| | | | | |
|--|---|--|---|--|
| | <p>2. Ձևակերպել նորարարական լուծումներ գոյություն ունեցող խնդիրների հաղթահարման համար,</p> <p>3. Ներկայացնել իր հղացած մտքերը, գաղափարները և լուծումները տարբեր ձևաչափերով:</p> | <p>2. Հիմնավորել իր մոտեցումներն ու ընտրությունը տարբեր աղբյուրներից քաղված տեղեկություններով, դրանց հիման վրա արված դատողություններով և եզրահանգումներով՝ կանխատեսելով իր առաջարկած գործողությունների հետևանքներն ու ազդեցությունը,</p> <p>3. Դասեր քաղել սխալներից և ձախողումներից՝ հիմնավորելով մոտեցումների փոփոխությունը:</p> | <p>թերությունները, կատարել եզրահանգումներ:</p> <p>2. Վերլուծել տարածաշրջանային և գլոբալ արդի հիմնախնդիրները՝ արձագանքելով դրանց որպես իրազեկ, պատասխանատու և հայրենասեր քաղաքացի:</p> <p>3. Քննադատաբար վերլուծել մեդիան, տարբերակելով քարոզչության մանիպուլատիվ գործիքները և նպատակները:</p> | <p>համար:</p> <p>2. Վերլուծել ապագայի իր ծրագրերը, դրանց իրականացմանն ուղղված ձեռնարկվելիք քայլերը՝ գնահատելով իր ուժերն ու հնարավորությունները:</p> |
|--|---|--|---|--|

Ինքնություն

| Դպրոցներ | Անհատականություն | Ընտանիք | Համայնք | Հասարակություն |
|-----------------|--|---|--|---|
| Տարրական | <p>1. Հանդես գալ որպես ինքնակազմակերպված անհատ:</p> <p>2. Ճանաչել իր անհատական զարգացման գործում նոր հետաքրքրությունների և շփումների կարևորությունը:</p> | <p>1. Դրսևորել հարգալից և հոգատար վերաբերմունք ընտանիքի անդամների նկատմամբ՝ օգնելով նրանց տնային գործերում:</p> <p>2. Խոսել քաղաքավարի ընտանիքի իր մեծ և տարեկից անդամների հետ:</p> | <p>Ճանաչել իր՝ համայնքի անդամ լինելու փաստը և համայնքի՝ իրեն առնչվող առօրյա խնդիրները:</p> | |
| Միջին | <p>1. Դրսևորել ինքնակառավարման ունակություններ ուսումնառության մեջ և միջանձնային շփումներում:</p> <p>2. Կայացնել ինքնուրույն որոշումներ՝ ճանաչելով սեփական հնարավորությունների սահմանները:</p> | <p>1. Կարևորել ընտանիքի, ընտանիքի անդամների և սեփական դերակատարությունը ընտանեկան բարօրության համար:</p> <p>2. Արժևորել հոգատար և հարգալից վերաբերմունքը ընտանիքի անդամների նկատմամբ:</p> | <p>1. Ճանաչել իր իրավունքներն ու պարտականությունները՝ համայնքում համակեցության կանոնների պահպանման համատեքստում:</p> <p>2. Ձեռնարկել գործուն քայլեր՝ իր համայնքի զարգացմանն աջակցելու ուղղությամբ:</p> | <p>1. Արժևորել հասարակության մշակութային և լեզվական բազմազանությունը:</p> <p>2. Դրսևորել քաղաքացիական գիտակցություն՝ որպես ժողովրդավարական հասարակության անդամ:</p> |
| Ավագ | <p>1. Ինքնուրույն պլանավորել և կատարել տարաբնույթ առաջադրանքներ:</p> <p>2. Համագործակցել թիմակիցների հետ՝ գիտակցելով</p> | <p>Գիտակցել ընտանիքի դերը անձի զարգացման և հասարակության առաջընթացի համար:</p> | <p>1. Վերլուծել համայնքի արդի հիմնախնդիրները՝ արձագանքելով դրանց որպես իրազեկ, պատասխանատու և համայնքի զարգացմամբ շահագրգիռ քաղաքացի:</p> | <p>1. Ճանաչել հասարակության տարբեր խմբերի կամ անհատների միջև կոնֆլիկտների լուծման հնարավոր եղանակները:</p> <p>2. Դրսևորել բարձր</p> |

| | | | | |
|--|---|--|--|---|
| | <p>համագործակցության առավելությունը:</p> <p>3. Կայացնել ապագա մասնագիտության ինքնուրույն, հիմնավորված ընտրություն:</p> <p>4. Ընդլայնել սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնագարգացման վարքագիծ:</p> | | <p>2. Գործուն մասնակցություն ունենալ իր համայնքի զարգացման գործում՝ գիտակցելով իր դերն ու պատասխանատվությունը:</p> | <p>քաղաքացիական գիտակցություն՝ որպես հասարակական և քաղաքական կյանքի լիարժեք մասնակից:</p> |
|--|---|--|--|---|

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Օտար լեզուներ բնագավառի առարկայական
ծրագրերով առաջարկվող տարեկան
վերջնարդյունքները

Հաղորդակցություն

| Դասարաններ | Ունկնդրում/ընկալում | Ընթերցանություն | Մենախոսություն | Գրավոր խոսք | Փոխներգործություն (գրավոր և բանավոր) |
|------------|--|--|---|--|--|
| II | <p>ՕԼ2 –Հ-ՈԻ.1 Հասկանալ դասարանական շատ պարզ և կարճ հրահանգները:</p> <p>ՕԼ2 –Հ-ՈԻ.2 Հասկանալ իրեն ծանոթ թեմաներով հնչող շատ պարզ և կարճ խոսքը (ուսուցողական ձայնագրություն՝ քառյակ, մենախոսություն, երկխոսություն, երգ):</p> | <p>ՕԼ2-Հ-Ը.1 Կարդալ և հասկանալ ծանոթ թեմաներով շատ պարզ բառերից ու նախադասություններից կազմված, իր, իր ընտանիքի և իր նախասիրություններ ի մասին կարճ տեքստեր:</p> | <p>ՕԼ2-Հ-Մ.1 Շատ պարզ բառերով և շատ կարճ նախադասություններով ներկայանալ ու ներկայացնել իր դասընկերներին և ընտանիքի անդամներին:</p> <p>ՕԼ2-Հ-Մ.2 Շատ պարզ բառերով թվարկել իր նախասիրությունները:</p> | <p>ՕԼ2-Հ-Գ.1 Գրել շատ պարզ բառեր և արտահայտություններ:</p> | <p>ՕԼ2-Հ-Փ.1 Ողջույն և հրաժեշտ տալ:</p> <p>ՕԼ2-Հ-Փ.2 Զրուցակցին տալ շատ պարզ հարցեր (անուն, ազգանուն, տարիք և այլն):</p> <p>ՕԼ2-Հ-Փ.3 Շատ պարզ բառերով և արտահայտություններով պատասխանել իրեն վերաբերող հարցերին:</p> <p>ՕԼ2-Հ-Փ.4 Շնորհակալություն հայտնել:</p> <p>ՕԼ2-Հ-Փ.5 Ներողություն խնդրել:</p> |
| III | <p>ՕԼ3 –Հ-ՈԻ.1 Հասկանալ առօրյա շատ պարզ և կարճ</p> | <p>ՕԼ3-Հ-Ը.1 Կարդալ և հասկանալ դասին</p> | <p>ՕԼ3-Հ-Մ.1 Շատ պարզ բառերով և կարճ</p> | <p>ՕԼ3-Հ-Գ.1 Գրել շատ պարզ արտահայտություններ</p> | <p>ՕԼ3-Հ-Փ.1 Արձագանքել իրեն ուղղված շատ պարզ,</p> |

| | | | | | |
|----|---|---|--|--|--|
| | <p>հրահանգները:</p> <p>ՕԼ3 –Հ-ՈԻ-2 Հասկանալ իրեն ծանոթ թեմաներով հնչող պարզ և կարճ խոսքը (ուսուցողական տեսահոլովակ, մենախոսություն, երկխոսություն):</p> | <p>վերաբերող շատ պարզ և կարճ հրահանգները:</p> <p>ՕԼ3-Հ-Ը.2 Կարդալ և հասկանալ ծանոթ թեմաներով շատ պարզ և տեքստեր՝ իր շրջապատի, առօրյայի, կենդանիների, սննդի մասին:</p> | <p>նախադասություններով տեղեկություններ հաղորդել իր, իր բնականության վայրել, ընտանիքի անդամների և դպրոցի մասին</p> <p>ՕԼ3-Հ-Ս.2 Շատ պարզ բառերով և կարճ նախադասություններով նկարագրել իր դպրոցը, տունը, սենյակը:</p> <p>ՕԼ3-Հ-Ս.3 Շատ պարզ բառերով և կարճ նախադասություններով վերարտադրել ծանոթ թեմաներով տեքստերի հիմնական բովանդակությունը:</p> | <p>եր և նախադասությունները:</p> <p>ՕԼ3-Հ-Գ.2 Կազմել գրավոր տեքստ (40 բառի սահմաններում) իր, իր ընկերների, ընտանիքի անդամների և դպրոցի մասին:</p> | <p>հստակ, դանդաղ արտաբերված հրահանգներին և ցուցումներին</p> <p>ՕԼ3-Հ-Փ.2 Տալ պարզ հարցեր իր, իր բնականության վայրի, ընտանիքի անդամների և դպրոցի մասին:</p> <p>ՕԼ3-Հ-Փ.3 Պատասխանել ծանոթ թեմաներով իրեն ուղղված պարզ հարցերին՝ գործածելով շատ պարզ բառեր ու նախադասություններ:</p> <p>ՕԼ3-Հ-Փ.4 Պատասխանել իր և իր շրջապատի մասին զրուցակցի տված հարցերին՝ գործածելով շատ պարզ բառեր ու նախադասություններ:</p> |
| IV | <p>ՕԼ4 –Հ-ՈԻ.1 Հասկանա առօրյա, այդ թվում՝ դպրոցական պարզ, բազմաբայլ հրահանգները:</p> | <p>ՕԼ4-Հ-Ը.1 Կարդալ և հասկանա պարզ հրահանգներ, հաղորդագրություններ,</p> | <p>ՕԼ4-Հ-Ս.1 Պարզ բառերով և կարճ նախադասություններով նկարագրել իրեն և իր շրջապատը:</p> | <p>ՕԼ4-Հ-Գ.1 Գրել կարճ և համառոտ բացիկներ, նամակներ,</p> | <p>ՕԼ4-Հ-Փ.1 Իրեն ծանոթ և որոշ չափով անծանոթ թեմաների շուրջ սկսել պարզ երկխոսություն:</p> |

| | | | | | |
|--|--|--|--|--|--|
| | <p>ՕԼ4 –Հ-ՈԻ.2 Հասկանա իրեն ծանոթ թեմաներով հնչող մենախոսության / երկխոսության (ձայնագրություն, տեսահոլովակ) ընդհանուր բովանդակությունը:</p> | <p>հայտարարություններ, բացիկներ, պաստառներ:</p> <p>ՕԼ4-Հ-Ը.2 Կարդալ և հասկանալ ծանոթ թեմայով պարզ տեքստերում ներկայացված փաստերը, հիմնական բովանդակությունը:</p> | <p>ՕԼ4-Հ-Մ.2 Պարզ բառերով և կարճ նախադասություններով ներկայացնել իր առօրյան:</p> <p>ՕԼ4-Հ-Մ.3 Պարզ բառերով և կարճ նախադասություններով վերարտադրել ծանոթ թեմաներով տեքստերի հիմնական բովանդակությունը (սպորտ, առողջ ապրելակերպ, տարվա և օրվա եղանակ, արձակուրդ և այլն):</p> | <p>հաղորդագրություններ:</p> <p>ՕԼ4-Հ-Գ.2 Կազմել գրավոր տեքստ (60 բառի սահմաններում) իր, իր շրջապատի, առօրյայի, նախասիրությունների մասին:</p> <p>ՕԼ4-Հ-Գ.3 Լրացնել պարզ տեղեկություններ պահանջող ձևաթուղթ:</p> <p>ՕԼ4-Հ-Գ.4 Գրավոր նկարագրել եղանակը:</p> <p>ՕԼ4-Հ-Գ.5 Գրավոր նշել ամսաթիվը, կոնկրետ ժամը, վայրը:</p> | <p>ՕԼ4-Հ-Փ.2 Պարզ բառերով և կառույցներով արտահայտել իր համաձայնությունը և անհամաձայնությունը:</p> <p>ՕԼ4-Հ-Փ.3 Խնդրել և հայտնել տեղեկություններ առարկաների թվի, քանակի, արժեքի և այլնի մասին:</p> <p>ՕԼ4-Հ-Փ.4 Պարզ հարցեր տա խոսակցին, նրա նախասիրությունների, շրջապատի, առօրյայի, եղանակի, արձակուրդի և այլնի մասին ու պատասխանի դրանց,</p> <p>ՕԼ4-Հ-Փ.5 Արձագանքի իրեն ուղղված դանդաղ, շատ պարզ, հստակ արտաբերված</p> |
|--|--|--|--|--|--|

| | | | | | հրահանգներին և ցուցումներին: |
|---|---|---|--|---|--|
| V | <p>OL5 –Հ-ՈԻ.1 Հասկանալ գրուցակցի խոսքը իրեն ծանոթ թեմայի շրջանակում (օրինակ՝ տեղեկություններ նախասիրությունների, աշխատանքի, առևտրի, մոտակա միջավայրի մասին),</p> <p>OL5 –Հ-ՈԻ.2 Հասկանալ դանդաղ ընթացող պարզ քննարկման հիմնական բովանդակությունը՝ ճանաչելով գործողության վայրը, ժամանակը, անունները և այլն,</p> <p>OL5 –Հ-ՈԻ.3 Հասկանալ գրուցակցի իրեն ծանոթ թեմաների ու բառապաշարի շրջանակում տված հրահանգները, այդ թվում բժշկի պարզ խորհուրդները, ուղևորության</p> | <p>OL5-Հ-Ը.1 Հասկանալ ծանոթ թեմաների շրջանակում կազմված, հաճախ գործածվող բառապաշար ունեցող տեքստերը, առանձնացնել հիմնական գաղափարը,</p> <p>OL5-Հ-Ը.2 Հասկանալ տեղեկատվական բնույթի պարզ տեքստերը, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, օրինակ՝ ժամանակացույց, բնակավայրի մասին տեղեկատուներ, ուղղություն ցույց տվող ցուցանակներ, նախազգուշացնող հրահանգներ, սննդակարգ:</p> | <p>OL5-Հ-Մ.1 Նկարագրել մարդկանց, ընտանիքը, կենցաղային պայմանները, ուսումնառության ընթացքը՝ գործածելով կարճ և պարզ կառույցներ,</p> <p>OL5-Հ-Մ.2 Հանդես գալ առօրյա իրադարձությունների, առաջիկա պլանների, բնակավայրի մասին նախապես պատրաստված կարճ խոսքով,</p> <p>OL5-Հ-Մ.3 Պարզ արտահայտությունների և կառույցների միջոցով նկարագրել առարկաներ, նկարներ,</p> <p>OL5-Հ-Մ.4 Հակիրճ ներկայացնել սեփական և ուսումնասիրվող լեզվի</p> | <p>OL5-Հ-Գ.1 Թղթային ձևաչափերում վարել պարզ անձնական նամակագրություն, այդ թվում՝ ներկայացնել մարդկանց, շնորհակալություն հայտնել, ներողություն խնդրել, հրավիրել, պատասխանել հրավերին,</p> <p>OL5-Հ-Գ.2 Կազմել կարճ, պարզ գրավոր տեղեկություն (մինչև 70 բառ)՝ նկարագրելով դեպքերի ընթացքը (ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ) և գործածելով համապատասխան բառապաշար,</p> | <p>OL5-Հ-Փ.1 Պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն ծանոթ թեմաների շուրջ (նախասիրություններ, աշխատանք, մասնագիտություն, ուղևորություններ, ընտանի և վայրի կենդանիներ) գրուցակցի օգնությամբ, անգամ եթե լիարժեք չի հասկանում գրուցակցին:</p> <p>OL5-Հ-Փ.2 Օգտագործել ողջույնի, հրաժեշտի և առօրյայում գործածվող պարզ, քաղաքավարի արտահայտություններ,</p> <p>OL5-Հ-Փ.3 Առաջարկություններ անել, հրավիրել, պատասխանել</p> |

| | | | | | |
|-----------|--|--|--|---|---|
| | <p>Ժամանակ հնչող պարզ հայտարարություններն ու ցուցումները,</p> <p>ՕԼ5 –Հ-ՈԻ.4 Հասկանալ ծանոթ թեմաներով պարզ, ուսումնական հեռուստահաղորդումների հիմնական բովանդակությունը,</p> | <p>ՕԼ5-Հ-Ը.3 Հասկանալ առօրյան և աշխատանքը նկարագրող պարզ և կարճ անձնական նամակների բովանդակությունը,</p> | <p>մշակույթների որոշ առանձնահատկություններ,</p> <p>ՕԼ5-Հ-Մ.5 Բացատրել, թե ինչն է իրեն դուր գալիս, ինչը՝ ոչ:</p> <p>ՕԼ5-Հ-Մ.6 Տալ տարածության մեջ կողմնորոշվելու համար ուղղորդող ցուցումներ (զնացեք ուղիղ, թեքվեք աջ...),</p> | <p>ՕԼ5-Հ-Գ.3 Պարզ ձևակերպումներով արտահայտել սեփական կարիքները, նախընտրությունները:</p> | <p>հրավերին,</p> <p>ՕԼ5-Հ-Փ.4 Պարզ խոսքային կառույցներով արտահայտել սեփական զգացողություններն ու նախասիրությունները,</p> <p>ՕԼ5-Հ-Փ.5 Պարզ արտահայտություններով պլանավորել առօրյա գործողությունները, անելիքները, հանդիպումը,</p> <p>ՕԼ5-Հ-Փ.6 Ծանոթ թեմաների շրջանակում պատասխանել իրեն ուղղված պարզ, կրկնվող հարցերին, հիմնավորել սեփական կարծիքը:</p> |
| <p>VI</p> | <p>ՕԼ6 –Հ-ՈԻ.1 Հասկանալ զրուցակցի խոսքը իրեն ծանոթ</p> | <p>ՕԼ6-Հ-Ը.1 Հասկանալ ծանոթ թեմաների մասին</p> | <p>ՕԼ6-Հ-Մ.1 Նկարագրել հայրենիքը, շրջապատում ապրող</p> | <p>ՕԼ6-Հ-Գ.1 Թղթային և էլեկտրոնային</p> | <p>ՕԼ6-Հ-Փ.1 Զրուցակցի օգնությամբ հանպատրաստից</p> |

| | | | | |
|---|--|--|--|--|
| <p>թեմայի շրջանակում (օրինակ՝ տեղեկություններ շրջապատի մարդկանց, տարբեր երկրների, սպորտի, կենսակերպի, ազգային և այլազգի տոների, մասին),</p> <p>ՕԼ6 –Յ-ՈԻ.2 Հասկանալ պարզ տեղեկատվության բովանդակությունը, տարբերակել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից,</p> <p>ՕԼ6 –Յ-ՈԻ.3 Հասկանալ գրուցակցի հրահանգները, այդ թվում՝ երթուղու նկարագրությունը, տեղաշարժը մի կետից մյուսը,</p> <p>ՕԼ6 –Յ-ՈԻ.4 Հասկանալ մեղիա հաղորդումների, լուրերի, իրադարձային նորությունների</p> | <p>որոշ անձանոթ բառեր պարունակող տեքստի ընդհանուր բովանդակությունը, առանձնացնել փաստը կարծիքից, հետևել դեպքերի զարգացմանը,</p> <p>ՕԼ6-Յ-Ը.2 Հասկանալ տեղեկատվական բնույթի պարզ տեքստերը /իրադարձային հոդվածներ, գովազդներ, տեղեկատվական գրքույկներ/ և գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>ՕԼ6-Յ-Ը.3 Հասկանալ ոչ պաշտոնական բնույթի, ինչպես նաև պարզ, ստանդարտ նամակների, ծանուցումների, գրությունների, դիմումների և այլնի</p> | <p>մարդկանց, նրանց կյանքի պայմանները, ուսումնասիրվող լեզվի երկիրը /երկրները/ գործածելով կարճ և պարզ կառույցներ,</p> <p>ՕԼ6-Յ-Մ.2 Նախապես պատրաստված կարճ խոսքի միջոցով արտահայտել սեփական կարծիքը, ներկայացնել առաջիկա գործողությունները</p> <p>ՕԼ6-Յ-Մ.3 Պատմել պատմվածք, իրադարձություն, դեպք, սեփական փորձի մասին գործածելով կարճ և պարզ արտահայտություններ,</p> <p>ՕԼ6-Յ-Մ.4 Համառոտ պատմել սեփական և ուսումնասիրվող լեզվի մշակույթի, կենցաղի ու տոների մասին՝ նշել նմանություններն ու</p> | <p>տարբերակով գրել նամակ՝ նկարագրելով բնակավայրը, ընտանիքի անդամներին, նախասիրությունները, որոշ իրադարձություններ,</p> <p>ՕԼ6-Յ-Գ.2 Վարել մասնակի պաշտոնական նամակագրություն (մինչև 80 բառ) թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ արտահայտելով անմիջական կարիքները,</p> <p>ՕԼ6-Յ-Գ.3 Կատարել կարճ, պարզ, տեղեկատվական և նկարագրական բնույթի գրառումներ՝ արտահայտելով</p> | <p>մասնակցել ծանոթ թեմաների, այդ թվում՝ հայրենիքի, շրջապատող մարդկանց, կենսակերպի, տոների, սպորտի, ուսումնասիրվող լեզվի երկրների և այլնի շուրջ տարվող երկխոսություններին,</p> <p>ՕԼ6-Յ-Փ.2 Ողջունել, հրաժեշտ տալ, երախտիք հայտնել ըստ իրադրության և անհրաժեշտության, գործածել քաղաքավարի այլ արտահայտություններ,</p> <p>ՕԼ6-Յ-Փ.3 Ընկերների հետ քննարկել առաջիկա անելիքները, հանդես գալ առաջարկություններով համաձայնել կամ մերժել իրեն արված առաջարկները</p> |
|---|--|--|--|--|

| | | | | | |
|-------------------|---|--|---|--|--|
| | <p>հիմնական բովանդակությունը, իրադարձային նորությունները մտնում են լուրերի մեջ</p> | <p>բովանդակությունը,</p> | <p>տարբերությունները,</p> <p>ՕԼ6-Հ-Մ.5 Ներկայացնել՝ ինչ կարող է անել, ինչու և ինչպես,</p> <p>ՕԼ6-Հ-Մ.6 Մահուն ներկայացնել նախօրոք պատրաստված և սերտած հանրային հակիրճ հայտարարություններ,</p> | <p>սեփական վերաբերմունքը,</p> | <p>ՕԼ6-Հ-Փ.4 Ծանոթ թեմաների շրջանակում պարզ կառույցների միջոցով ներկայացնել սեփական մոտեցումները, հիմնավորումներն ու եզրահանգումները,</p> <p>ՕԼ6-Հ-Փ.5 Տալ էլույթին հաջորդող հարցեր, ինչպես նաև պատասխանել սեփական էլույթին հաջորդող հարցերին՝ հարցի կրկնության կամ պատասխանի վերաձևակերպման հնարավորության դեպքում,</p> |
| <p>VII</p> | <p>ՕԼ7 –Հ-ՈԻ.1 Հասկանալ ծանոթ կամ հաճախակի հանդիպող, պարզ թեմաներով (աշխատանք, դպրոց, ժամանց) բանավոր խոսքի հիմնական իմաստը:</p> <p>ՕԼ7 –Հ-ՈԻ.2</p> | <p>ՕԼ7-Հ-Ը.1 Հասկանալ ծանոթ թեմայով պարզ և տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը (հայտնագործություններ, Երկիր մոլորակ, նորաձևություն և</p> | <p>ՕԼ7-Հ-Մ.1 Պարզ արտահայտություններով որոշակի սահունությամբ նկարագրել իրեն հետաքրքրող զարգացումները, իրադարձությունները, իրողությունները և այլն:</p> | <p>ՕԼ7-Հ-Գ.1 Օրինակի հիման վրա կամ իրեն հետաքրքրող ծանոթ թեմաներով գրել պարզ նկարագրական տեքստ (80 – 100 բառ):</p> | <p>ՕԼ7-Հ-Փ.1 Հաղորդակցվել պարզ, առօրեական խնդիրների, ծանոթ թեմաների և ընթացիկ իրադարձությունների շուրջ (ընտանիք, շրջապատ, սիրած զբաղմունք, ճանապարհորդություն</p> |

| | | | | | |
|------|---|---|--|---|---|
| | <p>Հասկանալ և հետևել պարզ ցուցումներին ու հրահանգներին՝ բազմաքայլ գործողություններ կատարելիս, եթե դրանք տրվում են գրական/ստանդարտ լեզվով և ծանոթ առողջանությամբ:</p> <p>ՕԼ7 –Հ-ՈԻ.3 Հասկանալ իրեն ծանոթ թեմաներով, նաև ժամանցային մեդիա հաղորդումների, լուրերի, իրադարձային նորությունների հիմնական իմաստը, եթե խոսքը հստակ է և ծանոթ առողջանությամբ:</p> | <p>այլն):</p> <p>ՕԼ7-Հ-Ը.2 Հասկանալ իրադարձություններ ի, դեպքերի զգացմունքների և ցանկությունների նկարագրությունը նամակագրության մեջ:</p> <p>ՕԼ7-Հ-Ը.3 Հասկանալ սարքերի օգտագործման ցուցումներն ու հրահանգները, եթե դրանք գրված են պարզ և հստակ:</p> | <p>ՕԼ7-Հ-Մ.2 Բավականաչափ սահուն ներկայացնել պատմության/իրադարձության/ֆիլմի բովանդակությունը՝ պահպանելով մտքերի հաջորդականությունը:</p> <p>ՕԼ7-Հ-Մ.3 Ունենալ ծանոթ թեմաներով նախօրոք պատրաստած պարզ ելույթ/ներկայացում՝ բավականաչափ սահուն և ճշգրիտ բացատրելով հիմնական կետերը:</p> | <p>ՕԼ7-Հ-Գ.2 Լրացնել անձնական կամ այլ, պարզ, փաստացի տեղեկություններ պահանջող ձևաթուղթ:</p> <p>ՕԼ7-Հ-Գ.3 Գրել առօրյա գործողությունները նկարագրող նամակ էլեկտրոնային կամ թղթային ձևաչափով՝ ներկայացնելով առաջիկա անելիքները:</p> | <p>և այլն):</p> <p>ՕԼ7-Հ-Փ.2 Հանպատրաստից քննարկել իրեն հետաքրքրող թեմաներ՝ բարեկրթորեն և հասկանալի կերպով արտահայտելով իր կարծիքը, համաձայնությունը կամ անհամաձայնությունը:</p> <p>ՕԼ7-Հ-Փ.3 Փոխանցել գրավոր տեղեկություններ (անձնական նամակագրության կամ գրառումների տեսքով)՝ նկարագրելով իր փորձը, զգացմունքները, կարծիքը և այլ անհրաժեշտ մանրամասներ:</p> |
| VIII | <p>ՕԼ8-Հ-ՈԻ.1 Հասկանալ առօրյա կյանքում հնչող զրույցի/խոսքի</p> | <p>ՕԼ8-Հ-Ը.1 Հասկանալ ծանոթ թեմայով պարզ և տեղեկատվական</p> | <p>ՕԼ8-Հ-Մ.1 Նկարագրել իրադարձություններ, իր կենսափորձը, հույսերն</p> | <p>ՕԼ8-Հ-Գ.1 Նկարագրել իրական կամ երևակայական</p> | <p>ՕԼ8-Հ-Փ.1 Սահուն հաղորդակցվել ծանոթ թեմաների, ընթացիկ</p> |

| | | | | |
|---|--|--|--|---|
| <p>ընդհանուր իմաստը և որոշ մանրամասներ, եթե խոսքը մատչելի է, արտասանությունը՝ հստակ:</p> <p>ՕԼ8-Հ-ՈԻ.2 Հետևել ծանոթ թեմաներով պարզ և համառոտ գեկույցներին կամ ելույթներին, եթե հնչող խոսքը պարզ է և ստանդարտ առոգանությամբ:</p> <p>ՕԼ8-Հ-ՈԻ.3 Հասկանալ գիտահանրամատչելի և լրատվական հեռուստատեսային կամ ռադիոձրագրերի հիմնական բովանդակությունը, երբ խոսքը համեմատաբար դանդաղ է ու հստակ:</p> | <p>տեքստերի հիմնական բովանդակությունը և որոշ մանրամասներ</p> <p>ՕԼ8-Հ-Ը.2 Գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը առօրյա գրավոր տեքստերում (նամակներ, բրոշյուրներ):</p> <p>ՕԼ8-Հ-Ը.3 Հասկանալ թերթերի՝ ծանոթ թեմաներով պարզ հոդվածների կարևոր կետերը:</p> <p>ՕԼ8-Հ-Ը.4 Գտնել կոնկրետ տեղեկատվություն գովազդներում, տեղեկատուներում, ճաշացուցակներում, չվացուցակներում և առօրյային առնչվող այլ տեքստերում:</p> | <p>ու ձգտումները և այլն՝ գործածելով պարզ կապակցված արտահայտություններ:</p> <p>ՕԼ8-Հ-Մ.2 Կապակցված կերպով ներկայացնել պատմության/իրադարձության/ֆիլմի բովանդակությունը՝ արտահայտելով իր վերաբերմունքը դրա նկատմամբ:</p> <p>ՕԼ8-Հ-Մ.3 Անել նախապես պատրաստված կարճ հայտարարություններ իրեն հետաքրքրող թեմաների կամ առաջիկա իրադարձությունների վերաբերյալ:</p> <p>ՕԼ8-Հ-Մ.4 Մահուն ներկայացնել նախապես պատրաստված պարզ գեկույց/ելույթ՝ հիմնավորելով իր</p> | <p>իրադարձություններ և ուղևորություններ՝ պարզ, գրագետ շարադրանքով և կապակցված տեքստով (100 – 120 բառ):</p> <p>ՕԼ8-Հ-Գ.2 Հակիճ և պարզ, կապակցված տեքստով շարադրել առօրյա կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող իրադարձություններ՝ ներառելով փաստերի վրա հիմնված տեղեկություններ:</p> <p>ՕԼ8-Հ-Գ.3 Վարել մասնակիորեն պաշտոնական նամակագրություն թղթային կամ էլեկտրոնային ձևաչափերում՝</p> | <p>իրադարձությունների և հանրային նշանակության մի շարք խնդիրների մասին (մարդու իրավունք, մեդիա և հասարակություն և այլն):</p> <p>ՕԼ8-Հ-Փ.2 Քննարկման ընթացքում համապատասխան լեզվական միջոցներով արտահայտել սեփական կարծիքը և զգացմունքները (ուրախություն, տխրություն, ցանկություն, կասկած և այլն):</p> <p>ՕԼ8-Հ-Փ.3 Փոխանցել գրավոր տեղեկություններ (նամակագրության կամ գրառումների տեսքով)՝ անդրադառնալով իրեն հուզող խնդիրներին և</p> |
|---|--|--|--|---|

| | | | տեսակետը, համեմատելով տարբեր իրադարձություններ, հանգամանքներ, փաստեր: | անդրադառնալով իր կարիքներին և իրեն հուզող հարցերին: | առաջարկելով պարզ լուծումներ: |
|----|---|---|---|---|--|
| IX | <p>ՕԼ9 –Հ-ՈԻ.1 Հասկանալ տարբեր թեմաներով հնչող փաստացի տեղեկատվության ընդհանուր իմաստը և որոշ մանրամասներ, եթե խոսքը հստակ է և ստանդարտ առոգանությամբ:</p> <p>ՕԼ9 –Հ-ՈԻ.2 Հետևել հասարակությանը և մշակույթին վերաբերող տարբեր թեմաներով պարզ և համառոտ զեկույցներին կամ ելույթներին, եթե հնչող խոսքը պարզ է և ստանդարտ առոգանությամբ,</p> <p>ՕԼ9 –Հ-ՈԻ.3 Հասկանալ</p> | <p>ՕԼ9-Հ-Ը.1 Հասկանալ պարզ և տեղեկատվական տեքստերի ընդհանուր բովանդակությունը, գլխավոր փաստերի և դեպքերի տրամաբանական կապը:</p> <p>ՕԼ9-Հ-Ը.2 Գտնել իրեն անհրաժեշտ տեղեկությունները ծավալուն տեքստի տարբեր մասերից/տարբեր տեքստերից որևէ խնդիր լուծելու համար:</p> <p>ՕԼ9-Հ-Ը.3 Հասկանալ պարզ տեղեկատվական</p> | <p>ՕԼ9-Հ-Մ.1 Մանրամասն նկարագրել տարբեր իրական և երևակայական իրադարձություններ՝ կանխատեսելով հնարավոր զարգացումները:</p> <p>ՕԼ9-Հ-Մ.2 Արտահայտել իր կարծիքը առաջադրված թեմայի/իրադարձության ն շուրջ՝ հիմնավորելով ու բացատրելով իր մտտեցումները:</p> <p>ՕԼ9-Հ-Մ.3 Կառուցել բավանակաչափ ընկալելի փաստարկ՝ պաշտպանելով իր տեսակետը կամ հակադրելով այն այլոց</p> | <p>ՕԼ9-Հ-Գ.1 Կազմել կարճ պատմություն՝ նկարագրելով սեփական փորձը, ներկայացնելով տպավորություններ ը, զգացումները, վերաբերմունքը (120 – 150 բառ):</p> <p>ՕԼ9-Հ-Գ.2 Գրել կարճ էսսե առօրյա կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող իրադարձություննե րի մասին՝ զուգադրելով և գնահատելով փաստացի տեղեկությունները ու փաստարկները, հիմնավորելով իր</p> | <p>ՕԼ9-Հ-Փ.1 Մահուն և վստահ հաղորդակցվել իր հետաքրքրությունների ն առնչվող ծանոթ, ինչպես նաև վերացական, գիտահանրամատչելի, հասարակությանը և մշակույթին վերաբերող թեմաների շուրջ:</p> <p>ՕԼ9-Հ-Փ.2 Քննարկման ընթացքում համապատասխան լեզվական միջոցներով արտահայտել սեփական զգացումները և արձագանքել խոսակիցների զգացումներին (ուրախություն,</p> |

| | | | | | |
|---|--|---|--|--|---|
| | <p>գիտահանրամատչելի, փաստավավերագրական, գեղարվեստական հեռուստամեդիա բովանդակության մեծ մասը, եթե խոսքը պարզ է և դանդաղ:</p> <p>ՕԼ9 –Հ-ՈԻ.4 Հասկանալ և հետևել իր շուրջը ծավալվող քննարկման հիմնական կետերին, եթե քննարկումը ընթանում է հստակ և ծանոթ առոգանությամբ:</p> | <p>տեքստերում բերված հիմնական փաստարկներն ու եզրահանգումները:</p> <p>ՕԼ9-Հ-Ը.4 Ընդհանրացնել տեքստում առկա փաստերը, անել հետևություններ ուղղված տեսակետի հիմնավորմանը:</p> | <p>կարծիքին:</p> <p>ՕԼ9-Հ-Մ.4 Մահուն ներկայացնել նախապես պատրաստված պարզ զեկույց/ելույթ՝ հանպատրաստից արձագանքելով հնարավոր հաջորդող հարցերին:</p> | <p>կարծիքը:</p> <p>ՕԼ9-Հ-Գ.3 Քննարկել կայացված որոշումները/ընթացիկ զարգացումները՝ ներկայացնելով և հիմնավորելով դրանց դրական և բացասական կողմերը (նաև՝ նամակագրության մեջ):</p> | <p>տխրություն, ցանկություն, կասկած և այլն):</p> <p>ՕԼ9-Հ-Փ.3 Քննարկել գոյություն ունեցող խնդիրը՝ համեմատելով լուծման տարբերակները և առաջարկելով մի շարք քայլեր այդ ուղղությամբ:</p> <p>ՕԼ9-Հ-Փ.4 Վարել նամակագրություն (թղթային կամ էլեկտրոնային)՝ հաղորդելով նորություններ և արտահայտելով մտքեր մշակույթին (կինո, երաժշտություն, գրականություն և այլն), հասարակությանը վերաբերող հարցերի կամ այլ թեմաների շուրջ:</p> |
| X | ՕԼ10 –Հ-ՈԻ.1 Հետևել ծավալուն | ՕԼ10-Հ-Ը.1 Հասկանալ | ՕԼ10-Հ-Մ.1 Հստակ և մանրամասն | ՕԼ10-Հ-Գ.1 Կազմել իր | ՕԼ10-Հ-Փ.1 Մահուն և անկաշկանդ |

| | | | | |
|--|---|--|--|--|
| <p>ելույթներին ու փաստարկների բարդ շղթային, եթե թեման բավականաչափ ծանոթ է, իսկ մտքերը՝ հստակ կապակցված:</p> <p>ՕԼ10 –Հ-ՈԻ.2 Մեծամասամբ հասկանալ ծանոթ թեմաների շուրջ լեզվակիրների գրույցի հիմնական իմաստը, եթե այն ստանդարտ լեզվով է և նորմալ արագությամբ:</p> <p>ՕԼ10 –Հ-ՈԻ.3 Հասկանալ ստանդարտ լեզվով և խոսքի նորմալ արագությամբ հնչող հայտարարություններ և հաղորդումներ՝ կոնկրետ և վերացական թեմաներով:</p> | <p>տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը՝ առանձնացնելով փաստերը, կարծիքը, պատճառահետևանքային կապերը:</p> <p>ՕԼ10-Հ-Ը.2 Կիրառել ընթերցանության տարբեր ձևեր և արագություն, ըստ տեքստերի տիպերի և ընթերցանության նպատակի (բառարանի օգտագործմամբ, ըստ անհրաժեշտության):</p> | <p>նկարագրել իր հետաքրքրություններին առնչվող իրողություններն ու իրադարձությունները:</p> <p>ՕԼ10-Հ-Մ.2 Հիմնավորել իր տեսակետը՝ ընդգծելով տարբեր կարծիքների առավելություններն ու թերությունները:</p> <p>ՕԼ10-Հ-Մ.3 Ներկայացնել նախապես պատրաստված կապակցված էլույթ՝ ընդգծելով այս կամ այն տեսակետին կողմ կամ դեմ լինելու պատճառները:</p> | <p>հետաքրքրություններ ընթացիկ իրադարձություններին վերաբերող թեմաներով փաստարկային շարադրանք՝ ներառելով տարբեր աղբյուրներից քաղած տեղեկություններ (150 – 200 բառ):</p> <p>ՕԼ10-Հ-Գ.2 Մանրամասն նկարագրել արվեստի գործ կամ մշակութային իրադարձություն (այդ թվում՝ ֆիլմ, գիրք, բեմադրություն)՝ ներկայացնելով սեփական կարծիքը և վերաբերմունքը:</p> | <p>հաղորդակցվել, այդ թվում՝ լեզվակիրների հետ՝ արժևորելով փաստերն ու փորձը, ներկայացնելով և պաշտպանելով իր տեսակետը՝ բացատրությունների ու փաստարկների միջոցով:</p> <p>ՕԼ10-Հ-Փ.2 Ոչ պաշտոնական քննարկումների ժամանակ ներկայացնել իր կարծիքը և այն պաշտպանել՝ բերելով բացատրություններ, փաստարկներ և մեկնաբանություններ:</p> <p>ՕԼ10-Հ-Փ.3 Պարզ և համառոտ ներկայացնել խնդիրը դասընկերներին՝ ներկայացնելով պատճառներն ու հետևանքները, կշռադատելով լուծման տարբերակները:</p> |
|--|---|--|--|--|

| | | | | | |
|------------------|---|---|---|---|---|
| | | | | | <p>ՕԼ10-Հ-Փ.4 Վարել նամակագրություն (թղթային կամ էլեկտրոնային)՝ հաղորդելով տեղեկություններ, արտահայտելով տեսակետներ և նկարագրելով զգացմունքներ/տպավորություններ:</p> |
| <p>XI</p> | <p>ՕԼ11 –Հ-ՈԻ.1 Հասկանալ ստանդարտ լեզվով, ծանոթ և անծանոթ, կոնկրետ և վերացական թեմաներով, լեզվական հագեցվածություն և բարդ կառուցվածք ունեցող ելույթների հիմնական մտքերը:</p> <p>ՕԼ11 –Հ-ՈԻ.2 Մեծամասամբ հասկանալ ծանոթ և անծանոթ թեմաների շուրջ լեզվակիրների գրույցի հիմնական իմաստը, եթե այն</p> | <p>ՕԼ11-Հ-Ը.1 Հասկանալ տեղեկատվական և այլ տեքստերի հիմնական բովանդակությունը՝ տարբեր մանրամասների միջոցով վեր հանելով հեղինակի մտադրությունը:</p> <p>ՕԼ11-Հ-Ը.2 Հասկանալ արդի խնդիրներին անդրադարձող հոդվածներում և զեկույցներում</p> | <p>ՕԼ11-Հ-Մ.1 Հստակ և մանրամասն ներկայացնել իր հետաքրքրություններին առնչվող իրողություններն ու իրադարձությունները՝ հիմնավորելով դրանք առանցքային մանրամասներով և դիպուկ օրինակներով:</p> <p>ՕԼ11-Հ-Մ.2 Կառուցել և ելույթի տեքստով ներկայացնել փոխկապակցված փաստարկների շարք՝ նշելով</p> | <p>ՕԼ11-Հ-Գ.1 Կազմել իր հետաքրքրությունների շրջանակին վերաբերող և հանրային նշանակության թեմաներով փաստարկային շարադրանք համադրելով տարբեր աղբյուրներից քաղած տեղեկություններ (200 – 250 բառ):</p> <p>ՕԼ11-Հ-Գ.2</p> | <p>ՕԼ11-Հ-Փ.1 Հանպատրաստից և գրագետ հաղորդակցվել տարբեր միջավայրերում և լսարանների հետ՝ շոշափելով ընդհանուր, գիտահանրամատչելի, մասնագիտական կամ ժամանցի թեմաներ:</p> <p>ՕԼ11-Հ-Փ.2 Մասնակցել ոչ պաշտոնական և մասամբ պաշտոնական քննարկումների՝</p> |

| | | | | | |
|-------------------|---|---|---|---|---|
| | <p>ստանդարտ լեզվով է և նորմալ արագությամբ:</p> <p>ՕԼ11 –Հ-ՈԻ.3 Հասկանալ ստանդարտ լեզվով մեղիա հաղորդումների, կամ ձայնագրված նյութերի բովանդակության մեծ մասը՝ տարբերելով խոսողի տրամադրությունը, տոնը և այլն:</p> | <p>հեղինակի արտահայտած կոնկրետ տեսակետը և այն հիմնավորող փաստարկները:</p> <p>ՕԼ11-Հ-Ը.3 Արագ աչքի անցկացնել երկար և բարդ, այդ թվում՝ մասնագիտացված բովանդակությամբ տեքստը և վեր հանել կարևոր մտքերը:</p> <p>ՕԼ11-Հ-Ը.4 Հասկանալ երկար և մանրամասն ցուցումները՝ դժվար հատվածները վերընթերցելու հնարավորության դեպքում:</p> | <p>սկզբնաղբյուրները:</p> <p>ՕԼ11-Հ-Մ.3 Ներկայացման/ելույթի ընթացքում հեշտությամբ և սահուն անցնել լսարանին հետաքրքրող կետերի քննարկմանը:</p> | <p>Հստակ և մանրամասն նկարագրել իրական կամ երևակայական իրադարձություններ, բազմապիսի դեպքեր՝ պահպանելով մտքերի տրամաբանական հաջորդականությունը և հետևելով ընտրված ժանրի կանոններին:</p> | <p>ճշգրտորեն արտահայտելով իր կարծիքը, բերելով համոզիչ փաստարկներ, առաջադրելով վարկածներ, արձագանքելով այլոց փաստարկներին:</p> <p>ՕԼ11-Հ-Փ.3 Հարցազրույցի ժամանակ վստահ և սպառիչ պատասխանել հարցերին:</p> <p>ՕԼ11-Հ-Փ.4 Վարել նամակագրություն(թղթային կամ էլեկտրոնային)՝ հաղորդելով նորությունները և շեշտելով իրադարձությունների նշանակությունը:</p> |
| <p>XII</p> | <p>ՕԼ12 –Հ-ՈԻ.1 Հասկանալ կենդանի հնչող կամ հեռարձակվող,</p> | <p>ՕԼ12-Հ-Ը.1 Հասկանալ տարբեր ժանրերի, այդ թվում՝ լրագրային,</p> | <p>ՕԼ12-Հ-Մ.1 Առաջադրել նոր մտքեր և մոտեցումներ՝ իր</p> | <p>ՕԼ12-Հ-Գ.1 Շարադրել իր հետաքրքրությունները շրջանակին</p> | <p>ՕԼ12-Հ-Փ.1 Հանպատրաստից և գրագետ հաղորդակցվել տարբեր միջավայրերում</p> |

| | | | | |
|---|---|---|---|---|
| <p>դարձվածքներ չպարունակող ստանդարտ խոսքը ինչպես ծանոթ, այնպես էլ անծանոթ թեմաներով, որոնք սովորաբար հանդիպում են անձնական, հասարակական, գիտական կամ մասնագիտական ոլորտներում:</p> <p>ՕԼ12 –Հ-ՈԻ.2 Առանց դժվարության հասկանալ լեզվակիրների գրույցը, էթե այն ընթանում է նորմալ արագությամբ և ստանդարտ լեզվով:</p> <p>ՕԼ12 –Հ-ՈԻ.3 Հասկանալ հասարակական, մասնագիտական և գիտական ոլորտներին առնչվող ստանդարտ լեզվով մեդիա հաղորդումների, կամ ձայնագրված նյութերի</p> | <p>վերլուծական, գիտահամարամատչելի հոդվածներ՝ ճանաչելով տեքստում առաջ քաշված վարկածների և եզրահանգումների միջև կապը:</p> <p>ՕԼ12-Հ-Ը.2 Գտնել և դուրս բերել անհրաժեշտ տեղեկատվությունը, հեղինակների տեսակետները և կարծիքները տարբեր, մասնագիտական աղբյուրներից:</p> <p>ՕԼ12-Հ-Ը.3 Հասկանալ մասնագիտացված հոդվածներ՝ պայմանով, որ կարող է պարբերաբար օգտագործել բառարան՝ տերմինաբանություն</p> | <p>հետաքրքրություններ ին՝ առնչվող իրողությունների և իրադարձությունների մանրամասն վերլուծության հիման վրա:</p> <p>ՕԼ12-Հ-Մ.2 Տրամաբանորեն կապակցել և զարգացնել իր փաստարկները՝ ընդլայնելով և հիմնավորելով սեփական տեսակետը լրացուցիչ փաստարկներով և դիպուկ օրինակներով:</p> <p>ՕԼ12-Հ-Մ.3 Ելույթը/գեկուցումն ամփոփել սեփական և այլ տեսակետների վերլուծության և համադրության հիման վրա ձևակերպված՝ եզրահանգումներով՝ առանց լեզվական կաշկանդվածության:</p> | <p>վերաբերող և հանրային նշանակության զանազան թեմաներով համակարգված և գրագետ տեքստ՝ համադրելով և գնահատելով տարբեր աղբյուրներից քաղած տեղեկություններն ու փաստարկները (250 – 280 բառ):</p> <p>ՕԼ12-Հ-Գ.2 Գրել փաստարկային էսսեններ՝ ներկայացնելով գլխավոր մտքերն ու մանրամասները, գնահատել խնդրի լուծման համար առաջարկվող լուծումները:</p> | <p>և լսարանների հետ՝ շոշափելով ընդհանուր, գիտահամարամատչելի, մասնագիտական կամ ժամանցի թեմաներ և ցուցաբերելով մտքերի հստակ փոխկապվածություն:</p> <p>ՕԼ12-Հ-Փ.2 Մասնակցել ոչ պաշտոնական և պաշտոնական քննարկումների՝ ճշգրտորեն արտահայտելով իր կարծիքը, բերելով համոզիչ փաստարկներ, մեկնաբանություններ, առաջադրելով վարկածներ, արձագանքելով այլոց փաստարկներին:</p> <p>ՕԼ12-Հ-Փ.3 Վարել հարցազրույց՝ նախապես մշակված հարցաշարով, ըստ անհրաժեշտության հեռանալով դրանից և կողմնորոշվելով ըստ</p> |
|---|---|---|---|---|

| | | | | | |
|--|--|-----------------------------------|--|--|--|
| | <p>բովանդակությունը, ինչպես նաև խոսողի տեսակետը և վերաբերմունքը:</p> <p>ՕԼ12 –Հ-ՈԻ.4 Ընկալել լեզվական և բովանդակային առումով բարդ դասախոսությունների, գեկույցների հիմնական մտքերը:</p> | <p>ը ճշգրիտ հասկանալու համար:</p> | | | <p>պատասխանների:</p> <p>ՕԼ12-Հ-Փ.4 Վարել նամակագրություն (թղթային կամ էլեկտրոնային)՝ մեկնաբանելով ստացած տեղեկությունները և տեսակետները:</p> |
|--|--|-----------------------------------|--|--|--|

| Մշակույթ | | | | |
|------------|---|---|---|--|
| Դասարաններ | Արժեքներ | Վերաբերմունք | Նորմեր/կանոններ | Հետաքրքրություններ/Նախասիրություններ |
| II | <p>ՕԼ2-Մ-Ա.1 Ճանաչել ազգային և ուսուցանվող լեզվի երկրի մշակույթի որոշ տարրեր (ընտանիք, դպրոց, այբուբեն)</p> | <p>ՕԼ2-Մ-Վ.1 Ցուցաբերել հարգալից վերաբերմունք ընտանիքի և դասընկերների նկատմամբ՝ փորձելով օգնել նրանց:</p> <p>ՕԼ2-Մ-Վ.2 Ցուցաբերել հոգատար և խնամքով վերաբերմունք դպրոցի գույքի և դպրոցական պարագաների հանդեպ:</p> | <p>ՕԼ2-Մ-Ն.1 Թվարկել տանը և դպրոցում վարքի պարզ կանոնները:</p> <p>ՕԼ2-Մ-Ն.2 Մաքուր պահել դասասենյակը և չփչացնել գույքը:</p> | <p>ՕԼ2-Մ-Հ/Ն.1 Ճանաչել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները:</p> |
| III | <p>ՕԼ3-Մ-Ա.1 Ճանաչել իր և այլ ազգերի</p> | <p>ՕԼ3-Մ-Վ.1 Ցուցաբերել հոգատար</p> | <p>ՕԼ3-Մ-Ն.1 Ճանաչել և պահպանել</p> | <p>ՕԼ3-Մ-Հ/Ն.1 Ճանաչել իր ընտանիքի</p> |

| | | | | |
|----|--|--|--|--|
| | <p>մի շարք սովորույթներ և դրանց հետ կապված արժեքները:</p> <p>ՕԼ3-Մ-Ա.2 Կարևորել ընկերությունը և հանդուրժողականությունը:</p> | <p>վերաբերմունք ընտանիքի անդամների և ընկերների, պատասխանատվություն տան և դպրոցի գույքի հանդեպ:</p> <p>ՕԼ3-Մ-Վ.2 Դրսևորել հոգատար վերաբերմունք կենդանիների հանդեպ:</p> <p>ՕԼ3-Մ-Վ.3 Ստեղծել ընկերական հարաբերություններ՝ քաջալերելով և աջակցելով իր ընկերներին:</p> | <p>ընտանիքում և հասարակական վայրերում վարքի պարզ կանոնները:</p> <p>ՕԼ3-Մ-Ն.2 Ճանաչել առողջ սնվելու ռեժիմը և հետևել դրան:</p> | <p>անդամների և դասընկերների նախասիրությունները:</p> |
| IV | <p>ՕԼ4-Մ-Ա.1 Ճանաչել մշակութային արժեքների որոշ դրսևորումներ առօրյա կյանքում:</p> <p>ՕԼ4-Մ-Ա.2 Կարևորել հանդուրժողականությունն այլ ազգերի և մշակույթների նկատմամբ:</p> | <p>ՕԼ4-Մ-Վ.1 Դրսևորել հարգալից վերաբերմունք աշխարհի այլ երկրների, ազգությունների, լեզուների, մշակույթների հանդեպ՝ ցուցաբերելով դրանք ուսումնասիրելու հետաքրքրություն:</p> <p>ՕԼ4-Մ-Վ.2 Դրսևորել շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված հոգատար և պատասխանատու վերաբերմունք՝ չվնասելով և չաղտոտելով այն:</p> | <p>ՕԼ4-Մ-Ն.1 Կազմել օրվա ռեժիմ և հետևել դրան:</p> <p>ՕԼ4-Մ-Ն.2 Ճանաչել առողջ ապրելակերպի սկզբունքները և հետևել դրանց:</p> <p>ՕԼ4-Մ-Ն.3 Առաջնորդվել միայն անհրաժեշտը և պիտանին գնելու սկզբունքով:</p> | <p>ՕԼ4-Մ-Չ/Ն.1 Ճանաչել ուսումնասիրվող լեզվի երկրի հասակակցի հետաքրքրություններն ու նախասիրությունները:</p> |

| | | | | |
|----|--|---|--|---|
| | | | | |
| V | <p>OL5-Մ-Ա.1 Ճանաչել ազգային և իր համայնքի նյութական և ոչ նյութական արժեքները (ավանդույթներ, սովորույթներ, տեսարժան վայրեր):</p> <p>OL5-Մ-Ա.2 Գիտակցել այլ մշակույթների նկատմամբ բաց լինելու և դրանք ճանաչելու կարևորությունը:</p> | <p>OL5-Մ-Վ.1 Դրսևորել հոգատար և պատասխանատու վերաբերմունք տեսարժան վայրերի հանդեպ:</p> <p>OL5-Մ-Վ.2 Դրսևորել հոգատար վերաբերմունք բնության, ընտանի և վայրի կենդանիների հանդեպ:</p> | <p>OL5-Մ-Ն.1 Ճանաչել հասարակական և մշակութային վայրերում իրեն դրսևորելու պարզ կանոնները և հետևել դրանց:</p> <p>OL5-Մ-Ն.2 Ճանաչել համագործակցային աշխատանքի տարրական կանոնները և հետևել դրանց:</p> <p>OL5-Մ-Ն.3 Ճանաչել համայնքում համակեցության տարրական կանոնները և հետևել դրանց:</p> | <p>OL5-Մ-Հ/Ն.1 Ցուցաբերել հետաքրքրություն ընտանի և վայրի կենդանիների հանդեպ:</p> <p>OL5-Մ-Հ/Ն.2 Ճանաչել իրեն հետաքրքրող որոշ մասնագիտություններ:</p> <p>OL5-Մ-Հ/Ն.3 Ցուցաբերել հետաքրքրություն առողջ ապրելակերպի և սպորտի հանդեպ:</p> |
| VI | <p>OL6-Մ-Ա.1 Կարևորել ընկերությունը, քաղաքավարությունը և հանդուրժողականությունը՝ որպես համակեցության նախապայման:</p> <p>OL6-Մ-Ա.2 Ճանաչել տոները որպես տարբեր համայնքների և մշակույթների նյութական և</p> | <p>OL6-Մ-Վ.1 Դրսևորել հանդուրժողական, քաղաքավարի և հարգալից վերաբերմունք իրենց շրջապատող մարդկանց նկատմամբ:</p> <p>OL6-Մ-Վ.2 Դրսևորել պատասխանատու վերաբերմունք ազգային և համաշխարհային</p> | <p>OL6-Մ-Ն.1 Ճանաչել համակեցության կանոնները և հետևել դրանց:</p> <p>OL6-Մ-Ն.2 Ճանաչել իր և այլ երկրների մի շարք հայտնի մարզաձևերի պարզ կանոնները:</p> | <p>OL6-Մ-Հ/Ն.1 Դրսևորել հետաքրքրություն իր և ուսումնասիրվող լեզվի երկրների մշակութային արժեքների հանդեպ:</p> <p>OL6-Մ-Հ/Ն.2 Ցուցաբերել հետաքրքրություն որևէ մարզաձևի նկատմամբ՝ գիտակցելով դրա կարևորությունը առողջ</p> |

| | | | | |
|-----|---|---|--|---|
| | <p>ոչ նյութական արժեքների դրսևորում:</p> <p>ՕԼ6-Մ-Ա.3 Կարևորել հայրենաճանաչումը իր համայնքի պատմամշակութային արժեքների գնահատման միջոցով:</p> | <p>մշակութային արժեքների հանդեպ:</p> <p>ՕԼ6-Մ-Վ.3 Դրսևորել պատասխանատու վերաբերմունք սեփական և այլոց առողջության հանդեպ:</p> | | <p>սպրելակերպի և կամային հատկանիշների ձևավորման գործում:</p> |
| VII | <p>ՕԼ7-Մ-Ա.1 Ճանաչել և արժևորել ազգային և համաշխարհային մշակույթը երաժշտության միջոցով:</p> <p>ՕԼ7-Մ-Ա.2 Արժևորել օլիմպիական և պարալիմպիկ խաղերի դերը՝ որպես համաշխարհային մշակութային արժեքներ:</p> <p>ՕԼ7-Մ-Ա.3 Կարևորել աշխարհճանաչումը համաշխարհային պատմամշակութային արժեքների գնահատման միջոցով (աշխարհի հրաշալիքները):</p> | <p>ՕԼ7-Մ-Վ.1 Դրսևորել հարգալից վերաբերմունք այլոց ինքնարտահայտման ձևերի (ոճ, ճաշակ և այլն) նկատմամբ:</p> <p>ՕԼ7-Մ-Վ.2 Դրսևորել հոգատար և պատասխանատու վերաբերմունք Երկիր մոլորակի նկատմամբ:</p> | <p>ՕԼ7-Մ-Ն.1 Թվարկել բնության նկատմամբ պատասխանատու վարքի մի շարք կանոններ:</p> <p>ՕԼ7-Մ-Ն.2 Ճանաչել մշակույթով/ժամանակով պայմանավորված կենցաղի մի շարք նորմեր (հագուստ, սնունդ):</p> <p>ՕԼ7-Մ-Ն.3 Ճանաչել սարքերի օգտագործման անվտանգության տարրական կանոնները:</p> | <p>ՕԼ7-Մ-Չ/Ն.1 Ցուցաբերել հետաքրքրություն նորաձևության և ոճերի, տարբեր հայտնագործությունների, երաժշտական ոճերի, նախընտրած սպորտաձևերի հանդեպ:</p> |

| | | | | |
|------|---|---|--|--|
| VIII | <p>OL8-Մ-Ա.1 Ճանաչել խոհանոցը որպես ազգային և համաշխարհային մշակույթի մաս:</p> <p>OL8-Մ-Ա.2 Արժևորել մշակութային բազմազանությունը:</p> <p>OL8-Մ-Ա.3 Կարևորել մեղիա տեղեկատվությունը որպես միջմշակութային իրազեկության խթանման միջոց:</p> <p>OL8-Մ-Ա.4 Դիտարկել մարդուն՝ որպես բարձրագույն արժեք մարդու իրավունքների զլորբայ համատեքստում:</p> | <p>OL8-Մ-Վ.1 Դրսևորել պատասխանատու վերաբերմունք մարդու հիմնարար ազատությունների և իրավունքների նկատմամբ:</p> <p>OL8-Մ-Վ.2 Դրսևորել հարգալից, հոգատար և պատասխանատու վերաբերմունք հասարակիցների նկատմամբ:</p> <p>OL8-Մ-Վ.3 Ցուցաբերել հետաքրքրություն այլ երկրների և մշակույթների ճանաչման նկատմամբ:</p> | <p>OL8-Մ-Ն.1 Ճանաչել հասարակության մեջ իր իրավունքների և պարտականությունների սահմանը:</p> <p>OL8-Մ-Ն.2 Ճանաչել մարդու իրավունքների հիմնարար սկզբունքները:</p> <p>OL8-Մ-Ն.3 Ճանաչել հասարակական համակեցության կանոնները որպես ամբողջություն և հետևել դրանց:</p> | <p>OL8-Մ-Հ/Ն.1 Ցուցաբերել հետաքրքրություն իր և ուսումնասիրվող երկրի/երկրների տեսարժան վայրերի, խոհանոցների և սովորույթների հանդեպ:</p> |
| IX | <p>OL9-Մ-Ա.1 Կարևորել շարունակական բազմալեզու կրթության դերը՝ որպես անհատի և հասարակության հաջողության գրավական:</p> <p>OL9-Մ-Ա.2</p> | <p>OL9-Մ-Վ.1 Դրսևորել պատասխանատվություն՝ ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության հանդեպ:</p> <p>OL9-Մ-Վ.2</p> | <p>OL9-Մ-Ն.1 Գործել որպես հասարակության մեջ կարգուկանոնի և օրենքին հետևող անհատ:</p> <p>OL9-Մ-Ն.2</p> | <p>OL9-Մ-Հ/Ն.1 Ցուցաբերել հետաքրքրություն ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունների նկատմամբ (կինո, երաժշտություն, գրականություն):</p> |

| | | | | |
|-----------------|---|---|--|--|
| | <p>Ճանաչել և արժևորել ազգային և համաշխարհային մշակույթի նյութական և ոչ նյութական ժառանգությունը:</p> <p>ՕԼ9-Մ-Ա.2 Ճանաչել օրենքի գերակայությունը որպես ժողովրդավարական հասարակության գերակա նախապայման:</p> | <p>Դրսևորել պատասխանատու քաղաքացիական վարքագիծ՝ ճանաչելով իր իրավունքներն ու պարտականությունները:</p> | <p>Ճանաչել աղետների ժամանակ վարքագծային կանոնները և հետևել դրանց ըստ անհրաժեշտության:</p> | |
| <p>X</p> | <p>ՕԼ10-Մ-Ա.1 Կարևորել համաշխարհային արվեստի և գրականության գեղագիտական արժեքը և դերը մարդու կյանքում:</p> <p>ՕԼ10-Մ-Ա.2 Արժևորել գիտությունը որպես աշխարհճանաչման միջոց և առաջընթացի նախապայման:</p> | <p>ՕԼ10-Մ-Վ.1 Դրսևորել հարգալից և արժևորող վերաբերմունք ազգային և համաշխարհային արվեստի և գրականության գործերի հանդեպ:</p> <p>ՕԼ10-Մ-Վ.2 Դրսևորել գիտությունը՝ որպես մարդկության առաջընթացն ապահովող կարևորագույն գործոնն արժևորող վերաբերմունք:</p> <p>ՕԼ10-Մ-Վ.3 Դրսևորել կոնֆլիկտների լուծելիության, խաղաղ կարգավորման</p> | <p>ՕԼ10-Մ-Ն.1 Ճանաչել կոնֆլիկտների խաղաղ կարգավորման/լուծման մոտեցումը որպես արդյունավետ եղանակ և հետևել դրան:</p> <p>ՕԼ10-Մ-Ն.2 Ճանաչել հասարակական բարքերը և ցուցաբերել անհատական դիրքորոշում:</p> <p>ՕԼ10-Մ-Ն.3 Ճանաչել ուսումնասիրվող լեզվով հաղորդակցության նորմերը և պահպանել դրանք այդ լեզվով հաղորդակցվելիս:</p> | <p>ՕԼ10-Մ-Հ/Ն.1 Ցուցաբերել հետաքրքրություն հայ և օտարալեզու գրականության և արվեստի գործերի նկատմամբ:</p> <p>ՕԼ10-Մ-Հ/Ն.2 Ցուցաբերել հետաքրքրություն գիտական հետազոտությունների, հայտնագործությունների, առեղծվածային երևույթների և նրանց ուսումնասիրությունների նկատմամբ:</p> |

| | | | | |
|-----------|---|---|--|--|
| | | <p>հնարավորության/ անհրաժեշտության գիտակցություն:</p> <p>ՕԼ10-Մ-Վ.4 Դրսևորել ընթացիկ, հասարակական հնչեղության իրադարձությունների նկատմամբ իրազեկված և հիմնավորված դիրքորոշում:</p> | | |
| XI | <p>ՕԼ11-Մ-Ա.1 Արժևորել աշխատանքը և որակյալ մասնագիտական գործունեությունը:</p> <p>ՕԼ11-Մ-Ա.2 Արժևորել բնությունը որպես մարդու գոյության բնական միջավայր:</p> <p>ՕԼ11-Մ-Ա.3 Արժևորել ազգային մշակույթի ներդրումը համաշխարհային մշակույթում:</p> | <p>ՕԼ11-Մ-Վ.1 Դրսևորել հարգալից վերաբերմունք աշխատանքի և տարբեր մասնագիտությունների նկատմամբ:</p> <p>ՕԼ11-Մ-Վ.2 Դրսևորել գիտակից վերաբերմունք հիվանդությունների կանխարգելման և առողջ ապրելակերպի կարևորության նկատմամբ:</p> <p>ՕԼ11-Մ-Վ.3 Դրսևորել քաղաքական և պատմական իրադարձությունների մասին իրազեկ լինելու գիտակցություն՝ կարևորելով</p> | <p>ՕԼ11-Մ-Ն.1 Ճանաչել աշխատաշուկայում գործող նորմերը և առաջնորդվել դրանցով աշխատանք որոնելիս կամ աշխատանքի դիմելիս:</p> <p>ՕԼ11-Մ-Ն.2 Հետևել հիվանդությունների կանխարգելման և առողջ ապրելակերպի կանոններին:</p> <p>ՕԼ11-Մ-Ն.3 Ճանաչել մեդիագրագիտության հիմնարար սկզբունքները և առաջնորդվել դրանցով՝ տեղեկություններ որոնելիս:</p> <p>ՕԼ11-Մ-Ն.4 Հետևել շրջակա միջավայրը</p> | <p>ՕԼ11-Մ-Հ/Ն.1 Կարևորել նախասիրությունների դերը մասնագիտության ընտրության ժամանակ:</p> <p>ՕԼ11-Մ-Հ/Ն.2 Ցուցաբերել հետաքրքրություն բժշկության ճյուղերի և մասնագիտացումների, բժշկագիտության առաջընթացի նկատմամբ:</p> <p>ՕԼ11-Մ-Հ/Ն.3 Ցուցաբերել հետաքրքրություն Հայաստանի կամ ուսումնասիրվող լեզվի երկր(ներ)ի քաղաքական համակարգերի նկատմամբ:</p> <p>ՕԼ11-Մ-Հ/Ն.4</p> |

| | | | | |
|-------------------|--|--|---|---|
| | | <p>առաջնային աղբյուրներից (օրինակ՝ ականատեսներ, արխիվային փաստաթղթեր և այլն) տեղեկատվությանը ստացումը:</p> <p>ՕԼ11-Մ-Վ.4 Դրսևորել հոգատար և պատասխանատու վերաբերմունք բնության հանդեպ՝ գիտակցելով մարդու, Երկիր մոլորակի և տիեզերքի անբակտելի կապի կարևորությունը:</p> | <p>մաքուր /էկոլոգիան պահպանելու համընդհանուր կանոններին/օրենքներին:</p> | <p>Ցուցաբերել հետաքրքրություն բնապահպանական գլոբալ խնդիրների, դրանց պատճառների և լուծման ուղիների հանդեպ:</p> <p>ՕԼ11-Մ-Հ/Ն.5 Դրսևորել հետաքրքրություն համաշխարհային և հայոց պատմության նշանակալի իրադարձությունների/դեմքերի նկատմամբ:</p> <p>ՕԼ11-Մ-Հ/Ն.6 Ցուցաբերել հետաքրքրություն գիտության և գիտատեխնիկական առաջընթացի նկատմամբ:</p> |
| <p>XII</p> | <p>ՕԼ12-Մ-Ա.1 Կարևորել թարգմանության դերը որպես միջմշակութային հաղորդակցության միջոց և ազգային մշակույթի տարր:</p> <p>ՕԼ12-Մ-Ա.2 Կարևորել հին քաղաքակրթությունների արժեհամակարգերը որպես նոր</p> | <p>ՕԼ12-Մ-Վ.1 Ցուցաբերել հետաքրքրություն և հարգանք այլ քաղաքակրթությունների նկատմամբ:</p> <p>ՕԼ12-Մ-Վ.2 Ցուցաբերել հետաքրքրություն թարգմանության հանդեպ՝ որպես միջմշակութային հաղորդակցության միջոց և ազգային մշակույթի տարր:</p> | <p>ՕԼ12-Մ-Ն.1 Ճանաչել հին և ժամանակակից քաղաքակրթություններում ընդունված հասարակական նորմերը, դրանց առանձնահատկությունները և զարգացումը:</p> <p>ՕԼ12-Մ-Ն.2 Ճանաչել կամավորական աշխատանքի սկզբունքներն</p> | <p>ՕԼ12-Մ-Հ/Ն.1 Ցուցաբերել հետաքրքրություն տարբեր քաղաքակրթությունների (ազգային ծեսեր, սովորույթներ, ավանդույթներ) նկատմամբ:</p> <p>ՕԼ12-Մ-Հ/Ն.2 Ցուցաբերել հետաքրքրություն կամավորական աշխատանքի</p> |

| | | | | |
|--|---|--|---|---|
| | <p>քաղաքակրթությունների ձևավորման հենք:</p> | <p>ՕԼ12-Մ-Վ.3 Դրսևորել հարգալից վերաբերմունք այլ կրոնների նկատմամբ՝ որպես մշակույթի մի բաղադրիչ մաս:</p> <p>ՕԼ12-Մ-Վ.4 Դրսևորել գիտակցական վերաբերմունք կամավորական աշխատանքի նկատմամբ՝ որպես սոցիալական պատասխանատվությունն անհատի ինքնաճանաչման դրսևորում՝ ի շահ հասարակության:</p> <p>ՕԼ12-Մ-Վ.5 Դրսևորել պատասխանատու վերաբերմունք անցյալի ձախողումների, ներկայի քայլերի նկատմամբ՝ որպես ապագայի հաջողության գրավական:</p> | <p>ու առանձնահատկությունները և առաջնորդվել դրանցով կամավորություն անելիս:</p> <p>ՕԼ12-Մ-Ն.3 Հատկորոշել հաջողության հասնելու սկզբունքներն ու որակները՝ հետագա քայլերի հաջորդականությունը որոշելիս:</p> | <p>հանդեպ:</p> <p>ՕԼ12-Մ-Հ/Ն.3 Դրսևորել հետաքրքրություն ապագայի և հաջողության հասնելու ուղիների նկատմամբ:</p> |
|--|---|--|---|---|

| Քննական և ստեղծարար միտք | | | | |
|--------------------------|-----------------------------------|--|----------------|-------------|
| Դասարաններ | Միտք | Տրամաբանական կապեր | Վերլուծություն | Առաջընթաց |
| II | ՕԼ2-ՔՍՄ-Մ.1 Ձևակերպել իր մասին | ՕԼ2-ՔՍՄ-S.1 Կազմել շատ պարզ հարցեր: | ՕԼ2-ՔՍՄ-Վ.1 | ՕԼ2-ՔՍՄ-Ա.1 |

| | | | | |
|-----|--|---|---|--|
| | <p>տրված շատ պարզ հարցի պատասխանը: OL2-ՔՄՄ-Մ.2 Ներկայացնել իր մտքերը իր պատրաստած տեսողական նյութերի միջոցով:</p> | | <p>Գրանցել դիտումների արդյունքները:</p> | <p>Արձագանքել ուսուցչի պարզ հրահանգներին:</p> |
| III | <p>OL3-ՔՄՄ-Մ.1 Ձևակերպել շատ պարզ հարցեր և պատասխաններ կոնկրետ թեմայի շուրջ: OL3-ՔՄՄ-Մ.2 Ներկայացնել իր մտքերը խոսքային և տեսողական նյութերի միջոցով:</p> | <p>OL3-ՔՄՄ-S.1 Տարանջատել ընդհանուրն ու մասնավորը, սեռը և տեսակը: OL3-ՔՄՄ-S.2 Դասավորել մտքերը միմյանց հետ կապակցվածությամբ: OL3-ՔՄՄ-S.3 Ճանաչել իր առջև դրված պարզ խնդիրը:</p> | <p>OL3-ՔՄՄ-Վ.1 Նկարագրել դիտումների միջոցով երևույթների/իրերի առանձնահատուկ հատկանիշները:</p> | <p>OL2-ՔՄՄ-Ա.1 Պլանավորել և կատարել առաջադրանք զույգերով:</p> |
| IV | <p>OL4-ՔՄՄ-Մ.1 Արտահայտել կապակցված մտքեր տրված թեմայի շուրջ: OL4-ՔՄՄ-Մ.2 Մտքերն արտահայտելիս բերել պարզ հիմնավորումներ: OL4-ՔՄՄ-Մ.3 Օգտագործել տարբեր ոչ-խոսքային միջոցներ արդյունավետ</p> | <p>OL4-ՔՄՄ-S.1 Ճանաչել իր լսած/կարդացած նյութում մտքերի հաջորդականությունը և դրանց միջև կապերի տեսակները: OL4-ՔՄՄ-S.3 Դասավորել մտքերը միմյանց հետ փոխկապակցվածությամբ (ընդհանուր/մասնավորը, պատճառ/հետևանք) ճիշտ լեզվական միջոցների</p> | <p>OL4-ՔՄՄ-Վ.1 Խմբավորել շրջապատի երևույթները/իրերը ըստ դասերի: OL4-ՔՄՄ-Վ.2 Նշել երևույթների/իրերի նմանություններն ու տարբերությունները:</p> | <p>OL3-ՔՄՄ-Ա.1 Հասկանալ իր առջև դրված խնդիրները: OL3-ՔՄՄ-Ա.2 Բերել պարզ հիմնավորումներ, մտքեր և մեկնաբանել դրանք:</p> |

| | | | | |
|----|---|--|---|--|
| | հաղորդակցություն ապահովելու համար: | կիրառմամբ: ՕԼ4-ՔՄՄ-Տ.4 Հասկանալ իր առջև դրված պարզ խնդիրը՝ առաջարկելով հաջորդական քայլեր այն լուծելու համար: | | |
| V | ՕԼ5-ՔՄՄ-Մ.1 Պատասխանել տրված հարցերին՝ արտահայտելով և հիմնավորելով իր կարծիքը: ՕԼ5-ՔՄՄ-Մ.2 Մշակել տարբեր նյութեր (նամակ, բացիկ, պաստառ և այլն) իր կարծիքը արդյունավետ և հիմնավոր ներկայացնելու համար: | ՕԼ5-ՔՄՄ-Տ.1 Համեմատել սեփական գործողություններն/արարքներն այլոց գործողությունների հետ, ՕԼ5-ՔՄՄ-Տ.2 Կապակցել մտքերը՝ ընդհանուրից մասնավորը անցումներով: ՕԼ5-ՔՄՄ-Տ.3 Առաջարկել տրված թեմայի շրջանակում խնդրի լուծման պարզ տարբերակներ: | ՕԼ5-ՔՄՄ-Վ.1 Դասակարգել թեմայի շուրջ ստացված տեղեկությունները: ՕԼ5-ՔՄՄ-Վ.2 Համեմատել իրերը/երևույթները/հասկա ցությունները՝ վեր հանելով ընդհանրություններն ու տարբերությունները: | ՕԼ5-ՔՄՄ-Ա.1 Գտնել տրված թեմայի շուրջ՝ խնդիրների պատասխանները՝ հետևելով հրահանգներին/ցուցումներին: ՕԼ5-ՔՄՄ-Ա.2 Ներկայացնել տեղեկությունը ծանոթ իրավիճակներում դերախաղի, երկխոսության, կարճ ելույթի միջոցով |
| VI | ՕԼ6-ՔՄՄ-Մ.1 Առաջադրել նոր մտքեր և գաղափարներ տրված թեմաների շրջանակում: ՕԼ6-ՔՄՄ-Մ.2 Պաշտպանել իր առաջադրած տեսակետը՝ | ՕԼ6-ՔՄՄ-Տ.1 Բացատրել սեփական և այլոց արարքների/ գործողությունների առավելավելություններն ու թերությունները: ՕԼ6-ՔՄՄ-Տ.2 Արտահայտել համաձայնություն | ՕԼ6-ՔՄՄ-Վ.1 Բացատրել տրված խնդրի բուն էությունը: ՕԼ6-ՔՄՄ-Վ.2 Համեմատել հավաքված տվյալները: | ՕԼ6-ՔՄՄ-Ա.1 Մշակել քայլեր տրված թեմայի շուրջ հարցերի պատասխանները գտնելու համար: ՕԼ6-ՔՄՄ-Ա.2 Պատրաստել տրված թեմայի |

| | | | | |
|------|---|--|---|--|
| | <p>բերելով օրինակներ: ՕԼ6-ՔՍՄ-Մ.3 Ստեղծել սահիկաշար՝ օգտվելով տարբեր աղբյուրներից:</p> | <p>կամ անհամաձայնություն՝ համեմատական և պատճառահետևանքային կապերի կիրառմամբ: ՕԼ6-ՔՍՄ-S.3 Առաջարկել խնդրի լուծման տարբերակներ՝ համեմատելով դրանք միմյանց հետ:</p> | | <p>շրջանակում դերախաղ, երկխոսություն, կարճ ելույթ՝ արտահայտելով սեփական կարծիքը</p> |
| VII | <p>ՕԼ7-ՔՍՄ-Մ.1 Առաջարկել նոր մտքեր, գաղափարներ և մոտեցումներ իրեն ծանոթ, քննարկվող թեմաների վերաբերյալ: ՕԼ7-ՔՍՄ-Մ.2 Ամփոփել իրեն ծանոթ, քննարկվող թեմաների շուրջ իր և ուրիշների առաջադրած մտքերն ու գաղափարները: ՕԼ7-ՔՍՄ-Մ.3 Ստեղծել նախագծի պլան:</p> | <p>ՕԼ7-ՔՍՄ-S.1 Անել ենթադրություններ և եզրահանգումներ առկա տվյալների հիման վրա: ՕԼ7-ՔՍՄ-S.2 Գնահատել տարբեր իրավիճակներ՝ համադրելով դրանց բնորոշ հատկանիշները: ՕԼ7-ՔՍՄ-S.3 Առաջարկել խնդիրների լուծման առավել արդյունավետ մոտեցում՝ հիմնավորելով դրա ընտրությունը:</p> | <p>ՕԼ7-ՔՍՄ-Վ.1 Բացահայտել խնդիրների առաջացման պատճառները: ՕԼ7-ՔՍՄ-Վ.2 Համեմատել/համադրել մի քանի աղբյուրներից ստացված տեղեկությունները:</p> | <p>ՕԼ7-ՔՍՄ-Ա.1 Ձեռնարկել քայլեր տրված առաջադրանքի լուծման համար՝ հիմնավորելով իր մոտեցումները ՕԼ7-ՔՍՄ-Ա.2 Ստեղծել տրված թեմայի շրջանակում երկխոսություն, հարցազրույց, ելույթ, և այլն՝ բերելով համոզիչ փաստարկներ</p> |
| VIII | <p>ՕԼ8-ՔՍՄ-Մ.1 Ներկայացնել իրեն հուզող խնդիրները և առաջարկել լուծումներ:</p> | <p>ՕԼ8-ՔՍՄ-S.1 Արտահայտել մտքերը՝ ներկայացնելով հավաստի աղբյուրներից վերցված փաստեր, դրանց հիման վրա կատարելով</p> | <p>ՕԼ8-ՔՍՄ-Վ.1 Անել դատողություններ և եզրակացություններ խնդրի իրական պատճառների մասին՝ առաջադրելով</p> | <p>ՕԼ8-ՔՍՄ-Ա.1 Ներկայացնել տեղեկատվությունը՝ հիմնավորելով դիտարկված արդյունքների տարբեր</p> |

| | | | | |
|----|---|---|---|---|
| | <p>OL8-ՔՍՄ-Մ.2</p> <p>Պլանավորել հետազոտական աշխատանքներ՝ արդյունքները ներկայացնելով տարբեր միջոցներով:</p> <p>OL8-ՔՍՄ-Մ.3</p> <p>Մշակել թեմատիկ նախագծերի կամ միջոցառումների պլան:</p> | <p>դատողություններ և եզրահանգումներ:</p> <p>OL8-ՔՍՄ-S.2</p> <p>Գնահատել տարբեր իրադրություններ/փոխհարաբերությունները՝ հիմնավորելով իր գնահատականը:</p> <p>OL8-ՔՍՄ-S.3</p> <p>Ձևակերպել նպատակներ՝ մշակելով դրանց հասնելու արդյունավետ ուղիները:</p> | <p>լուծում(ներ):</p> <p>OL8-ՔՍՄ-Վ.2</p> <p>Համադրել այլ տեսակետներ՝ ներկայացնելով սեփական մոտեցումը:</p> | <p>մեկնաբանությունները:</p> <p>OL8-ՔՍՄ-Ա.2</p> <p>Ճանաչել խնդրի լուծման այլընտրանքային տարբերակների հնարավորությունը:</p> <p>OL8-ՔՍՄ-Ա.3</p> <p>Մովորել սեփական սխալներից՝ գործողությունների ընթացքի համար այլ մոտեցումներ ընտրելով:</p> |
| IX | <p>OL9-ՔՍՄ-Մ.1</p> <p>Առաջարկել նոր մտքեր՝ հիմնվելով նախնական գիտելիքի վրա:</p> <p>OL9-ՔՍՄ-Մ.2</p> <p>Արտահայտել կարծիք՝ հիմնավորելով և բացատրելով իր մոտեցումները, տալով համաձայնություն և անհամաձայնություն:</p> <p>OL9-ՔՍՄ-Մ.3</p> <p>Դրսևորել ստեղծագործ մոտեցում իր տեսակետներն ու գաղափարներն արտահայտելիս:</p> | <p>OL9-ՔՍՄ-S.1</p> <p>Կառուցել մտքերը կուռ տրամաբանությամբ՝ կիրառելով համեմատություններ, համադրություններ, փաստարկներ, ընդհանրացումներ:</p> <p>OL9-ՔՍՄ-S.2</p> <p>Բացատրել սեփական ընտրության և որոշումների դրդապատճառները:</p> | <p>OL9-ՔՍՄ-Վ.1</p> <p>Մեկնաբանել խնդիրները՝ կատարելով մեկնաբանություններ և դատողություններ դրանց հիմքերի և լուծումների հավանական ազդեցության մասին:</p> <p>OL9-ՔՍՄ-Վ.2</p> <p>Մեկնաբանել իր որոշումները՝ հղում անելով դրանց կայացման նախապայմաններին:</p> | <p>OL9-ՔՍՄ-Ա.1</p> <p>Գնահատել իր աճը որպես սովորող՝ հետահայաց վերլուծելով իր գիտելիքների և կարողությունների զարգացումը:</p> <p>OL9-ՔՍՄ-Ա.2</p> <p>Գնահատել սեփական գործողություններում նախորդ ձեռքբերումների վրա հիմնվելու և սխալներից դասեր քաղելու կարևորությունը:</p> |

| | | | | |
|-----------------|--|--|---|---|
| <p>X</p> | <p>OL10-ՔՍՄ-Մ.1 Արտահայտել իր տեսակետը՝ անդրադառնալով այլոց կարծիքների առավելություններին ու թերություններին և կատարելով եզրահանգումներ, OL10-ՔՍՄ-Մ.2 Առաջարկել գոյություն ունեցող խնդիրների, այդ թվում՝ կոնֆլիկտների, լուծման նոր եղանակներ՝ հիմնավորելով իր մոտեցումը: OL10-ՔՍՄ-Մ.3 Ստեղծել օտարալեզու մուլտիմեդիոն՝ բովանդակություն՝ պատշաճ հղումներ տալով բովանդակության սկզբնաղբյուրներին,</p> | <p>OL10-ՔՍՄ-S.1 Վեր հանել տարբեր ժանրերի տեքստերում ներկայացված փաստերը, կարծիքը, պատճառահետևանքային կապերը: OL10-ՔՍՄ-S.2 Հիմնավորել սեփական որոշումները՝ կանխատեսելով դրանց հավանական հետևանքները: OL10-ՔՍՄ-S.3 Գնահատել որևէ խնդրի անդրադարձող տարբեր վարկածները՝ ընդգծելով դրանց ուժեղ և թույլ կողմերը, այս կամ այն վարկածին կողմ կամ դեմ լինելու պատճառները:</p> | <p>OL10-ՔՍՄ-Վ.1 Մեկնաբանել գրական և արվեստի գործերի հիմնական ուղերձը՝ նշելով դրանց առանձնահատկությունները: OL10-ՔՍՄ-Վ.2 Համադրել տարբեր աղբյուրներից որոնված, հավաքված և դասակարգված տեղեկույթը: OL10-ՔՍՄ-Վ.3 Հետազոտել հասարակական հնչեղություն ունեցող որևէ հարցի/իրադարձության մասին մեդիա աղբյուրներից քաղված փաստերը և վերլուծությունները՝ ձևակերպելու սեփական դիրքորոշումը: OL10-ՔՍՄ-Վ.4 Հասկանալ տեղեկատվական տեքստերի հիմնական</p> | <p>OL10-ՔՍՄ-Ա.1 Գնահատել արվեստի և գրականության դերը անհատական զարգացման գործում՝ գիտակցելով գեղագիտական արժեքի կարևորությունը: OL10-ՔՍՄ-Ա.2 Դրսևորել միջաձևային կոնֆլիկտի/դրա լուծելիության գիտակցություն՝ խնդրին այլընտրանքային մոտեցումների կիրառման միջոցով: OL10-ՔՍՄ-Ա.3 Ճանաչել իր համայնքի/երկրի հասարակական հնչեղության որևէ խնդրի լուծմանն իր մասնակցության կարևորությունը:</p> |
|-----------------|--|--|---|---|

| | | | | |
|----|--|---|---|--|
| | | | բովանդակությունը՝ առանձնացնելով փաստերը, կարծիքը, պատճառահետևանքային կապերը: | |
| XI | <p>ՕԼ11-ՔՄՄ-Մ.1 Արտահայտել իր տեսակետը՝ հիմնավորելով այն օրինակներով, տարբեր աղբյուրներից քաղված փաստացի տեղեկություններով, ՕԼ11-ՔՄՄ-Մ.2 Ձևակերպել իրեն հուզող տարբեր խնդիրների նորարարական լուծումներ՝ հիմնավորելով իր մոտեցումները, ՕԼ11-ՔՄՄ-Մ.3</p> <p>Պլանավորել հետազոտական նախագիծ՝ կազմելով հետազոտության նյութեր և արդյունքները ներկայացնելով մուլտիմեդիոն</p> | <p>ՕԼ11-ՔՄՄ-Տ.1 Վեր հանել կարևոր մտքերը՝ առանձնացնելով փաստերը կարծիքից, ճանաչելով հեղինակի մտադրությունը: ՕԼ11-ՔՄՄ-Տ.2</p> <p>Հիմնավորել իր մոտեցումներն ու ընտրությունը տարբեր աղբյուրներից քաղված տեղեկություններով և սեփական փաստարկներով,</p> <p>ՕԼ11-ՔՄՄ-Տ.3 Պահպանել մտքերի տրամաբանական կապը, իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը:</p> | <p>ՕԼ11-ՔՄՄ-Վ.1 Հավաքել և համեմատել տեղեկատվություն տարբեր մասնագիտությունների վերաբերյալ: ՕԼ11-ՔՄՄ-Վ.2 Մեկնաբանել իրադարձությունները՝ անդրադառնալով իր տեսակետի ձևավորմանը նպաստող առանցքային մանրամասներին:</p> <p>ՕԼ11-ՔՄՄ-Վ.3 Մեկնաբանել բազմապիսի խնդիրների նախապատմությունը, պատճառները և լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:</p> <p>ՕԼ11-ՔՄՄ-Վ.4 Համադրել տարբեր աղբյուրներից ստացած</p> | <p>ՕԼ11-ՔՄՄ-Ա.1 Հասկանալ ապագա մասնագիտության և աշխատանքի ճիշտ ընտրության կարևորությունը՝ որպես իր ապագյի առաջընթացը գրավական:</p> <p>ՕԼ11-ՔՄՄ-Ա.2 Գնահատել գիտության զարգացման կարևորությունը հասարակության առաջընթացի ապահովման գործում:</p> |

| | | | | |
|------------|---|--|---|--|
| | միջոցներով, | | տեղեկությունները՝ անելով դատողություններ, առաջադրելով վարկածներ և հիմնավորելով իր մոտեցումները: | |
| XII | <p>OL12-ՔՍՄ-Մ.1 Արտահայտել իր տեսակետը բազմապիսի թեմաներով՝ նախապես հավաքված փաստերի հիման վրա ձևակերպելով իր կարծիքը և հիմնավորելով իր մոտեցումները:</p> <p>OL12-ՔՍՄ-Մ.2 Առաջարկել թարգմանության սեփական տարբերակները՝ հիմնավորելով իր մոտեցումները:</p> <p>OL12-ՔՍՄ-Մ.3 Կազմել իր հետագա քայլերի պլանը՝</p> | <p>OL12-ՔՍՄ-S.1 Ճանաչել առաջ քաշված վարկածների և եզրահանգումների, առանձին մանրամասների և մտքերի միջև տրամաբանական կապը՝ գնահատելով դրանց հիմնավորվածությունը: OL12-ՔՍՄ-S.2 Գնահատել իրավիճակները՝ դուրս բերելով խնդիրները, ներկայացնելով խնդրի նախապատմությունը, պատճառները, խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկված և ձեռնարկվելիք քայլերը, դրանց հավանական ազդեցությունը:</p> <p>OL12-ՔՍՄ-S.3 Ձևակերպել իր ապագայի նպակները, ճիշտ ճանաչելով և</p> | <p>OL11-ՔՍՄ-Վ.1 Հավաքել և համեմատել տեղեկատվություն տարբեր մասնագիտությունների վերաբերյալ: OL11-ՔՍՄ-Վ.2 Մեկնաբանել իրադարձությունները՝ անդրադառնալով իր տեսակետի ձևավորմանը նպաստող առանցքային մանրամասներին:</p> <p>OL11-ՔՍՄ-Վ.3 Մեկնաբանել բազմապիսի խնդիրների նախապատմությունը, պատճառները և լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:</p> | <p>OL12-ՔՍՄ-Ա.1 Գիտակցել սեփական ուժերի ճիշտ գնահատման կարևորությունը ապագայում կանխատեսվող քայլերի համար:</p> <p>OL12-ՔՍՄ-Ա.2 Վերլուծել ապագայի իր ծրագրերը, դրանց իրականացմանն ուղղված ձեռնարկվելիք քայլերը:</p> |

| | | | | |
|--|--|--|---|--|
| | հիմնավորելով գործողությունների հաջորդականությունը: | գնահատելով սեփական ուժերն ու հնարավորությունները, դասեր քաղելով ձախողումներից՝ նշելով և հիմնավորելով դժվարությունների հաղթահարման քայլերը: | ՕԼ11-ՔՄՄ-Վ.4 Համադրել տարբեր աղբյուրներից ստացած տեղեկությունները՝ անելով դատողություններ, առաջադրելով վարկածներ և հիմնավորելով իր մոտեցումները: | |
|--|--|--|---|--|

Ինքնություն

| Դասարաններ | Անհատականություն | Ընտանիք | Համայնք | Հասարակություն |
|------------|---|--|--|----------------|
| II | <p>OL2-Ի-Ա.1 Կազմակերպել իր առօրյան որպես աշակերտ:</p> <p>OL2-Ի-Ա.2 Հետևել անհատական հիգիենայի պարզ կանոններին:</p> | <p>OL2-Ի-Ը.1 Դրսևորել հոգատար վերաբերմունք ընտանիքի անդամների նկատմամբ:</p> <p>OL2-Ի-Ը.2 Կիրառել ծանոթության, ողջույնի և հրաժեշտի տարրական արտահայտություններ առօրյա շփումներում:</p> | <p>OL2-Ի-Հ.1 Ճանաչել իրեն որպես համայնքի անդամ:</p> | |
| III | <p>OL3-Ի-Ա.1 Կատարել առօրյա պարտականությունները՝ ժամանակ հատկացնելով դասերին և սիրելի զբաղմունքին/հանգստին:</p> | <p>OL3-Ի-Ը.1 Դրսևորել պատրաստվածություն և հոգատարություն իր տան անդամների, տատիկ-պապիկի և ընտանիքի մյուս անդամների հանդեպ:</p> <p>OL3-Ի-Ը.2 Կիրառել քաղաքավարի հաղորդակցության արտահայտություններ:</p> | <p>OL3-Ի-Հ.1 Ճանաչել նեղ համայնքի իրեն առնչվող առօրյա խնդիրները:</p> | |
| IV | <p>OL4-Ի-Ա.1 Կարևորել նոր հետաքրքրությունների և</p> | <p>OL4-Ի-Ը.1 Դրսևորել հարգալից վերաբերմունք իր</p> | <p>OL4-Ի-Հ.1 Ճանաչել նեղ համայնքի իրեն առնչվող առօրյա խնդիրների</p> | |

| | | | | |
|----|---|--|--|--|
| | <p>շփումների դերը իր զարգացման գործում:</p> | <p>ընտանիքի անդամ հասակակիցների և մեծերի նկատմամբ: ՕԼ4-Ի-Ը.2 Դրսևորել հոգատար վերաբերմունք ընտանիքի անդամների նկատմամբ՝ օգնելով առօրյա գործերում և գնումներում:</p> | <p>պատճառները:</p> | |
| V | <p>ՕԼ5-Ի-Ա.1 Ճանաչել իր հույզերն ու զգացողությունները՝ արտահայտելով դրանք: ՕԼ5-Ի-Ա.2 Գնահատել իր վարքը՝ ճանաչելով իր ձեռքբերումներն ու սխալները:</p> | <p>ՕԼ5-Ի-Ը.1 Կարևորել ընտանեկան ժամանցը՝ օրվա ընթացքում ընտանիքի հետ անցկացնելով իր ժամանակի մի մասը: ՕԼ5-Ի-Ը.2 Կարևորել իր դերը՝ որպես ընտանիքի անդամ, ճանաչելով իր իրավունքներն ու պարտականությունները:</p> | <p>ՕԼ5-Ի-Հ.1 Դրսևորել հարգալից վերաբերմունք համայնքի անդամների հանդեպ: ՕԼ5-Ի-Հ.2 Առաջարկել քայլեր իր նեղ համայնքի որոշ խնդիրների լուծման համար:</p> | <p>ՕԼ5-Ի-ՀԱ.1 Գիտակցել իր՝ հասարակության մի մասնիկ լինելը:</p> |
| VI | <p>ՕԼ6-Ի-Ա.1 Կարևորել սեփական կարծիքով հանդես գալը: ՕԼ6-Ի-Ա.2 Կառավարել հուզմունքը տարբեր իրավիճակներում,</p> | <p>ՕԼ6-Ի-Ը.1 Կարևորել ընտանեկան ժամանցը, ընտանեկան սովորույթները՝ միասին նշելով ընտանեկան տոները:</p> | <p>ՕԼ6-Ի-Հ.1 Պահպանել համակեցության պարզ կանոնները համայնքում: ՕԼ6-Ի-Հ.2 Կարևորել իր և իր ընտանիքի դերը համայնքում և համայնքային</p> | <p>ՕԼ6-Ի-ՀԱ.1 Արժևորել մշակութային և լեզվական բազմազանությունը հասարակության մեջ:</p> |

| | | | | |
|------|--|--|--|--|
| | այդ թվում՝ սխալներ թույլ տալիս, քննադատություն լսելիս: | ՕԼ6-Ի-Ը.2 Արժևորել ընտանեկան ջերմ փոխհարաբերությունները : | խնդիրներին արձագանքելու գործում: | |
| VII | ՕԼ7-Ի-Ա.1 Դրսևորել զսպվածությունն դպրոցական և համադպրոցական մրցումների ժամանակ հաղթելիս կամ պարտվելիս: ՕԼ7-Ի-Ա.2 Հաղթահարել տարբեր դժվարությունները դրսևորելով կամքի ուժ: | ՕԼ7-Ի-Ը.1 Ճանաչել ընտանիքը որպես հասարակության մի մասնիկ: ՕԼ7-Ի-Ը.2 Արժևորել ընտանիքում առողջ ապրելակերպի անհրաժեշտությունը: | ՕԼ7-Ի-Հ.1 Շփվել քաղաքավարի և հարգալից համայնքում իր հասակակիցների, տարեցների, ծանոթների և անծանոթների հետ: ՕԼ7-Ի-Հ.2 Կարևորել իր և իր ընտանիքի դերը համայնքային խնդիրների համար լուծումներ առաջարկելու և դրանք իրագործելու հարցում: | ՕԼ7-Ի-ՀԱ.1 Կարևորել հասարակության մեջ խտրականության բացառման, հավասար հնարավորությունների և ապրումակցման անհրաժեշտությունը: |
| VIII | ՕԼ8-Ի-Ա.1 Դրսևորել ինքնատիրապետում և առողջ ինքնաքննադատություն բանավեճերի և քննարկումների ժամանակ: ՕԼ8-Ի-Ա.2 Կարևորել սեփական հնարավորությունները համարժեք գնահատելու կարողությունը: | ՕԼ8-Ի-Ը.1 Կրել պատասխանատվություն ընտանիքի անդամների և ընտանեկան գործերի համար: ՕԼ8-Ի-Ը.2 Արժևորել ընտանիքի անդամների հետ սեփական ձեռքբերումների և խնդիրների շուրջ քննարկումները: | ՕԼ8-Ի-Հ.1 Կարևորել համայնքի անդամների հավասար հնարավորությունները, իրավունքներն ու պարտականությունները: ՕԼ8-Ի-Հ.2 Կարևորել սեփական համայնքը այլոց համար գրավիչ դարձնելու անհրաժեշտությունը: | ՕԼ8-Ի-ՀԱ.1 Կարևորել հասարակությունում մարդու բարձրագույն արժեք լինելու գաղափարը: |

| | | | | |
|----|---|--|---|--|
| IX | <p>OL9-Ի-Ա.1 Դրսևորել ժամանակը արդյունավետ կառավարելու և ինքնուրույն սովորելու կարողություն:</p> <p>OL9-Ի-Ա.2 Կայացնել ինքնուրույն որոշումներ՝ գիտակցելով իր ուժեղ և թույլ կողմերը:</p> | <p>OL9-Ի-Ը.1 Կարևորել խոսքի և ընտրության ազատությունը ընտանիքում՝ հաշվի առնելով ընտանիքի անդամների կարծիքը, խորհուրդը:</p> | <p>OL9-Ի-Հ.1 Գործել որպես համայնքի անդամ՝ հետևելով օրենքներին, կարգ ու կանոնին</p> <p>OL9-Ի-Հ.2 Ներդրում ունենալ համայնքի զարգացմանն ուղղված գործողություններում:</p> | <p>OL9-Ի-ՀԱ.1 Դրսևորել քաղաքացիական գիտակցություն՝ կարևորելով օրենքի գերակայությունը ժողովրդավարության ամրապնդման գործում:</p> |
| X | <p>OL10-Ի-Ա.1 Գիտակցել իր մասնագիտական հակումները և նախասիրությունները՝ գնահատելով իր կարողությունները:</p> <p>OL10-Ի-Ա.2 Սովորել ինքնուրույն՝ կազմակերպելով իր ուսումնառության գործընթացը, պլանավորելով նախագծեր, համագործակցային աշխատանքներ:</p> | <p>OL10-Ի-Ը.1 Գիտակցել սեփական դերակատարությունը ընտանեկան առողջ փոխհարաբերությունների համար:</p> | <p>OL10-Ի-Հ.1 Ճանաչել համայնքի մասնակցային կառավարման սկզբունքները:</p> <p>OL10-Ի-Հ.2 Որոշել համայնքի զարգացմանը խոչընդոտող առաջնահերթ խնդիրները:</p> | <p>OL10-Ի-ՀԱ.1 Ճանաչել հասարակության մեջ ի հայտ եկող տարբեր կոնֆլիկտների լուծման հնարավոր եղակները:</p> |

| | | | | |
|-------------------|---|--|--|---|
| <p>XI</p> | <p>ՕԼ11-Ի-Ա.1 Կայացնել ինքնուրույն որոշում մասնագիտության ընտրության մեջ ճիշտ գնահատելով սեփական ուժերը: ՕԼ11-Ի-Ա.2 Համագործակցել թիմակիցների հետ՝ ստանձնելով տարբեր դերեր:</p> | <p>ՕԼ11-Ի-Ը.1 Կարևորել ընտանիքի առաջադիմությունը որպես հասարակության առաջադիմության գրավական:</p> | <p>ՕԼ11-Ի-Հ.1 Ցուցաբերել ակտիվ մասնակցություն/գործունեություն իր տարբեր, այդ թվում՝ բնապահպանական խնդիրների լուծման, պատմամշակութային արժեքների պահպանման գործում: ՕԼ11-Ի-Հ.2 Վերլուծել իր համայնքի զարգացմանը խոչընդոտող առաջնահերթ խնդիրների պատճառները, այդ թվում՝ քաղաքական իրողությունների համատեքստում:</p> | <p>ՕԼ11-Ի-ՀԱ.1 Կարևորել քաղաքականությունը որպես հասարակական կյանքի անհրաժեշտ բաղադրիչ: ՕԼ11-Ի-ՀԱ.2 Գիտակցել իր նախընտրած մասնագիտության կարևորությունը հասարակական կյանքի բարելավման /հասարակության զարգացման գործում:</p> |
| <p>XII</p> | <p>ՕԼ12-Ի-Ա.1 Կարևորել հաջողության հասնելու համար սեփական ուժերն ու հնարավորությունները ճիշտ ճանաչելն և գնահատելը: ՕԼ12-Ի-Ա.2 Կարևորել կամավորական աշխատանքի դերը որպես անհատի ինքնաճանաչման դրսևորում: ՕԼ12-Ի-Ա.3 Կարևորել շարունակական կրթությունը՝ որպես անձի զարգացման նախապայման:</p> | <p>ՕԼ12-Ի-Ը.1 Կարևորել ընտանիքի աջակցության դերը ապագայի ծրագրերն իրականացնելու և հաջողության հասնելու համար:</p> | <p>ՕԼ12-Ի-Հ.1 Ծավալել համայնքի զարգացմանն ուղղված կամավորական գործունեություն: ՕԼ12-Ի-Հ.1 Առաջարկել իր համայնքի զարգացմանը խոչընդոտող առաջնահերթ խնդիրների լուծումներ՝ հիմնավորելով դրանք:</p> | <p>ՕԼ12-Ի-ՀԱ.1 Դրսևորել բարձր քաղաքացիական գիտակցություն՝ որպես հասարակական և քաղաքական կյանքի լիարժեք մասնակից:</p> |

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՒԿԸ ԸՍՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

| | |
|--|--|
| Թեմա 1 | |
| Բարի գալուստ: Ո՞վ եմ ես (12 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել առօրյա շփումներում ծանոթության, ողջույնի և հրաժեշտի տարրական արտահայտություններ: • Ծանոթացնել աշակերտներին ուսուցչի՝ օտար լեզվով հնչող պարզ խոսքին ու հրահանգներին: • Զարգացնել ծանոթության, ողջույնի և հրաժեշտի տարրական արտահայտությունները համատեքստում կիրառելու հմտություն: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմատիկ շրջանակում հաճախակի օգտագործվող բառապաշար, • Ըստ նմուշ-օրինակի շատ պարզ նախադասությունների կազմությունը, | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Հասկանալ ուսուցչի և դասընկերների կողմից արտաբերված ողջույնի և հրաժեշտի արտահայտությունները, • Հասկանալ շատ պարզ արտահայտություններով ինչ-որ մեկին ներկայացնող բանավոր խոսքը (մենախոսություն/երկխոսություն), • Ծանոթանալ՝ ներկայացնելով իրեն, • Ըստ հաղորդակցական անհրաժեշտության՝ կիրառել ողջույնի ու հրաժեշտի արտահայտություններ և քաղաքավարի դիմելաձևեր, • Արձագանքել ուսուցչի պարզ հրահանգներին: |

| Բովանդակություն | |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Բարև, դպրոց.. 2. Արի ծանոթանանք 3. Ողջույնի, հրաժեշտի արտահայտություններ և քաղաքավարի դիմելաձևեր | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ (ծանոթություն) • Փոքրիկ բանաստեղծություններ, խաղեր, երգեր: | <p>Անհատներ և հարաբերություններ (մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, շրջապատում, համայնքում)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի լեզու, Կերպարվեստ, Երգ | |
| Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| S 2, S 22, S 29 | |

Թեմա 2

Ես աշակերտ եմ (12 ժամ)

Նպատակ

Ներմուծել օտար լեզվի՝

- մի շարք տառեր և հնչյուններ (ոչ ավելի քան 10),
- դասարանում առկա պարագաներն անվանող բառապաշար,
- պարզ նախադասություն կազմելու համար անհրաժեշտ կառույցներ և համապատասխան քերականական նյութ,

Ծանոթացնել վանկերից բառեր և բառակապակցություններ կազմելու հնարներին:
Ամրապնդել օտար լեզվով հնչող պարզ հրահանգների ընկալումը:
Ձևավորել դասարանի և դպրոցական պարագաների նկատմամբ խնամքով վերաբերմունք:

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Ուսուցանված տառերի գրությունը, դրանց հնչյունային արտաբերման տարբերակները/օրինաչափությունները,
- Դասի ընթացքում հնչող հրահանգների նշանակությունը,
- Դասարանում իրեն շրջապատող իրերի և առարկաների անվանումները:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Գրել ուսուցանված տառերը և արտաբերել հնչյունները ըստ լեզվի կանոնների և օրինաչափությունների:
- Կարդալ պարզ տառակապակցություններ, բառեր և շատ պարզ նախադասություններ:
- Արձագանքել ուսուցչի շատ դանդաղ, պարզ խոսքին/հրահանգներին:
- Նկարագրել դասարանը, դասարանական պարագաները և դասամիջոցի խաղերը շատ պարզ բառապաշարով,

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Մաքուր պահել դասասենյակը և չփչացնել դասարանի գույքը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Մեր դասարանը 2. Դասի ժամանակ (հրահանգներ) 3. Ի՞նչ ենք մենք անում դասամիջոցին (խաղեր, դասընկերներ) | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դասարանի նկար/պաստառ (Ես հոգատար եմ) • Դասարանի շատ պարզ նկարագրություն • Դերախաղ • Դպրոցական առօրյայի մասին փոքրիկ • բանաստեղծություններ, խաղեր, երգեր: | <p>Արդարություն և զարգացում</p> <p>(Կրթության իրավունք և հավասար հնարավորություններ)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Կերպարվեստ, Երգ, Ես և շրջակա աշխարհը | |
| Կապը հանրակրթության չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| S 2, S 23, S 25, S 29 | |

Թեմա 3

Ընտանիք (12 ժամ)

Նպատակ

Ներմուծել օտար լեզվի՝

- մի շարք տառեր և հնչյուններ (ոչ ավելի քան 10),
- ընտանիքի անդամները անվանող բառապաշար,
- պարզ նախադասություն կազմելու համար անհրաժեշտ կառույցներ,
- համապատասխան քերականական նյութ:

Ծանոթացնել վանկերից բառեր և բառակապակցություններ կազմելու հնարներին:
Զարգացնել շատ պարզ լեզվական միջոցներով ընտանիքը և առօրյան ներկայացնելու հմտություններ:
Խթանել ընտանիքի անդամների նկատմամբ հոգատար և հարգալից վերաբերմունքը:

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Ուսուցանված տառերի գրությունը, դրանց հնչյունային արտաբերման տարբերակները/օրինաչափությունները:
- Ընտանիքի անդամների անվանումները, ընտանեական առօրյան նկարագրող բառեր և արտահայտություններ, թվականներ, քերականական կառույցները/կաղապարները:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Հասկանալ ընտանիք թեմայով հնչող շատ պարզ և կարճ խոսքը,
- Կարդալ պարզ տառակապակցություններ, շատ պարզ բառեր և նախադասություններ,
- Ներկայացնել իր ընտանիքի անդամներին շատ պարզ նախադասություններով,
- Գրել ուսուցանված տառերը, ընտանիքի անդամների անվանումները,

| | |
|---|---|
| | <ul style="list-style-type: none"> • Ընտանիք և ընտանեկան առօրյա թեմայով տալ շատ պարզ հարցեր և պատասխանել իրեն ուղղված հարցերին: • Դրսևորել հոգատար և հարգալից վերաբերմունք ընտանիքի անդամների նկատմամբ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Ընտանիքի անդամներ 2. Մեր ընտանիքի առօրյան | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Երկխոսություն • Իմ ընտանիքը պաստառի պատրաստում • Աշխատանք նկարով (պատմել, նկարագրել և այլն) • Ընտանեկան առօրյայի մասին փոքրիկ բանաստեղծություններ, խաղեր, երգեր: | Համակարգեր և մոդելներ (Ընտանիքը որպես հասարակության բջիջ/մոդել) |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Մաթեմատիկա, Կերպարվեստ, Երգ, Ես և շրջակա աշխարհը | |
| Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| S2, S 22, S 30 | |

Թեմա 4

Մարմնի մասեր (12 ժամ)

Նպատակ

Ներմուծել օտար լեզվի՝

- մի շարք տառեր և հնչյուններ (ոչ ավելի քան 10),
- մարմնի մասերն անվանող բառապաշար,
- նկարագրական բառապաշար,
- պարզ նախադասություն կազմելու համար անհրաժեշտ կառույցներ,
- համապատասխան քերականական նյութ:

Ծանոթացնել վանկերից բառեր և բառակապակցություններ կազմելու հնարներին:
Զարգացնել շատ պարզ լեզվական միջոցներով արտաքինը նկարագրելու հմտություններ:
Ընդգծել հիգիենայի պարզագույն կանոնների կարևորությունը:

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- ուսուցանված տառերը, դրանց հնչյունային տարբերակները, արտասանական օրինաչափությունները:
- մարդու մարմնի մասերը,
- գույներ և պարզ հատկանիշներ անվանող բառեր,
- քերականական կառույցները/կաղապարները:
- հիգիենայի պարզագույն կանոնները:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Հասկանալ արտաքինը նկարագրող շատ պարզ և կարճ խոսքը,
- Կարողալ շատ պարզ բառերով և նախադասություններով կարճ արտաքինի նկարագրական տեքստեր,
- Շատ պարզ նախադասություններով նկարագրել իր/իր ընկերոջ/իր ընտանիքի անդամներին,
- Գրել շատ պարզ նկարագրական արտահայտություններ:

| | |
|---|--|
| | <ul style="list-style-type: none"> • Պահպանել հիգիենայի պարզագույն կանոնները: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Մարդու մարմնի մասերը 2. Արտաքին տեսքի նկարագրություն 3. Հիգիենայի պարզագույն կանոնները | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Մենախոսություն/ներկայացում • Նկարչություն • Աշխատանք քարտերով և նկարներով • Հիգիենայի կանոնների բեմադրում • Հիգիենայի կանոնների պաստառ՝ խմբային նախագիծ | Կառուցվածք և գործառույթ (Մարդու մարմնի կառուցվածքը և խնամքը) |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Ես և շրջակա աշխարհը, Կերպարվեստ | |
| Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| S 2, S 22, S 30, S 36 | |

Թեմա 5

Նախասիրություններ (12 ժամ)

Նպատակ

Ներմուծել օտար լեզվի՝

- մի շարք տառեր և հնչյուններ (ոչ ավելի քան 10),
- թեմատիկ բառապաշար (նախասիրություններ, ժամանակ ցույց տվող և այլն),
- պարզ նախադասություն կազմելու համար անհրաժեշտ կառույցներ,
- համապատասխան քերականական նյութ:

Զարգացնել շատ պարզ լեզվական միջոցներով սեփական և այլոց նախասիրությունները ներկայացնելու հմտություններ:
Ընդգծել նախասիրությունների կարևորությունը՝ որպես անձի զարգացման միջոց:

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- ուսուցանված տառերը, դրանց հնչյունային տարբերակները, արտասանական օրինաչափությունները,
- նախասիրությունների տարբեր տեսակները, դրանց անվանումները,
- ժամանցային գործողությունների անվանումները,
- անհրաժեշտ քերականական կառույցները/կաղապարները:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Հասկանալ նախասիրությունների մասին շատ պարզ և կարճ երկխոսություն կամ մենախոսություն,
- Կարդալ և հասկանալ շատ պարզ բառերով և նախադասություններով կազմված տեքստեր նախասիրությունների մասին,
- Շատ պարզ բառերով և նախադասություններով ներկայացնել իր նախասիրությունները,
- Գրել շատ պարզ բառեր և արտահայտություններ նախասիրությունների մասին,

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Շատ կարճ նախադասություններով գրուցել իր և խոսակցի նախասիրությունների/սիրած զբաղմունքի մասին: • Ունենալ մտավոր և/կամ ֆիզիկական կարողությունները զարգացնող նախասիրություններ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Հանգստի ժամին 2. Ինչ եմ սիրում | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Մենախոսություն/Ներկայացում • Դերախաղ • Երկխոսություն • Մնջախաղային վիկտորինա • Ցուցադրություն • Պաստառ՝ Իմ սիրելի ժամանցի ձևը | <p>Անհատական և մշակութային արտահայտում (նախասիրությունները որպես մտավոր (ստեղծարարության) և ֆիզիկական զարգացման գրավական)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| <p>Մայրենի, Ես և շրջակա աշխարհը, Կերպարվեստ, Տեխնոլոգիա, Երգ, Ֆիզկուլտուրա</p> | |
| Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |

Երրորդ դասարան

| | |
|--|--|
| Թեմա 1 | |
| Ես և իմ ընկերները (12 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ընդլայնել ընկերներին, ընկերությանը, ծանոթությանը վերաբերող թեմատիկ բառապաշարը: • Ներմուծել և ամրապնդել իրեն, իր ընկերներին ներկայացնող շատ պարզ և կարճ արտահայտություններ: • Ջարգացնել պարզ բառերով և կարճ նախադասություններով իրեն և իր ընկերներին ներկայացնելու և ծանոթություն հաստատելու հմտություն: • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութ: • Ձևավորել վերաբերմունք ընկերության ու ընկերասիրության կարևորության հանդեպ: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • անհրաժեշտ թեմատիկ բառապաշարը, • տրված քերականական նյութը, • շատ պարզ և կարճ արտահայտություններ ծանոթանալու, իրեն և իր ընկերներին ներկայացնելու, նրանց հարցեր ուղղելու համար | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Հասկանալ ծանոթության, ընկերների մասին հնչող պարզ և կարճ խոսքը, • Կարդալ և հասկանալ շատ պարզ արտահայտություններով ու նախադասություններով կազմված տեքստեր՝ ընկերության/ընկերասիրության, ծանոթության մասին, |

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Շատ պարզ բառերով և կարճ նախադասություններով տեղեկություններ հաղորդել իր, իր դասընկերոջ կամ բակի ընկերոջ մասին, • Կազմել շատ կարճ գրավոր տեքստ իր, իր ընկերների մասին՝ օգտագործելով շատ պարզ արտահայտություններ և նախադասություններ • Պարզ հարցերի և պատասխանների միջոցով ծանոթություն հաստատել: • Արժևորել ընկերությունը ու ընկերասիրությունը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Իմ դասընկերները 2. Ո՞վ է իմ ընկերը 3. Նոր ծանոթություններ/բակում, գրադարանում/ և այլն | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Պաստառ՝ Իմ ընկերը • Դերախաղ (ծանոթություն բակում, գրադարանում/միջանցքում) | Անհատներ և հարաբերություններ (փոխհարաբերություններ և արժեհամակարգ) |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Ես և շրջակա աշխարհը, Կերպարվեստ | |

Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ

S 2, S 16, S 22, S 25

Թեմա 2

Դպրոցում (12ժամ)

Նպատակ

- Ընդլայնել դպրոցը, դասացուցակը, դպրոցական առօրյան ներկայացնող բառապաշարը:
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը:
- Զարգացնել դպրոցը, դասացուցակը, դպրոցական առօրյան շատ պարզ և կարճ արտահայտություններով ներկայացնելու հմտություն:
- **Ձևավորել հոգատար վերաբերմունք դպրոցի հանդեպ:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- թեմատիկ բառապաշարը (դպրոց, դասացուցակ, դպրոցական առօրյա),
- ժամերն անվանելու տվյալ լեզվի յուրահատկությունները (ասել՝ ժամը քանիսն է),
- դպրոցը, դասացուցակը, դպրոցական առօրյան ներկայացնելու շատ կարճ պարզ արտահայտություններ
- տրված քերականական նյութը:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Հասկանալ դպրոցի, դպրոցական առօրյայի թեմաներով հնչող պարզ և կարճ խոսքը,
- Կարդալ և հասկանալ շատ պարզ տեքստեր դպրոցի, դպրոցական առօրյայի մասին,
- Տալ պարզ հարցեր դպրոցական առօրյայի, դասացուցակի մասին և արձագանքել նմանատիպ հարցերի,

| | |
|---|---|
| | <ul style="list-style-type: none"> • Կազմել շատ կարճ գրավոր տեքստ իր դպրոցի, դպրոցական առօրյայի և դասացուցակի մասին՝ գործածելով շատ պարզ արտահայտություններ և նախադասություններ: • Դրսևորել հոգատար վերաբերմունք դպրոցի և դպրոցի գույքի նկատմամբ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Մեր դպրոցը 2. Իմ դասացուցակը 3. Իմ դպրոցական առօրյան | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Աշխատանք նկարներով և քարտերով, • Պաստառ՝ <ul style="list-style-type: none"> ✓ օտար լեզվով դասացուցակ, ✓ օրվա ռեժիմ • Դերախաղ՝ «Իմ դպրոցական առօրյան» | <p>Արդարություն և զարգացում</p> <p>(աշակերտների իրավունքներն ու պարտավորություններ, հավասար հնարավորություններ)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| <p>Կերպարվեստ, Մայրենի, Ես և շրջակա աշխարհը, Օտար լեզու, Մաթեմատիկա, Տեխնոլոգիա</p> | |

Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ

S 2, S 16, S 23, S 29, S 35

Թեմա 3

Տոհմաձառ (12ժամ)

Նպատակ

- Ընդլայնել և ամրապնդել ընտանիքը, ազգականներին և ընտանեկան տոն/տարեդարձ ներկայացնող բառապաշարը,
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել ընտանիքին, ազգականներին և ընտանեկան տոնին/տարեդարձին վերաբերող պարզ արտահայտությունները գրավոր և բանավոր խոսքում կիրառելու հմտություններ,
- **Խթանել հարգանքը և հոգատար վերաբերմունքը ընտանիքի անդամների հանդեպ, կարևորել ընտանեկան ավանդույթները:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- ընտանիք, ազգականներ և ընտանեկան տոն/տարեդարձ ներկայացնող թեմատիկ բառապաշարին և պարզ արտահայտություններին,
- իրենց տոհմաձառը և իրենց ընտանեկան ավանդույթները,
- տրված քերականական նյութը:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ ընտանիքի, ազգականների (տոհմաձառի) և ընտանեկան տոն/տարեդարձ մասին պատմող պարզ և կարճ խոսքը,
- Կարդալ և հասկանալ շատ պարզ տեքստեր ընտանիքի, ազգականների (տոհմաձառի) և ընտանեկան տոն/տարեդարձ մասին,
- Շատ պարզ արտահայտություններով և նախադասություններով կազմել շատ կարճ գրավոր տեքստ ընտանեկան տոնի/տարեդարձի մասին,
- Տալ պարզ հարցեր գրուցակցի ընտանիքի անդամների, ընտանեկան տոնի/տարեդարձի

| | |
|---|---|
| | <p>մասին և պատասխանի հարցերին՝ գործածելով շատ պարզ բառեր ու նախադասություններ:</p> <ul style="list-style-type: none"> • Արտահայտել ընտանիքի անդամների, ընտանեկան տոնի/տարեդարձը միասին նշելու նկատմամբ արժևորող վերաբերմունքը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Իմ մեծ և համերաշխ ընտանիքը 2. Ընտանեկան տոն/տարեդարձ | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Աշխատանք նկարներով • Պաստառ՝ «Իմ տոհմաճառը», պաստառի ներկայացում • Շնորհավորական բացիկ • Արտ-կոլաժ՝ «Իմ տարեդարձը» | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ</p> <p>(ընտանիքի անդամների միջև փոխհարաբերությունները և սոցիալական փորձի փոխանցումը)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| <p>Ես և շրջակա աշխարհը, Օտար լեզու, Մայրենի, Կերպարվեստ, Երգ, Տեխնոլոգիա</p> | |
| Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |

S 2, S 16, S 30

Թեմա 4

Տանը (12ժամ)

Նպատակ

- Ընդլայնել տունը, սենյակը, տնային գործերը նկարագրող բառապաշարը:
- Ջարգացնել տունը, սենյակը, տնային գործերը նկարագրող պարզ արտահայտությունները գրավոր և բանավոր խոսքում կիրառելու հմտություն:
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութ:
- **Ձևավորել հոգատար վերաբերմունք և պատասխանատվություն տան և իրերի հանդեպ:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- տունը, սենյակը/սենյակի իրերը/, տնային գործերը նկարագրող բառապաշարին,
- տունը, սենյակը, տնային գործերը նկարագրող պարզ արտահայտություններ և նախադասություններ,
- տրված քերականական նյութը:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ տունը և սենյակը նկարագրող, տնային գործերը թվարկող պարզ խոսքը,
- Ընթերցել և հասկանալ կարճ, պարզ տեքստեր տան, սենյակի նկարագրության վերաբերյալ
- Գրավոր և բանավոր նկարագրել իր տունը, սենյակը, պատմել իր տնային գործերի մասին՝ գործածելով շատ պարզ արտահայտություններ և նախադասություններ:
- Պատասխանել տան, սենյակի, իրերի, տնային գործերի մասին պարզ հարցերին և փոխադարձ

| | |
|---|--|
| | <p>հարցեր ուղղել գրուցակցին՝ գործածելով շատ պարզ բառեր ու նախադասություններ,</p> <ul style="list-style-type: none"> • Պատասխանատվություն և հոգածություն դրսևորել իր տան հանդեպ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Իմ տունը 2. Իմ սենյակը 3. Տնային գործեր | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Պատահաբ Իմ տունը/սենյակը • Տեսահոլովակի դիտում՝ Տնային գործեր • Դերախաղ • Աշխատանք նկարներով | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ</p> <p>(ընտանիքի կենցաղ, սովորություններ, բարքեր)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| <p>Ես և շրջակա աշխարհը, Տեխնոլոգիա, Կերպարվեստ, Օտար լեզու, Մայրենի</p> | |
| Կապը հանրակրթության չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| <p>S 2, S 16, S 28</p> | |

Թեմա 5

Կենդանիներ (12ժամ)

Նպատակ

- Ներմուծել կենդանիների անվանումները և նրանց բնութագրող բառապաշար:
- Զարգացնել պարզ արտահայտություններով ընտանի և վայրի կենդանիներին բնութագրելու հմտություն:
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութ:
- **Ձևավորել հոգատար վերաբերմունք կենդանիների հանդեպ:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- ընտանի և վայրի կենդանիների անվանումներին, նրանց հատկանիշները բնորոշող բառապաշարին և կառույցներին/կաղապարներին,
- տրված քերականական նյութը:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ ընտանի և վայրի կենդանիներին վերաբերող շատ պարզ հոլովակի հիմնական բովանդակությունը,
- Ընթերցել և հասկանալ ընտանի և վայրի կենդանիներին վերաբերող շատ պարզ և կարճ տեքստերի բովանդակությունը,
- Գրավոր նկարագրել իր սիրած կենդանուն՝ գործածելով շատ պարզ արտահայտություններ և կառույցներ:
- Շատ պարզ հարցեր տալ կենդանիների մասին և ու պատասխանել դրանց:
- **Դրսևորել ինձամք և հոգատար վերաբերմունք կենդանիների հանդեպ:**

| Բովանդակություն | |
|---|--|
| 1. Ընտանի կենդանիներ 2. Վայրի կենդանիներ 3. Իմ սիրելի կենդանին | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Աշխատանք նկարներով և քարտերով • Պաստառ՝ «Իմ սիրելի կենդանին», «Իմ սիրած կենդանին», պաստառի ներկայացում • Մուլտֆիլմի/տեսահոլովակի դիտում • Երգ • Բանաստեղծություն • Հանելուկ • Երկխոսություն | Գլոբալիզացիա և կայուն զարգացում (բնությունը և մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա) |
| Միջառարկայական կապեր | |
| Ես և շրջակա աշխարհը, Կերպարվեստ, Մայրենի, Տեխնոլոգիա, Օտար լեզու, Երգ | |
| Կապը հանրակրթության չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| S 2, S 7, S 10, S 16 | |

Թեմա 6

Ուտելիք, խմիչք (12ժամ)

Նպատակ

- Ներմուծել սննդամթերքի, որոշ հատկանիշների անվանումներ, սպասքի պարագաները ներառող բառապաշար:
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը:
- Ներմուծել սնվելու ժամերը նկարագրող շատ պարզ և կարճ արտահայտություններ:
- Ջարգացնել պարզ արտահայտություններով, կարճ նախադասություններով գրավոր և բանավոր իր նախաճաշը/ճաշը/ ընթրիքը ներկայացնելու հմտություն:
- Շեշտադրել առողջ սննդին հետևելու կարևորությունը:

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- սննդամթերքի տեսակները և նրանց հատկանիշները, սպասքի պարագաները անվանող բառապաշարը,
- իր նախաճաշը/ճաշը/ ընթրիքը ներկայացնելու պարզ արտահայտություններ և նախադասություններ,
- տրված քերականական նյութը,
- առողջ և ճիշտ սնվելու ռեժիմը:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ սննդամթերքի տեսակների, նրանց բնորոշ հատկանիշների մասին պարզ խոսքը:
- Ընթերցել և հասկանալ կարճ, պարզ տեքստեր առողջ սննդի, ճիշտ սնվելու, սպասքի պարագաների մասին:
- Շատ կարճ և պարզ արտահայտություններով նկարագրել իր սիրած ուտելիքը/խմիչքը,
- Կազմել գրավոր տեքստ իր սնվելու ռեժիմի և նախաճաշի/ճաշի/ընթրիքի վերաբերյալ գործածելով շատ պարզ արտահայտությունների և կառույցների,

| | |
|---|---|
| | <ul style="list-style-type: none"> • Պատասխանել սնվելու ռեժիմի մասին պարզ հարցերին և փոխադարձ հարցեր ուղղել զրուցակցին՝ գործածելով շատ պարզ բառեր ու նախադասություններ: • Կարևորել առողջ սնունդը և ճիշտ սնվելու ռեժիմը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Սննդամթերք/մրգեր, բանջարեղեն, կաթնամթերք, մսամթերք, խմիչք/ 2. Սպասքի պարագաներ 3. Իմ նախաճաշը/ճաշը/ընթրիքը | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Աշխատանք քարտերով և նկարներով • Խմբային աշխատանք ճաշացանկի պատրաստում • Մուլտֆիլմի/տեսահոլովակի դիտում • Երգ/Բանաստեղծություն • Երկխոսություն • Հանելուկ | <p>Գլոբալիզացիա և կայուն զարգացում</p> <p>(մարդու գործունեությունը և առողջ ապրելակերպը)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Ես և շրջակա աշխարհը, Օտար լեզու, Մայրենի, Երգ, Կերպարվեստ, Տեխնոլոգիա | |
| Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |

Չորրորդ դասարան

Թեմա 1

Ազգություններ, իմ ազգությունը /14 ժամ/

Նպատակ

- Ներմուծել մի շարք երկրների, քաղաքների, համապատասխան ազգությունների և լեզուների անվանումները,
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութ,
- Ջարգացնել պարզ և կապակցված նախադասություններով ներկայանալու հմտություններ՝ նշելով իր երկիրը, ազգությունը և մայրենի լեզուն,
- Ջարգացնել ծագման երկրի, բնակության վերաբերյալ կարճ մենախոսություն և երկխոսություն վարելու հմտություններ,
- **Ձևավորել հարգալից վերաբերմունք աշխարհի այլ երկրների, ազգությունների, լեզուների, մշակույթների հանդեպ:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- որոշ երկրների, ազգությունների, լեզուների, քաղաքների (իր, ուսումնասիրվող լեզվի երկրների, հարևան երկրների, մայրաքաղաքների) անվանումները,
- պարզ նախադասությունների կազմությունը՝ ըստ նմուշ-օրինակի:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ «Ազգություններ» թեմայով հնչող մենախոսության/երկխոսության (ձայնագրություն, տեսահոլովակ) ընդհանուր բովանդակությունը
- Կարդալ և հասկանալ «Ազգություններ» թեմայով պարզ տեքստերում ներկայացված փաստերը
- Պարզ բառերով և կարճ նախադասություններով ներկայանալ՝ նշելով իր ազգությունը, բնակության վայրը և մայրենի լեզուն

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Պարզ արտահայտություններ օգտագործելով ներկայացնել այլ անձանց, նրանց ծագման երկիրը, ազգությունը, լեզուն, • Տալ ազգությանը, բնակության վայրին վերաբերվող պարզ հարցեր և պատասխանել իրեն ուղղված պարզ հարցերին /երկխոսություն/ • Լրացնել պարզ տեղեկություններ պարունակող ձևաթուղթ • Դրսևորի հարգալից վերաբերմունք աշխարհի այլ երկրների, ազգությունների, լեզուների հանդեպ և ցուցաբերի դրանք ուսումնասիրելու հետաքրքրություն, |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Ազգություններ, երկրներ, լեզուներ 2. Որտեղի՞ց եմ ես | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Աշխատանք աշխարհի քարտեզով, • Տեսահոլովակի դիտում/քննարկում, • Պաստառ /իմ հայրենիքը, ուսումնասիրվող լեզուների երկիր/երկրներ, ազգություններ, լեզուներ, հարևան երկրներ • Պրեզենտացիա • Դերախաղ • Խաղ-վիկտորինա | <p>Անհատներ և հարաբերություններ</p> <p>(մշակութային ընդհանրություններ և տարբերություններ)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Ես և շրջակա աշխարհը, Օտար լեզու, Երգ, Կերպարվեստ, Տեխնոլոգիա, Ինֆորմատիկա | |

Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ

S 2, S 7, S 8, S 9, S 17, S 30, S 31

Թեմա 2

Առոյա (14 ժամ)

Նպատակ

- Զարգացնել առոյան, ժամանցը և նախընտրած զբաղմունքը ներկայացնելու համար անհրաժեշտ բառապաշարը, արտահայտությունները և խոսքային կառույցները
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը
- Ձևավորել իր առոյայի, նախընտրած զբաղմունքի մասին պարզ նախադասություններով հաղորդակցվելու հմտություններ /կարողություններ
- **Ձևավորել վերաբերմունք առոյան ճիշտ կազմակերպելու կարևորության նկատմամբ:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Առոյային և ժամանցին բնորոշ բառապաշարը (շաբաթվա օրերը, ժամը, օրվա պահերը, ամիս-ամսաթիվը, դպրոցում ուսումնասիրվող առարկաների անվանումները)
- Տրված քերականական նյութը

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ Առոյա թեմայով հնչող մենախոսության/երկխոսության (ձայնագրություն, տեսահոլովակ)ընդհանուր բովանդակությունը
- Կարդալ և հասկանալ Առոյա թեմայով պարզ տեքստեր
- Նկարագրել իր առոյան դպրոցում և տանը (շաբաթվա ընթացքում և հանգստյան օրերին)՝

| | |
|--|---|
| | <p>գործածելով պարզ բառեր և կարճ նախադասություններ</p> <ul style="list-style-type: none"> • Երկխոսության մեջ մտնել իր ընկերոջ հետ՝ առօրյայի և հանգստյան օրերի զբաղմունքների մասին • Կազմել գրավոր տեքստ՝ նկարագրելով իր առօրյան և/կամ հանգստյան օրը, նախընտրած զբաղմունքը • Արժևորել և ճիշտ կազմակերպել առօրյա պարտականությունները և սիրելի զբաղմունքները |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Իմ օրակարգը 2. Իմ սիրելի զբաղմունքը/ժամանցի ձևերը | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Պաստառ՝ դասացուցակ և ժամատախտակ • Նամակ/բացիկ լեզվակիր երկրի իր ընկերոջը | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ (ժամանակի ռացիոնալ տնօրինում, պատասխանատվություն)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Տեխնոլոգիա, Կերպարվեստ , Ֆիզկուլտուրա, Ես և շրջակա աշխարհը, Օտար լեզու | |
| Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| S 2, S 7, S 8, S 9, S 28 | |

| | |
|--|--|
| Թեմա 3 | |
| Գնումներ (14 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել և ընդլայնել սննդամթերքի, հագուստի և խանութների տեսակներին առնչվող բառապաշար • Ներմուծել համապատասխան քերականական նյութ • Զարգացնել պարզ լեզվական միջոցներով գնումներ կատարելու հմտություններ • Ձևավորել գնումներ կատարելիս տեղեկություններ ստանալու ունակություններ • Ձևավորել գնումներ կատարելիս գումարը խնայողաբար ծախսելու, միայն անհրաժեշտը և պիտանին գնելու կարևորության գիտակցությունը: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային բնորոշ բառապաշարը (սննդամթերք, հագուստ, կոշիկ) • Թեմային առնչվող քերականական նյութ/կառուցվածքներ • Խանութում գնումներ կատարելու քաղաքավարության պարզ ձևերը և արտահայտությունները (խնդրել որևէ սննդամթերք, հագուստ, հարցնել գինը, վճարման ձևը) | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ գնորդի և վաճառողի երկխոսության (ձայնագրություն, տեսահոլովակ) ընդհանուր բովանդակությունը • Կարդալ և հասկանալ «Գնումներ» թեմայով պարզ տեքստեր • Բացատրել իր նախընտրած հագուստի տեսակը, ձևը, չափսը, գույնը, ինչից է պատրաստված • Երկխոսություն վարել պարենային խանութում/շուկայում գնումներ կատարելիս • Գրել որևէ ճաշատեսակի/աղանդերի բաղադրիչների ցանկը |

| | |
|---|---|
| | <ul style="list-style-type: none"> • Գնել միայն անհրաժեշտը և պիտանին, չցուցաբերել սպառողական վերաբերմունք: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Պարենային խանութում, շուկայում 2. Հագուստ, կոշիկ գնելիս | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսաֆիլմի դիտում և քննարկում Գնումներ թեմայով • Երգ Գնումներ թեմայով • Աշխատանք քարտերով և նկարներով | Անհատական և մշակութային արտահայտում (հասարակական փոխարաբերություններ, վարվելակերպի կանոններ) |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Մաթեմատիկա , Կերպարվեստ, Տեխնոլոգիա, Երգ, Ինֆորմատիկա, Օտար լեզու | |
| Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| S 2, S 6, S 7, S 8, S 9, S 20 | |

Թեմա 4

Առողջ ապրելակերպ (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել համապատասխան բառապաշար և քերականական նյութ
- Զարգացնել շատ պարզ լեզվական միջոցներով նախընտրած մարզաձևը և իր սննդակարգը ներկայացնելու հմտություններ
- Ընդգծել մարզվելու և առողջ ապրելակերպի կարևորությունը՝ որպես անձի զարգացման միջոց
- **Զարգացնել ճիշտ սնվելու և սննդակարգին հետևելու վերաբերմունքը**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային բնորոշ բառապաշարը (մարզաձևեր)
- Թեմային համապատասխան քերականական նյութը
- Սնվելու պարզ կանոնները, սննդակարգը

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ Առողջ ապրելակերպ թեմայով հնչող մենախոսության/երկխոսության (ձայնագրություն, տեսահոլովակ)ընդհանուր բովանդակությունը
- Հասկանալ մարմնամարզության ժամանակ հնչող պարզ հրահանգներ
- Կարդալ և հասկանալ որևէ մարզիկի,մարզաձևերի մասին պարզ տեքստեր
- Բանավոր նկարագրել իր նախընտրած մարզաձևը
- Երկխոսության մեջ մտնել մարզաձևերի և առողջ ապրելակերպի թեմաների շուրջ
- Գրավոր պարզ տեքստով նկարագրել իր նախընտրած մարզիկին

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Կարևորել սպորտով զբաղվելու և առողջ ու ճիշտ ունեցիմով սնվելը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Մարզաձևեր 2. Իմ սիրելի մարզաձևը 3. Առողջ սննդակարգ | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութ որևէ մարզաձևի և առողջ սննդակարգի մասին • Պաստառ հայտնի մարզիկների մասին • Պաստառ առողջ սննդակարգի մասին • Կարճ մարմնամարզություն | <p>Գիտատեխնիկական նորարարություն</p> <p>(առողջ ապրելակերպ, շրջակա միջավայր և մարդկային գործունեություն)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Ֆիզկուլտուրա , Կերպարվեստ, Տեխնոլոգիա, Ես և շրջակա աշխարհը, Օտար լեզու | |
| Կապը հանրակրթության չափորոշի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| S 2, S 7, S 8, S 9, S 33, S 36 | |

Թեմա 5

Տարվա եղանակ և օրվա եղանակ (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել տարվա եղանակների և օրվա եղանակին առնչվող բառապաշար և թեմային համապատասխան քերականություն
- Ջարգացնել պարզ նախադասություններով և կառույցներով տարվա և օրվա եղանակները նկարագրելու կարողություններ
- Ձևավորել օրվա/շաբաթվա եղանակի տեսության վերաբերյալ բանավոր տեղեկատվության ընկալման հմտությունները
- Ջարգացնել օրվա եղանակի մասին տեղեկատվություն փոխանակելու կարողություններ
- **Ձևավորել տարվա և օրվա եղանակին համապատասխան հագուստ կրելու կարևորության գիտակցություն**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային բնորոշ բառապաշարը
- Տրված քերականական կառույցները
- շաբաթվա օրերը, տարվա տասներկու ամիսները
- տարվա 4 եղանակները, դրանց բնորոշ բնության երևույթները

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ օրվա և շաբաթվա օդերևութաբանական տեղեկատվությունը
- Պարզ բառերով և կարճ նախադասություններով նկարագրել տարվա և օրվա եղանակը,
- Պարզ նախադասություններով գրել տեքստ իր նախընտրած եղանակի մասին
- Շատ կարճ նախադասություններով զրուցել տարվա եղանակների մասին:
- **Հագնվել տարվա եղանակին համապատասխան:**

| Բովանդակություն | |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> 1. Տարվա չորս եղանակները 2. Իմ սիրելի եղանակը 3. Բնության երևույթները 4. Եղանակն այսօր | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Պաստառ-կոլաժ /տարվա չորս եղանակները/ • Այց պատկերասրահ՝ քննարկում • Համապատասխան եղանակի պատկերում դասական երաժշտության ներքո (Վիվալդիի Տարվա 4 եղանակները, Չայկովսկի) • Օդերևութաբանական տեղեկագրի պատրաստում/ Խմբային աշխատանք/ և ներկայացում • Գրական երաժշտական կարճ ներկայացում (տարվա եղանակների մասին) հայ և ուսումնասիրվող լեզվի երկրի բանաստեղծների ստեղծագործությունների, հանելուկների, շուտասելուկների, երգերի հիման վրա | <p>Անհատական և մշակութային արտահայտչականություն</p> <p>(Բնություն)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Կերպարվեստ, Տեխնոլոգիա, Երգ, Ես և շրջակա աշխարհը, Օտար լեզու | |
| Կապը հանրակրթության չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| S 2, S 7, S 8, S 9, S 10 | |

Թեմա 6

Արձակուրդներ (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել արձակուրդներին առնչվող բառապաշար և համապատասխան քերականական նյութ
- Ձևավորել արձակուրդների ժամանակ նախընտրելի զբաղմունքները նկարագրելու և դրանց մասին գրուցելու հմտություններ
- **Ձևավորել վերաբերմունք արձակուրդները ճիշտ կազմակերպելու նկատմամբ**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային բնորոշ բառապաշարը
- Տրված քերականական նյութը
- Ամառային արձակուրդները ճիշտ և արդյունավետ տնօրինելու ձևերը

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ Արձակուրդ թեմայով հնչող մենախոսության / երկխոսության (ձայնագրություն, տեսահոլովակ) ընդհանուր բովանդակությունը
- Նկարագրել արձակուրդներն անցկացնելու նախընտրած տեսակը /ծովափին, գյուղում, ճամբարում և այլն/
- Պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն իր և իր ընկերների արձակուրդների վերաբերյալ
- Կարդալ և հասկանալ Արձակուրդ թեմայով պարզ տեքստերում ներկայացված փաստերը
- Կազմել գրավոր տեքստ (60 բառի սահմաններում) իր առաջիկա ամառային արձակուրդի մասին:

| Բովանդակություն | |
|--|---|
| 1. Ի՞նչ եմ անում արձակուրդներին /հանգստի տարբեր տեսակներ / 2. Իմ ամառային արձակուրդները | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Պաստառ • Երգ • Տեսանյութ արձակուրդի թեմայով | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ</p> <p>/հանգիստը որպես աշխարհը բացահայտելու միջոց/</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Կերպարվեստ, Տեխնոլոգիա, Երգ, Օտար լեզու, Ես և շրջակա աշխարհը | |
| Կապը հանրակրթության չափորոշչի տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| S 2, S 7, S 8, S 9, S 10 | |

Հինգերորդ դասարան

| Թեմա 1 | |
|--|--|
| Նախասիրություն/հոբբի (14 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել նախասիրությունների կարևորության գաղափարը • Ընդլայնել նախասիրություն/հոբբի թեմային բնորոշ բառերի, արտահայտությունների և կառույցների պաշարը, • Զարգացնել նախասիրությունների, նախընտրելի զբաղմունքների մասին կարճ կապակցված խոսք կազմելու հմտություններ, • Ձևավորել վերաբերմունք ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու և նախընտրած գործով զբաղվելու հանդեպ: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը • Տրված քերականական նյութը • Նախասիրությունների/հոբբիի կարևորությունը • Ազատ ժամանակը ճիշտ և արդյունավետ տնօրինելու ձևերը | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ նախասիրությունների և հետաքրքրությունների մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն), • Կարդալ և հասկանալ հետաքրքրությունների/հոբբիների մասին պարզ տեքստը, • Հանդես գալ իր նախասիրությունների և հետաքրքրությունների մասին նախապես պատրաստված կարճ խոսքով՝ բացատրելով, թե ինչն է իրեն դուր գալիս, ինչը՝ ոչ, • Պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն իր և իր ընկերների նախասիրությունների մասին |

| | |
|---|---|
| | <ul style="list-style-type: none"> • պարզ խոսքային կառույցներով գրավոր նկարագրել սեփական նախասիրությունները և առօրյան, • Եզրահանգումներ անել ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու և նախընտրած գործով զբաղվելու շուրջ |
| Բովանդակություն | |
| <ul style="list-style-type: none"> • Ինչպե՞ս եմ տնօրինում իմ ազատ ժամանակը • Իմ հետաքրքրությունները/հոբբին | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ՝ Իմ հետաքրքրությունները/հոբբին • Նամակ՝ Ինչ եմ անում ազատ ժամանակ • Պաստառ Ժամանցի ձևեր • Ցուցադրություն-վաճառք • Այց թանգարան, թատրոն, կինո և այլն | <p>Անհատական և մշակութային արտահայտում (նախասիրությունները որպես մշակութային արտահայտման և ստեղծարարության զարգացման գրավական)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Կերպարվեստ, Երաժշտություն, Տեխնոլոգիա, Օտար լեզու, Բնագիտություն, Ֆիզկուլտուրա, Ինֆորմատիկա | |
| Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| Հ 2, Հ 27, Հ 28, Հ 52 | |

| | |
|---|--|
| Թեմա 2 | |
| Աշխատանք/մասնագիտություն (14 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել աշխատանքի և մասնագիտությունների կարևորության գաղափարը • Ծանոթացնել աշխատանք/մասնագիտություն թեմային բնորոշ բառապաշարին, արտահայտություններին, կառույցներին, հրահանգներին, • Զարգացնել թեմայի շրջանակներում պարզ և կարճ հարցերին հիմնավորված պատասխանելու կարողությունը, • Ձևավորել հարգանք աշխատանքի և տարբեր մասնագիտությունների հանդեպ: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը • Տրված քերականական նյութը • Որոշ մասնագիտությունների համար պահանջվող հմտությունները • Յուրաքանչյուր աշխատանքի և մասնագիտության դերը մեր կյանքում | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ աշխատանքի և մասնագիտությունների մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն), • Կարդալ և հասկանալ աշխատանքի և մասնագիտությունների մասին պարզ տեքստեր, • նկարագրել (բանավոր և գրավոր) տարբեր աշխատանքներ և մասնագիտություններ՝ գործածելով կարճ և պարզ կառույցներ • Պարզ արտահայտություններով հակիրճ ներկայացնել իր նախընտրած աշխատանքը/մասնագիտությունը, |

| | |
|--|---|
| | <ul style="list-style-type: none"> • Տալ աշխատանքի/մասնագիտության կամ իր նախընտրած աշխատանքի/մասնագիտության մասին պարզ հարցեր և պատասխանել իրեն ուղղված նմանատիպ հարցերի, • Վարել պարզ նամակագրություն աշխատանք թեմայով՝ ներկայացնելով իր նախընտրած մասնագիտությունները: • Բացատրել աշխատանքի և մասնագիտության կարևորությունը, • Ճանաչել համագործակցային աշխատանքի առավելություններն ու թերությունները: |
| Բովանդակություն | |
| <ul style="list-style-type: none"> • Իմ փոքրիկ աշխատանքը/ներդրումը /շաբաթօրյակ, ծառատունկ/տնային գործեր • Մասնագիտությունների տեսակներ • Ի՞նչ եմ ուզում դառնալ: | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Աշխատանք նկարներով և քարտերով • Արտ-կոլաժ/Պաստառ՝ Մասնագիտություն • Աշխատանքային նախաձեռնություն (շաբաթօրյակ, ծառատունկ, այգու խնամք) | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության (անհատի՝ հասարակությանը օգտակար լինելու գիտակցումը)</p> |
| Միջառարկայական կապեր | |

Մայրենի, Կերպարվեստ, Երաժշտություն, Տեխնոլոգիա, Օտար լեզու, Անհատը և հասարակությունը, Ֆիզկուլտուրա, Ինֆորմատիկա

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 23, Հ 27, Հ 28, Հ 35, Հ 58

Թեմա 3

Բնակավայր/համայնք (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել բնակավայրի, համայնքի և հարևանության կարևորության հիմնական գաղափարը
- Ծանոթացնել բնակավայր/համայնք թեմային բնորոշ բառերին, արտահայտություններին, կառույցներին, հրահանգներին
- Ձարգացնել բնակավայր/համայնք թեմային բնորոշ պարզ արտահայտությունների համատեքստում կիրառելու հմտությունները
- Ձևավորել հոգատար վերաբերմունք սեփական բնակավայրի, համայնքի հանդեպ
- Ձևավորել վարքականոնի պահպանման կարևորության գիտակցություն

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը
- Տրված քերականական նյութը
- Քաղաքավարի շփման կանոնները
- Ժամանցի վայրերում կիրառվող վարքականոնի սկզբունքները

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ բնակավայրի, համայնքի, ժամանցի վայրերի մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն),
- Կարդալ և հասկանալ բնակավայրի, համայնքի, ժամանցի վայրերի մասին պարզ տեքստեր,
- Պատասխանել բնակավայրի և համայնքի շուրջ իրեն ուղղված պարզ, կրկնվող հարցերին՝ հիմնավորելով սեփական կարծիքը,
- Պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն իր բնակավայրի, ժամանցի վայրերի և համայնքի մասին,

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Հակիրճ ներկայացնել սեփական և ուսումնասիրվող լեզվի մշակույթների որոշ առանձնահատկություններ, ժամանցի վայրեր, • տալ տարածության մեջ կողմնորոշվելու համար ուղղորդող ցուցումներ (գնացեք ուղիղ, թեքվեք աջ...)՝ կոնկրետ ժամանցի վայր հասնելու համար, • կազմել կարճ, պարզ գրավոր տեղեկություն (մինչև 80 բառ)՝ նկարագրելով իր համայնքը, բնակավայրը՝ գործածելով համապատասխան բառապաշար, • Բերել սեփական բնակավայրի, համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի, ժամանցի վայրերում վարքի հիմնական կանոնների օրինակներ (նաև սեփական փորձից): |
| Բովանդակություն | |
| <ul style="list-style-type: none"> • Իմ բնակավայրը (նկարագրություն, պատմական ակնարկ, հետաքրքիր փաստեր) • ժամանցի վայրեր | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Ոչ պաշտոնական նամակ՝ Իմ համայնքը • Քարտեզագրում՝ ժամանցի վայրերը • Պաստառ՝ Իմ բնակավայրը • Դերախաղ՝ Իմ հարևանները | Համայնք (Վարքականոն/քաղաքավարություն) |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Բնագիտություն Կերպարվեստ, Երաժշտություն, Տեխնոլոգիա, Օտար լեզու, Անհատը և հասարակությունը, | |

Ինֆորմատիկա

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 23, Հ 24

Թեմա 4

Ուղևորություն (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել ուղևորության, երթևեկության միջոցների, երթևեկության կանոնների կարևորության և տեսարժան վայրերի պահպանման գաղափարը
- Ծանոթացնել ուղևորություններին, առաջիկա պլաններին, երթևեկության կանոններին վերաբերող պարզ ցուցումներին, դրանցում կիրառվող արտահայտություններին և կառույցներին
- Զարգացնել ուղևորությունների, տեսարժան վայրերի, տեսարժան վայրերի վերաբերյալ համատեքստում խոսքի կիրառելու հմտությունը
- Ձևավորել **հոգատար** վերաբերմունք ուղևորության/ճամփորդության ընթացքում շրջակա միջավայրի հանդեպ

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը
- Տրված քերականական նյութը
- Երթևեկության պարզ կանոնները
- Մեփական երկրի և ուսումնասիրվող լեզվի երկրի որոշ տեսարժան վայրերը և դրանց հանդեպ հոգատար վերաբերմունք դրսևորելու կանոնները

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ երթևեկության և ուղևորության վերաբերյալ պարզ տեքստերի հիմնական բովանդակությունը,
- Լսել և հասկանալ երթևեկության և ուղևորության վերաբերյալ պարզ հրահանգներն ու ցուցումները
- Կարդալ և հասկանալ երթևեկության և ուղևորության վերաբերյալ պարզ տեքստերի հիմնական բովանդակությունը՝ ճանաչելով գործողության վայրը, ժամանակը, անունները և այլն,

| | |
|---|---|
| | <ul style="list-style-type: none"> • հանդես գալ ուղևորության, առաջիկա պլանների և բնակավայրի մասին նախապես պատրաստված կարճ խոսքով, • հակիրճ ներկայացնել սեփական և ուսումնասիրվող լեզվի մշակույթների որոշ առանձնահատկություններ, տեսարժան վայրեր, • կազմել կարճ, պարզ գրավոր տեղեկություն (մինչև 80 բառ)՝ նկարագրելով ուղևորության նպատակը, միջոցները և տեսարժան վայրերը՝ գործածելով համապատասխան բառապաշար • Ներկայացնել ինչպես կարելի է դրսևորել հոգատար վերաբերմունք այցելվող երկրի տեսարժան վայրերի և զբոսաշրջության հանդեպ |
| Բովանդակություն | |
| <ul style="list-style-type: none"> • Երթևեկության միջոցներ • Կողմնորոշում տեղանքում • Տեսարժան վայրերի այցելություն | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Պաստառ՝ «Երթևեկության կանոններ» • Պաստառ՝ «Տեսարժան վայրեր» • Տեսանյութի դիտում՝ քննարկում • Դերախաղ՝ «Ճամփորդելիս», «Երթևեկության հրահանգներ» | Կանոններ և համակարգեր |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Բնագիտություն Կերպարվեստ, Երաժշտություն, Տեխնոլոգիա, Օտար լեզու, Անհատը և հասարակությունը, | |

Ինֆորմատիկա

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 45, Հ 46

Թեմա 5

Ընտանի և վայրի կենդանիներ (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել կենդանական աշխարհի բազմազանության գաղափարը,
- Ընդլայնել ընտանի և վայրի կենդանիներ թեմային առնչվող բառապաշարը և կառույցները,
- Ծանոթացնել ընտանի և վայրի կենդանիներ թեմայով տեքստերի, ուսումնական հեռուստահաղորդումների հիմնական բովանդակությանը,
- Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը՝ ընտանի և վայրի կենդանիներ թեմայի շրջանակում,
- **Ձևավորել հոգատար վերաբերմունք կենդանիների հանդեպ:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը
- Տրված քերականական նյութը
- Ընտանի և վայրի կենդանիների տեսակները (արտաքին նկարագիրը, ապրելավայրը, ինչով են սնվում)
- Ընտանի և վայրի կենդանիների դերը մեր կյանքում

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ ընտանի և վայրի կենդանիներ թեմաներով պարզ, ուսումնական հեռուստահաղորդումների հիմնական բովանդակությունը,
- Կարդալ և հասկանալ ընտանի և վայրի կենդանիներ թեմայի վերաբերյալ պարզ տեքստերը և գտնել անհրաժեշտ տեղեկությունները
- պարզ արտահայտությունների և կառույցների միջոցով նկարագրել ընտանի և վայրի կենդանիներին, նրանց ապրելավայրերը, սնունդը
- պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն կենդանիների, նրանց ապրելավայրի, պաշտպանության մասին
- կազմել կարճ, պարզ գրավոր տեղեկություն (մինչև 80 բառ)՝ ընտանի և վայրի կենդանիների վերաբերյալ՝ օգտագործելով համապատասխան բառապաշար

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Բացատրել՝ ինչպես կարելի է դրսևորել հոգատար վերաբերմունք ընտանի և վայրի կենդանիների հանդեպ: |
| Բովանդակություն | |
| <ul style="list-style-type: none"> • Ազարակում • Կենդանաբանական այգի • Կենդանիների պաշտպանություն | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Այց կենդանաբանական այգի • Սահիկաշար/ պաստառ Իմ սիրած կենդանին • Դերախաղ՝ Ազարակում/անտառում/կենդանաբանական այգում • Կարճ զեկույց Ազարակում կամ Անտառում | <p>Համակարգեր և կառուցվածք Տեսակ</p> |
| Միջառարկայական կապեր | |
| <p>Մայրենի, Բնագիտություն Կերպարվեստ, Երաժշտություն, Տեխնոլոգիա, Օտար լեզու, Անհատը և հասարակությունը, Ինֆորմատիկա</p> | |
| Կապը հանրակրթության չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| <p>Հ 3, Հ 9</p> | |

| Թեմա 6 | |
|--|--|
| Առողջություն (14 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել ֆիզիկական ակտիվության և առողջ սնվելու կարևորության և անհրաժեշտության գաղափարը մեր կյանքում • Ներմուծել և ընդլայնել առողջություն թեմային առնչվող բառապաշարը, պարզ արտահայտությունները և կառույցները • Զարգացնել առողջության, առողջ ապրելակերպի/հիգիենայի, գանգատների և բժշկի ցուցումների մասին համապատասխան համատեքստում խոսելու և գրելու կարողությունը • Ձևավորել վերաբերմունք ֆիզիկական ակտիվությունը և առողջ սնունդն արժևորելու հանդեպ | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը • Տրված քերականական նյութը • Առողջ և անառողջ սննդի տարբերությունները • Ֆիզիկական ակտիվության տարբեր ձևերը • Պարզ առողջական գանգատները և դրանք բուժելու պարզագույն ձևերը | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ առողջություն թեմայով պարզ հրահանգները, այդ թվում՝ բժշկի պարզ խորհուրդները և ցուցումները, • Կարդալ և հասկանալ առողջություն և սննդակարգ թեմայի վերաբերյալ պարզ տեքստերի հիմնական գաղափարը, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, • Պարզ արտահայտությունների և կառույցների միջոցով նկարագրել առողջական գանգատները, • Պատասխանել առողջությանը, առողջ ապրելակերպի, սննդակարգի վերաբերյալ իրեն ուղղված պարզ հարցերին՝ հիմնավորելով իր կարծիքը, |

| | |
|---|---|
| | <ul style="list-style-type: none"> • Նկարագրել իր նախընտրած մարզաձևը, սննդակարգը, • Կազմել կարճ, պարզ գրավոր տեքստ (մինչև 80 բառ)՝ նկարագրելով իրենց կյանքում առողջ ապրելակերպի տարրերը և սննդակարգը: • Քննարկել և բացատրել՝ ինչու պետք է հետևել առողջությանը և հիգիենային |
| Բովանդակություն | |
| <ul style="list-style-type: none"> • Գանգատներ • Բժշկի մոտ • Բժշկական խորհուրդներ և ցուցումներ • Առողջ ապրելակերպ/հիգիենա | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ՝ Բժշկի մոտ • Տեսահոլովակի դիտում և քննարկում՝ Առողջ ապրելակերպ/հիգիենա/առողջ սնունդ • Պաստառ՝ Ֆիզիկական ակտիվության ձևերը | Համակարգ (Պատճառահետևանքային կապեր) |
| Միջառարկայական կապեր | |
| Առողջ ապրելակերպ, Ֆիզկուլտուրա Մայրենի, Բնագիտություն Կերպարվեստ, Երաժշտություն, Տեխնոլոգիա, Օտար լեզու, Անհատը և հասարակությունը, Ինֆորմատիկա | |

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնադրույունքների հետ

Հ 3, Հ 49

| | |
|---|--|
| Թեմա 1 | |
| Մեզ շրջապատող մարդիկ (14 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել մարդկային փոխհարաբերությունների մասին գաղափարը, • Ընդլայնել և ամրապնդել ընկերներին, հարևաններին ներկայացնող, ինչպես նաև միջանձնային /կենցաղային./ փոխհարաբերություններին առնչվող բառապաշարը, • Ներմուծել քննարկման ժամանակ սեփական կարծիքը/մտտեցումը և տեսակետը ներկայացնելու պարզ արտահայտություններ, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Նպաստել հարգալից փոխհարաբերություններ հաստատելուն, պահպանելուն և կարևորելուն ուղղված վերաբերմունքի ձևավորմանը: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Կոնֆլիկտների առաջացման պատճառները | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ պարզ տեղեկատվության հիմնական բովանդակությունը ընկերների, հարևանների հետ փոխհարաբերությունների (վեճեր, փոխադարձ հարգանք, հաշտություն) մասին: • Ընթերցել և հասկանալ ընկերության, հարևանության մասին որոշ անծանոթ բառեր |

| | |
|---|--|
| | <p>պարունակող տեքստի ընդհանուր բովանդակությունը:</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել (գրավոր կամ բանավոր) ընկերների, հարևանների հետ ունեցած իրադարձություն, դեպք և արտահայտել սեփական կարծիքը՝ գործածելով կարճ և պարզ արտահայտություններ: • Գրել կարճ, պարզ նամակ (մինչև 80 բառ)՝ նկարագրելով ընկերությանը և հարևանությանը վերաբերող իրադարձություններ՝ արտահայտելով սեփական վերաբերմունքը: • Տալ պարզ հարցեր ընկերների և հարևանների հետ փոխհարաբերությունների, իրադարձությունների վերաբերյալ և արձագանքել իրենց ուղղված հարցերին: • Քննարկել կոնֆլիկտների առաջացման պատճառները՝ քաղաքավարի բառապաշարի օգտագործմամբ, առաջարկել դրանց լուծման տարբերակներ: • Կարևորել շրջապատի մարդկանց, նրանց հետ հարգալից փոխհարաբերությունների հաստատումը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Ես և իմ ընկերները 2. Մեր հարևանները 3. Փոխհարաբերություններ (վեճեր, փոխադարձ հարգանք, հաշտություն) | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |

| | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ Կոնֆլիկտի լուծում • Նամակ ընկերոջը (առցանց կամ թղթային) • Բանավեճ • Ուսումնական ֆիլմ/ձայնագրություն և քննարկում | <p>Ինքնություն և փոխհարաբերություններ</p> <p>(մարդկային հարաբերություններ, կոնֆլիկտ, դրա պատճառները)</p> |
| <p>Միջառարկայական կապեր</p> | |
| <p>Մայրենի, Օտար լեզու, Ինֆորմատիկա, Պատմություն</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Հ 2, Հ 23, Հ 26, Հ 32, Հ 35, Հ 36, Հ 37, Հ 42</p> | |

| | |
|--|--|
| Թեմա 2 | |
| Սպորտ (14 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել սպորտի՝ մշակութային տարր և միջմշակութային հաղորդակցության կարևոր միջոց լինելու գաղափարը, • Ընդլայնել սպորտին վերաբերող բառապաշարը (մարզաձևեր/մարզախաղեր/ մարզահագուստ և պարագաներ), • Ներմուծել ուսումնասիրվող լեզվի երկրում և Հայաստանում տարածված մարզաձևերը և սիրված մարզիկներին նկարագրելու պարզ արտահայտություններ և կառույցներ, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ջարգացնել որևէ մարզաձև, մարզական իրադարձություն, մարզիկի պարզ և կարճ արտահայտություններով ներկայացնելու հմտություն, • Խթանել առողջ ապրելակերպի և կամային հատկանիշների ձևավորման համար սպորտի դերի արժևորումը: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Ուսումնասիրվող լեզվի երկրում և Հայաստանում սիրված մարզաձևերը, • հայտնի և սիրված մարզիկների մարզական ուղին և ձեռքբերումները: | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ մարզական լուրերի հիմնական բովանդակությունը, • Ընթերցել և հասկանալ տեղեկատվական բնույթի պարզ տեքստերը (մարզական իրադարձություններ, կարճ հոդվածներ, գովազդներ) և գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը՝ գատելով առաջնայինը երկրորդայինից: • Համառոտ պատմել սեփական և ուսումնասիրվող լեզվի երկրի մարզաձևերի, մարզիկների, մարզական իրադարձությունների մասին, • Կատարել կարճ, պարզ, տեղեկատվական և նկարագրական բնույթի գրառումներ հայտնի և սիրված մարզիկների և մարզաձևերի մասին՝ արտահայտելով սեփական վերաբերմունքը, • Տալ մարզական թեմայով ելույթին հաջորդող հարցեր, ինչպես նաև պատասխանել սեփական ելույթին հաջորդող հարցերին: |

| | |
|---|--|
| | <ul style="list-style-type: none"> • Կարևորել սպորտի դերը առողջ ապրելակերպի և կամային հատկանիշների ձևավորման գործում: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Ուսումնասիրվող լեզվի երկրներում սիրված մարզաձևեր և մարզախաղեր 2. Հայաստանում սիրված մարզաձևերը և մարզախաղերը 3. Հայտնի և սիրված մարզիկներ | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ Մարզադաշտում • Պաստառ • Պրեզենտացիա/Տեսասահիկ • Տեսահոլովակի/մարզիկի մասին պատմող ֆիլմի դիտում և քննարկում • Մարզախաղի դիտում և քննարկում | Ինքնություն և փոխհարաբերություններ (հոգեկան, հոգևոր և ֆիզիկական առողջության ամրապնդում) |
| Միջառարկայական կապեր | |
| Մայրենի, Օտար լեզու, Կերպարվեստ, Ֆիզկուլտուրա, Ինֆորմատիկա | |
| Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| Հ 3, Հ 34, Հ 45, Հ 46, Հ 48 | |

| | |
|---|--|
| Թեմա 3 | |
| Կենսակերպի փոփոխություն (14 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ամրապնդել առողջ և ակտիվ ապրելակերպի համար վնասակար սովորություններից զերծ մնալու անհրաժեշտության գաղափարը, • Ընդլայնել օրվա ռեժիմին, առողջ սննդին, առողջ ապրելակերպին և սպորտին վերաբերող բառապաշարը և պարզ արտահայտությունները, • Ջարգացնել օրվա ռեժիմին, առողջ սննդին, առողջ ապրելակերպին և սպորտին, ինչպես նաև վնասակար սովորություններին վերաբերող պարզ արտահայտությունները և կարճ նախադասությունները բանավոր և գրավոր խոսքում կիրառելու հմտություններ, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը: • Ձևավորել վնասակար սովորություններից զերծ մնալու կամ դրանցից հրաժարվելու անհրաժեշտության գիտակցությունը: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Օրվա ճիշտ պլանավորման սկզբունքները, • Վնասակար սովորությունները, դրանց դրդապատճառներն ու հետևանքները: | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ առողջ ապրելակերպին և վնասակար սովորությունների մասին կարճ և պարզ խոսքի, մեղիա հաղորդումների հիմնական բովանդակությունը, • Ընթերցել և հասկանալ առողջ ապրելակերպին և վնասակար սովորությունների մասին պարզ տեքստի ընդհանուր բովանդակությունը, • Ներկայացնել իր օրը և սննդակարգը՝ գործածելով կարճ և պարզ կառույցներ: |

| | |
|---|--|
| | <ul style="list-style-type: none"> • Նախապես պատրաստված կարճ խոսքի միջոցով արտահայտել սեփական կարծիքը վնասակար սովորությունների վերաբերյալ • կարևորելով օրվա ռեժիմը, առողջ սնունդը, առողջ ապրելակերպը, սպորտը: • Գրել նամակ՝ նկարագրելով իր օրը/սնունդը/ ապրելակերպը, /մարզաձևը, որով զբաղվում է: • Մասնակցել առողջ ապրելակերպին և վնասակար սովորությունների շուրջ երկխոսություններին, • Քննարկել օրակարգի/կենսակերպի հավանական փոփոխությունները, հանդես գալ առաջարկություններով, • համաձայնել կամ մերժել իրեն արված օրակարգի/կենսակերպի հավանական փոփոխությունների առաջարկները, • Կարևորել օրվա ճիշտ պլանավորումը, առողջ սնունդը, սպորտը և վնասակար սովորություններից զերծ մնալը՝ որպես առողջ ապրելակերպի նախապայմաններ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Օրվա ճիշտ պլանավորում 2. Առողջ սնունդ 3. Սպորտ և ակտիվ ապրելակերպ 4. Վնասակար սովորություններ | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Մահիկաշար՝ «Իմ օրը» • Բանավեճ՝ «Առողջ ապրելակերպն ընդդեմ վնասակար սովորությունների» • Դերախաղ՝ «Ի՞նչն էմ ուզում փոխել իմ օրվա ռեժիմում» | Գիտատեխնիկական նորարարություն (դեպի առողջ ապրելակերպ՝ գիտական պլզբունքների պատկերացումներով) |

| | |
|--|---------------------|
| <ul style="list-style-type: none"> • Առողջ սննդակարգի ցանկի կազմում • Օրվա պլանի կազմում | <p>Փոփոխություն</p> |
| <p>Միջառարկայական կապեր</p> | |
| <p>Մայրենի, Տեխնոլոգիա, Ֆիզկուլտուրա, Բնագիտություն, Կերպարվեստ, Ինֆորմատիկա, Օտար լեզու</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Հ 3, Հ 26, Հ 27, Հ 32, Հ 34, Հ 37, Հ 48</p> | |

| | |
|---|--|
| Թեմա 4 | |
| Տոներ (14 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել տոների՝ մշակույթի կարևոր բաղադրիչ լինելու գաղափարը, • Ընդլայնել տոներ/ տարեդարձ/ազգային տոներ /միջազգային տոներ նկարագրող բառապաշարը և կառույցները, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ծանոթացնել ուսումնասիրվող լեզվի երկրում և Հայաստանում անցկացվող ազգային տոների նմանություններին ու տարբերություններին, • Խթանել/խորացնել պատասխանատվությունը ազգային մշակույթի (տոների) պահպանման հանդեպ, • Ձևավորել հարգալից վերաբերմունք այլ մշակույթների (տոների) հանդեպ: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Ազգային (Հայաստանում և ուսումնասիրվող լեզվի երկրում) և միջազգային տոները | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ տարեդարձի, ազգային տոների (ուսումնասիրվող երկրում և Հայաստանում) և միջազգային տոների մասին պարզ մեղիա հաղորդումների, իրադարձային նորությունների հիմնական բովանդակությունը: • Կարդալ և հասկանալ տարեդարձի, ազգային տոների (ուսումնասիրվող երկրում և Հայաստանում) և միջազգային տոների մասին որոշ անձանոթ բառեր պարունակող տեքստի ընդհանուր բովանդակությունը, |

| | |
|--|---|
| | <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել (գրավոր կամ բանավոր) իր տարեդարձը, որևէ ազգային կամ միջազգային տոն՝ գործածելով կարճ և պարզ արտահայտություններ: • Համառոտ պատմել սեփական և ուսումնասիրվող լեզվի մշակույթի, կենցաղի ու տոների մասին՝ նշելով նմանություններն ու տարբերությունները: • Հանպատրաստից մասնակցել տարեդարձի, տոների շուրջ տարվող երկխոսություններին: • Արժևորել ազգային տոները որպես ազգային մշակույթի կարևոր բաղադրիչ, • Ցուցաբերել ազգային մշակույթը պահպանելու պատասխանատվության գիտակցություն, • Դրսևորել հարգալից վերաբերմունք այլ մշակույթների տոների հանդեպ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Տարեդարձ 2. Ազգային տոներ (ուսումնասիրվող երկրում և Հայաստանում) 3. Միջազգային տոներ | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Միջմշակութային հետազոտական նախագիծ՝ «Տոներ» • Սահիկաշար/պրեզենտացիա՝ «Իմ սիրած տոնը» • Գրել կարճ պարզ նամակ առցանց ընկերոջը «Իմ տարեդարձը» • Տեսահոլովակի դիտում/քննարկում | <p>Գլոբալիզացիա և կայուն զարգացում (ազգային մշակույթի տոների պահպանում և մշակութային ազդեցություններ)</p> |

Միջառարկայական կապեր

Մայրենի, Կերպարվեստ, Տեխնոլոգիա, Օտար լեզու, Պատմություն, Ինֆորմատիկա, Երգ

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 31, Հ 45, Հ 46

Թեմա 5

Հայրենիք (14 ժամ)

Նպատակ

- Խորացնել հայրենիք/հայրենասիրություն գաղափարը,
- Ներմուծել և ընդլայնել Հայաստանը (աշխարհագրական դիրք, սահմաններ, քաղաքներ, բնակչություն, խորհրդանիշներ, մշակութային ժառանգությունը) և անվանի հայերին ներկայացնող թեմատիկ բառապաշարը,
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը:
- Ջարգացնել թեմային վերաբերող պարզ արտահայտությունները և կարճ նախադասությունները բանավոր և գրավոր խոսքում կիրառելու հմտություններ,
- Ներկայացնել մեծանուն հայերի և արժևորել նրանց ներդրումը հայ և համաշխարհային իրականության մեջ,
- **Ընդգծել հայրենաճանաչության և մշակութային ժառանգության պահպանության կարևորությունը:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը,
- Տրված քերականական նյութը,
- Հայաստանի աշխարհագրական դիրքը, սահմանները, խորհրդանիշները,
- Ազգային մշակութային ժառանգության նմուշներ,
- Ճանաչված հայերին, որոնք փոխեցին աշխարհը,
- Ազգանվեր գործունեություն ծավալած հայերին:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ Հայաստանի և հայտնի հայերին մասին մեդիա հաղորդումների հիմնական բովանդակությունը,
- Ընթերցել և հասկանալ Հայաստանին և հայտնի հայերին մասին տեղեկատվական բնույթի պարզ տեքստի ընդհանուր բովանդակությունը,
- Մահուն և հակիրճ ներկայացնել նախօրոք պատրաստված ելույթ հայկական մշակութային ժառանգության մասին (տեսարժան վայրեր/արվեստի գործեր/ավանդույթներ/երաժշտություն/պար և այլն),

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Պատասխանել սեփական ելույթին հաջորդող հարցերին, ինչպես նաև տալ հարցեր այլ ելույթ ունեցողներին, • Մեղիա աղբյուրներից քաղված տեղեկությունների հիման վրա կատարել կարճ, պարզ տեղեկատվական գրառումներ անվանի հայերի մասին, • Արժևորել մեծանուն հայերի գործունեությունն ու ներդրումը հայրենիք/հայրենասիրություն համատեքստում՝ արտահայտելով սեփական վերաբերմունքը, • Գիտակցել հայրենիք/ հայրենասիրություն հասկացությունների կարևորությունը՝ մասնավորեցնելով իր օրինակով, • Արժևորել մշակութային ժառանգությունը որպես ազգի անցյալը, ներկան և ապագան կապող օղակ և կարևորել նրա պահպանությունը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Հայաստանն իմ հայրենիքն է (ՀՀ խորհրդանիշները) 2. Անվանի հայեր 3. Մշակութային ժառանգություն | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Սահիկաշար՝ «Հայաստանի խորհրդանիշները», «Հայկական մշակութային ժառանգություն», «Մեծ հայեր» • Նախագիծ՝ «Իմ հայրենիքը» • Հետազոտական աշխատանք՝ «Անվանի հայեր» • Հայրենագիտական այց | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ (մշակութային ժառանգություն)</p> |

- Այցելություն Մատենադարան կամ որևէ թանգարան/ցուցահանդես

Միջառարկայական կապեր

Մայրենի, Աշխարհագրություն, Բնագիտություն, Օտար լեզու, Կերպարվեստ, Պատմություն, Ինֆորմատիկա, Երգ

Կապը հանրակրթության չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 16, Հ 31, Հ 45, Հ 46

Թեմա 6

Երկիրը, որի լեզուն ես սովորում եմ (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել լեզվի միջոցով լեզվակիր երկիրը/երկրները և նրանց մշակույթը ճանաչելու գաղափարը,
- Ընդլայնել ուսումնասիրվող լեզվի երկիրը/երկրները (աշխարհագրական դիրք, սահմաններ, քաղաքներ, բնակչություն, տեսարժան վայրեր) ներկայացնող թեմատիկ բառապաշարը և պարզ նախադասությունները,
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը:
- Զարգացնել ուսումնասիրվող լեզվի երկիրը բանավոր և գրավոր խոսքում ներկայացնելու հմտություններ,
- Ծանոթացնել լեզվակիր երկրի/երկրների հասակակցի առօրյային ու հետաքրքրություններին,
- **Զնավորել հարգալից վերաբերմունք այլ մշակույթների հանդեպ:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը,
- Տրված քերականական նյութը,
- Պատմա-աշխարհագրական տեղեկություններ լեզվակիր երկրի/երկրների մասին,
- Լեզվակիր երկրի/երկրների հասակակցի առօրյան ու հետաքրքրությունները:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ ուսումնասիրվող լեզվի երկրի/երկրների մասին ուսումնական կարճ տեսանյութերի հիմնական բովանդակությունը (պատմա-աշխարհագրական տեղեկություններ, տեսարժան վայրեր, հասակակիցներ),
- Կարդալ և հասկանալ ուսումնասիրվող լեզվի երկրին/երկրներին, այնտեղ ապրող հասակակցի առօրյային ու հետաքրքրություններին վերաբերող տեղեկատվական բնույթի տեքստը և գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը,
- Սահուն և հակիրճ ներկայացնել նախօրոք պատրաստված էլույթը ուսումնասիրվող լեզվի երկրի որևէ տեսարժան

| | |
|--|---|
| | <p>վայրի մասին՝ կարևորելով նրա պատմամշակութային արժեքը,</p> <ul style="list-style-type: none"> • Համառոտ ներկայացնել (գրավոր և բանավոր) լեզվակիր երկրում բնակվող հասակակցի առօրյան ու հետաքրքրությունները՝ համադրելով/ համեմատելով իր առօրյայի և հետաքրքրությունների հետ, • Մասնակցել ուսումնասիրվող լեզվի երկրի մասին երկխոսություններին՝ տալով հարցեր և պատասխանելով իրեն ուղղված հարցերին՝ անելով հղումներ փաստացի տեղեկություններին, • Արժևորել մշակութային և լեզվական բազմազանությունը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Պատմա-աշխարհագրական տեղեկություններ 2. Տեսարժան վայրեր 3. Իմ (գերմանացի, անգլիացի ֆրանսիացի, ռուս) հասակակիցը | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Սահիկաշար՝ «Երկիրը, որի լեզուն ես սովորում եմ», • Նախագիծ՝ «Ես և իմ օտարերկրացի հասակակիցը» • Հետազոտական աշխատանք՝ «Տեսարժան վայրեր» • Գրել կարճ պարզ նամակ լեզվակիր երկրում բնակվող առցանց ընկերոջը • Այցելություն ուսումնասիրվող երկիրը ներկայացնող որևէ կազմակերպություն | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ (մշակութային նմանություններ և տարբերություններ)</p> |

Միջառարկայական կապեր

Մայրենի, Աշխարհագրություն, Կերպարվեստ, Երգ, Օտար լեզու, Պատմություն, Ինֆորմատիկա

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 29, Հ 31, Հ 43, Հ 45

| Թեմա 1 | |
|---|--|
| ՈՃ և նորաձևություն (14 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել ճաշակ, ոճ և նորաձևություն հասկացությունները: • Ընդլայնել և ամրապնդել ոճին և նորաձևությանն առնչվող բառապաշար և պարզ արտահայտություններ, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Խթանել ոճի՝ որպես ինքնաարտահայտման միջոցի արժևորում, • Ձևավորել քննական և գնահատողական վերաբերմունք նորաձևության նկատմամբ: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Տեղեկություններ նորաձևության մեջ ճանաչված դիզայներների մասին: | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ «Ոճ և նորաձևություն» թեմայով մեղիա հաղորդումների հիմնական իմաստը, • Կարդալ և հասկանալ «Ոճ և նորաձևություն» թեմայով տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը, • Պարզ արտահայտություններով ներկայացնել նորաձևության մեջ իրեն հետաքրքրող զարգացումները, |

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել նախապես պատրաստված ելույթ իր նախընտրած ոճի մասին, • Տալ հարցեր նորաձևության, հագուստի ոճերի և իր նախընտրած ոճի մասին և պատասխանել այս թեմաներով իրեն ուղղված հարցերին, • Կազմել իր նախընտրած ոճը նկարագրող պարզ տեքստ (80 – 100 բառ), • Դրսևորել նորաձևության նկատմամբ քննական վերաբերմունք՝ կարևորելով ինքնարտահայտումը անհատական ոճի միջոցով: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Նորաձևության պատմությունից (ոճ թելադրողները) 2. Հագուստի ոճեր 3. Իմ ոճը | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Սահիկաշար՝ «Ոճեր թելադրողները» • Նախագիծ՝ «Հագուստի ոճեր» (ցուցադրություն) • Տեսահոլովակի դիտում • Քննարկում՝ «Ո՞ճ, թե՞ նորաձևություն» • Հարցում՝ «Հետևում ե՞նք նորաձևությանը» • Պարզ նկարագրական էսսե՝ «Իմ նախընտրած ոճը» | <p>Անհատական և մշակութային արտահայտում</p> <p>(արտաքին ազդեցություններ և ինքնարտահայտում)</p> |

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու, Գրականություն, Արվեստ, **Տեխնոլոգիա**, Օտար լեզու, Ինֆորմատիկա

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 37, Հ 42, Հ 52

| | |
|---|---|
| Թեմա 2 | |
| Երաժշտությունը՝ համամարդկային լեզու (14 Ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել երաժշտության համամարդկային լինելու գաղափարը, • Ընդլայնել և ամրապնդել երաժշտության ոճերին և գործիքներին առնչվող բառապաշարը և պարզ արտահայտությունները, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Արժևորել երաժշտությունը որպես միջմշակութային, միջանձնային հաղորդակցության և ինքնաարտահայտման միջոց: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Տեղեկություններ հայ և համաշխարհային անվանի երաժիշտների մասին, • Երաժշտության տարբեր ոճերը: | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ երաժշտություն թեմայով հնչող պարզ խոսքը, • Կարդալ և հասկանալ երաժշտության (ոճերի, գործիքների և այլն) և անվանի երաժիշտների մասին պարզ տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը, • Ներկայացնել նախապես պատրաստված էլույթ՝ երաժշտության ոճերի և անվանի կոմպոզիտորների/երաժիշտների մասին՝ հիմնավորելով սեփական ընտրությունը և կարծիքը, |

| | |
|--|---|
| | <ul style="list-style-type: none"> • Գրել պարզ տեղեկատվական էսսե՝ ներկայացնելով երաժշտության իր նախընտրած ոճը, այդ ոճի մի որևէ ստեղծագործություն՝ հիմնավորելով իր ընտրությունը, • Քննարկել* երաժշտական ոճերի հիմնական ուղերձները և երաժշտության դերը մարդու կյանքում՝ հիմնավորելով իր կարծիքը, • Դրսևորել հարգալից վերաբերմունք երաժշտական տարբեր ճաշակների նկատմամբ: <p>* Քննարկել - բանավոր և գրավոր փոխազդեցություն</p> |
|--|---|

Բովանդակություն

1. Երաժշտական տարբեր ոճեր
2. Երաժշտության մեծերը (համաշխարհային և հայ)
3. Երաժշտությունն իմ կյանքում

| | |
|---------------------------------------|-------------------------------|
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---------------------------------------|-------------------------------|

| | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Սահիկաշար՝ «Երաժշտության ոճեր» (խմբային աշխատանք) • Երաժշտական կատարումներ և մեկնաբանություն • Պաստառ «Երաժշտության մեծերը» • Տեսահոլովակի դիտում • Նախագիծ՝ «Թոփ 10» • Էսսե՝ «Իմ նախընտրած երաժշտական ոճը» | <p>Անհատական և մշակութային արտահայտում</p> <p>(ստեղծարարություն և գեղագիտական արժևորում)</p> |
|---|---|

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու, Գրականություն, Արվեստ/Երգ, Տեխնոլոգիա, Օտար լեզու, Ինֆորմատիկա, Պատմություն /մշակույթ/, Աշխարհագրություն

Կապը հանրակրթության չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 37, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46

| | |
|--|---|
| Թեմա 3 | |
| Մեր մոլորակը (14 Ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել բնության, բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության գաղափարը, • Ընդլայնել և ամրապնդել մոլորակի բնության, աշխարհի հրաշալիքների և շրջակա միջավայրի պաշտպանության առնչվող բառապաշարը և պարզ արտահայտությունները, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ձևավորել պատասխանատու վարքագիծ և հոգատար վերաբերմունք Երկիր մոլորակի նկատմամբ: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Տեղեկություններ բնության և աշխարհի հրաշալիքների մասին, • Մոլորակին վերաբերող գլոբալ (նաև էկոլոգիական) խնդիրների մասին: | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ մեր մոլորակի՝ որպես հրաշալիքի մասին պատմող մեդիա նյութի հիմնական իմաստը, • Կարդալ և հասկանալ մեր մոլորակին՝ որպես հրաշալիքի մասին պատմող պարզ տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը, • Ներկայացնել նախապես պատրաստված էլույթ՝ բնապահպանական որևէ խնդրի մասին՝ հիմնավորելով դրա կարևորությունը և արտահայտելով իր կարծիքը, |

| | |
|---|---|
| | <ul style="list-style-type: none"> • Գրել պարզ տեղեկատվական էսսե՝ ներկայացնելով աշխարհի/բնության որևէ հրաշալիք՝ հիմնավորելով իր ընտրությունը, • Քննարկել իրեն ծանոթ/իր համայնքին վերաբերող բնապահպանական հիմնախնդիրները՝ հիմնավորելով իր կարծիքը և առաջարկելով լուծումներ, • Կարևորել Երկիր մոլորակի նկատմամբ պատասխանատու վարքը իր առօրյա կյանքում: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Աշխարհի հրաշալիքները (նաև բնություն) 2. Ես պատասխանատու եմ մոլորակի համար | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Պաստառ՝ «Աշխարհի հրաշալիքները» • Սահիկաշար՝ «SOS. Երկիր/Երկրի բնապահպանական հիմնախնդիրները» (խմբային աշխատանք) • Տեսահոլովակի դիտում, քննարկում • Վիկտորինա՝ «Աշխարհի և բնության հրաշալիքները» (խմբային աշխատանք) • Էսսե՝ «Իմ համայնքի բնապահպանական խնդիրը» | <p>Գլոբալիզացիա և կայուն զարգացում</p> <p>(բնության և մարդու ներդաշնակությունը և փոխկապակցվածությունը)</p> |
| Միջառարկայական կապեր | |

Հայոց լեզու, Գրականություն, Պատմություն, Աշխարհագրություն, Ինֆորմատիկա, Օտար լեզու, Կենսաբանություն

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 9, Հ 11, Հ 12, Հ 13, Հ 14, Հ 17, Հ 23, Հ 24, Հ 26, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32

Թեմա 4

Օլիմպիական և պարաօլիմպիկ խաղեր (14 Ժամ)

Նպատակ

- Ներմուծել սպորտը՝ որպես առողջ ապրելակերպի, համամարդկային արժեքի և հավասար հնարավորությունների իրացման միջոց գաղափարը,
- Ընդլայնել և ամրապնդել սպորտին և մարզաձևերին առնչվող բառապաշարը և արտահայտությունները,
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- **Ձևավորել վերաբերմունք առողջ ապրելակերպի, խտրականության բացառման, ապրումակցման և մարդկանց հավասար հնարավորությունների վերաբերյալ:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը,
- Տրված քերականական նյութը,
- Հայ և օտարազգի օլիմպիական և պարաօլիմպիկ չեմպիոններին,
- Մասսայական սպորտաձևերի մասին:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ տարբեր սպորտային հաղորդումների, սպորտային լուրերի հիմնական իմաստը,
- Կարդալ և հասկանալ սպորտի, մարզաձևերի, մարզիկների, մարզական իրադարձությունների մասին պատմող պարզ տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը,
- Ներկայացնել նախապես պատրաստված ելույթ օլիմպիական և պարաօլիմպիկ խաղերի

| | |
|---|---|
| | <p>կարևորության մասին՝ արտահայտելով իր կարծիքը,</p> <ul style="list-style-type: none"> • Գրել պարզ էսսե՝ ներկայացնելով օլիմպիական որևէ մարզաձև/մարզիկի/սպորտի կարևորությունն իր կյանքում՝ հիմնավորելով իր ընտրությունը և տեսակետը, • Լրացնել մարզախաղին մասնակցության հայտի ձևաթուղթը՝ նշելով փաստացի տվյալներ, • Քննարկել մարդու կյանքում սպորտի կարևորությունը՝ հիմնավորելով իր կարծիքը, • Կարևորել մարդու առողջ ապրելակերպի, խտրականության բացառման, հավասար հնարավորությունների և ապրումակցման անհրաժեշտությունը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Օլիմպիական խաղերի պատմությունը 2. Մեր չեմպիոնները 3. Սպորտ բոլորի համար. պարաօլիմպիկ խաղեր 4. Սպորտն իմ կյանքում | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Սահիկաշար՝ «Հայ օլիմպիական մարզիկները» (խմբային աշխատանք) • Պաստառ՝ «Սպորտը բոլորի համար» • Տեսահոլովակի դիտում, քննարկում | <p>Կայունություն և փոփոխություն</p> <p>(փոփոխություն անհատական (առողջ ապրելակերպ) և հասարակական (հավասար հնարավորություններ/ապրումակցում) մակարդակներում)</p> |

- Էսսե՝ «Հավասար հնարավորություններ»/ «Սպորտը իմ կյանքում»
- Նախագիծ՝ սպորտային մեկնաբան, հարցազրույց մարզիկի/տեղական թիմի հետ

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու, Գրականություն, Ֆիզկուլտուրա, Պատմություն, Օտար լեզու, Կենսաբանություն

Կապը հանրակրթության չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 27, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 34, Հ 35, Հ 40, Հ 41, Հ 42, Հ 45, Հ 46

| | |
|--|---|
| Թեմա 5 | |
| Ժամանակի մեքենա (14 Ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել ժամանակի մեջ քաղաքակրթական փոփոխությունների գաղափարը: • Ընդլայնել և ամրապնդել մարդկության պատմության մեջ կարևորագույն իրադարձություններին առնչվող բառապաշար և պարզ արտահայտություններ, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Գիտակցել ժամանակի մեջ և ժամանակի հետ քաղաքակրթական փոփոխության/զարգացման կարևորությունը: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • մարդկության պատմության մեջ կարևորագույն նշանակություն ունեցող ներկայի և անցյալի իրադարձությունները: | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ մարդկության պատմության մեջ կարևորագույն իրադարձությունների, անցյալի կենցաղի մասին պատմող մեդիա նյութերի հիմնական բովանդակությունը, • Կարդալ և հասկանալ մարդկության պատմության մեջ կարևորագույն իրադարձությունների, անցյալի կենցաղի մասին պատմող տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը, • Ներկայացնել նախապես պատրաստված էլույթորև հիշարժան տարեթվի կամ իրադարձության մասին՝ արտահայտելով և հիմնավորելով իր |

| | |
|--|--|
| | <p>կարծիքը դրա կարևորության և ազդեցության վերաբերյալ,</p> <ul style="list-style-type: none"> • Գրել էսսե՝ նկարագրելով իր ուղևորությունը դեպի անցյալ (80-100 բառ), • Քննարկել մարդկության պատմության մեջ որևէ հիշարժան տարեթվի կամ իրադարձության կարևորությունը՝ հիմնավորելով իր կարծիքը, • Կարևորել մարդկության պատմության մեջ հիշարժան տարեթվերը և իրադարձությունները: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Հիշարժան տարեթվեր և իրադարձություններ 2. Ուղևորություն դեպի անցյալ Սպորտն իմ կյանքում | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Սահիկաշար՝ «Ժամանակի մեքենա» • Պաստառ՝ «Անցյալն ու ներկան» • Տեսահոլովակի դիտում, քննարկում • Էսսե՝ «Անցյալի գաղտնիքները» • Նախագիծ (համեմատում են անցյալի իրողությունները ներկայի հետ) | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ (անհատների դերը հասարակության մեջ, անցյալի և ներկայի փոխկապակցվածությունը)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| <p>Հայոց լեզու, Գրականություն, Արվեստ, Պատմություն, Աշխարհագրություն, Ինֆորմատիկա, Օտար լեզու, Տեխնոլոգիա</p> | |

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 10, Հ 13, Հ 14, Հ 16, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 45, Հ 46

| | |
|--|--|
| Թեմա 6 | |
| Հայտնագործություններ (14 Ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել մարդու կյանքում հայտնագործությունների դերի կարևորության գաղափարը: • Ընդլայնել և ամրապնդել հայտնագործություններին և դրանց հեղինակներին առնչվող բառապաշար և արտահայտություններ, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ձարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ձարգացնել հայտնագործություններով պայմանավորված փոփոխություններն արժևորելու և գյուտերի արդյունքներից պատասխանատու կերպով օգտվելու կարողություն: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Հայ և օտարազգի անվանի գիտնականների անունները, հայտնագործությունները: | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ կարևորագույն հայտնագործությունների մասին ուսումնական/հանրամատչելի մեդիա նյութերի հիմնական իմաստը, • Կարդալ և հասկանալ մեծագույն հայտնագործությունների մասին պատմող պարզ տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը, |

| | |
|--|---|
| | <ul style="list-style-type: none"> • Կարդալ և հասկանալ նոր սարքավորումների օգտագործման ուղեցույցները և հետևել հրահանգներին, • Ներկայացնել նախապես պատրաստված ելույթ որևէ կարևոր հայտնագործության և դրա հեղինակի մասին՝ հիմնավորելով այդ հայտնագործության կարևորությունը, • Գրել էսսե՝ նկարագրելով դեպի ապագա իր ուղևորությունը (80-100 բառ), • Քննարկել որևէ հայտնագործության ազդեցությունը մարդկանց կյանքի կամ բնության վրա՝ հիմնավորելով իր կարծիքը, • Գիտակցել հայտնագործությունների՝ որպես փոփոխության նախապայման կարևորությունը, հնարավոր բացասական հետևանքները՝ դրսևորելով պատասխանատու վարք դրանցից օգտվելիս: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Աշխարհի ամենամեծ հայտնագործությունները 2. Նորագույն հայտնագործություններն ու նրանց ազդեցությունը մարդկանց և բնության վրա 3. Հայ գիտնականների մեծագույն հայտնագործությունները 4. Ուղևորություն դեպի ապագա | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |

| | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Պաստառ՝ «Հայտնագործությունները մեր կյանքում» • Տեսահոլովակի դիտում և քննարկում • Էսսե՝ «Ուղևորություն դեպի ապագա» • Սահիկաշար՝ «Հայ գյուտարարները» • Նախագիծ՝ «Գյուտեր, որ փոխեցին աշխարհը» • Կլոր-սեղան քննարկում՝ «Հայտնագործությունների հնարավոր հետևանքները» | <p>Գիտատեխնիկական նորարարություն (Հետևանքներ և պատասխանատվություն)</p> |
| <p>Միջառարկայական կապեր</p> | |
| <p>Հայոց լեզու, Գրականություն, Արվեստ, Օտար լեզու, Աշխարհագրություն, Քիմիա, Ֆիզիկա, Պատմություն, Կենսաբանություն</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Հ 3, Հ 10, Հ 13, Հ 14, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 45, Հ 46</p> | |

| | |
|--|---|
| Թեմա 1 | |
| Ընկերություն (14 Ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել ընկերության տարբեր դրսևորումների գաղափարները, • Ընդլայնել և ամրապնդել ընկերությանը վերաբերող թեմատիկ բառապաշարը, • Ներմուծել թեմային համապատասխան քերականական նյութը, • Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ձևավորել իսկական ընկերությունը գնահատելու, այն վիրտուալ ընկերությունից զանազանելու վերաբերմունք: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Ընկերության հնարավոր տարբեր դրսևորումները (հավասարակիցների/տարեկիցների, սիրելի կենդանիների, ընտանիքի անդամների, գրքերի և այլնի հետ) | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ ընկերություն թեմայով հեռուստատեսային և ռադիոծրագրերի հիմնական բովանդակությունը, • Կարդալ և հասկանալ ընկերություն թեմայով պարզ տեքստերի (պատմվածք, էսսե և այլն) հիմնական բովանդակությունը և մի շարք մանրամասներ, • Ներկայացնել ընկերություն թեմայով պատմվածքի կամ ֆիլմի բովանդակությունը՝ արտահայտելով իր վերաբերմունքը դրա նկատմամբ, |

| | |
|--|---|
| | <ul style="list-style-type: none"> • Վարել թղթային կամ էլեկտրոնային նամակագրություն՝ ընկերոջը ներկայացնելով վերջին շրջանում իրեն առավելապես հուզող հարցերը, • Քննարկել ընկերության տարբեր դրսևորումները սեփական փորձի դիրքերից՝ արտահայտելով սեփական զգացմունքներն ու կարծիքը, • Արժևորել իսկական ընկերության գաղափարը՝ հստակ գանազանելով այն վիրտուալ դաշտում ձևավորված ընկերության դրսևորումներից: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Իսկական ընկերություն 2. Ես և իմ ընկերը 3. Ընկերությունը սոցիալական ցանցերում | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսահոլովակի/ֆիլմի դիտում և քննարկում • Պատմվածքի ընթերցում և քննարկում • Սահիկաշար և ներկայացում՝ «Իմ ընկերները» • Քննարկում՝ «Իրական, թե՞ վիրտուալ ընկերություն» • Նամակներ ընկերոջը • Հետազոտական նախագիծ՝ «Ընկերությունը սոցցանցերում» | <p>Անհատներ և հարաբերություններ (փոխհարաբերություններ)</p> |
| Միջառարկայական կապեր | |

Հայոց լեզու, Գրականություն, Օտար լեզու, Ինֆորմատիկա, Հասարակագիտություն, Պատմություն

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 37, Հ 38, Հ 42

| | |
|--|--|
| Թեմա 2 | |
| Աշխարհի խոհանոցներ (14 Ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել խոհանոցների բազմազանության և ազգային մշակույթի մաս լինելու գաղափարը, • Զարգացնել և ընդլայնել համապատասխան բառապաշարը, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ձևավորել խոհանոցների բազմազանությունը տվյալ մշակութային համատեքստում ընկալելու և արժևորելու կարողություն: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը • տրված քերականական նյութը • Իր երկրի խոհանոցի հանրահայտ ուտեստները • Իր սիրած ուտեստի բաղադրատոմսը • Ուսումնասիրվող լեզվի ամենաճանաչված ճաշատեսակը և դրա բաղադրատոմսը • Հանրահայտ շեֆ խոհարարների կենսագրական որոշ կարևոր տվյալներ/իրադարձություններ | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ «Աշխարհի խոհանոցներ» կամ «Ի՞նչ եփել այսօր» թեմայով զեկույցի, տեսահոլովակի ընդհանուր բովանդակությունը, • Կարդալ և հասկանալ աշխարհի խոհանոցների, հանրահայտ շեֆ-խոհարարների մասին պարզ և տեղեկատվական տեքստերի կամ որևէ ճաշատեսակի բաղադրատոմսի, ճաշացանկի հիմնական բովանդակությունը և մանրամասները, • Ներկայացնել նախընտրած ուտեստի բաղադրատոմսը (բաղկացուցիչ մասերը և պատրաստման եղանակը), |

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Երկխոսել իր ընկերոջ հետ՝ համեմատելով աշխարհի խոհանոցները, • Շարադրել իր ընտանիքի ավանդական և/կամ ուսումնասիրվող երկրի խոհանոցի որևէ հանրահայտ ուտեստի բաղադրատոմսը/պատրաստման եղանակը, • Գնահատել ազգային խոհանոցների՝ որպես ազգային մշակույթի կարևոր տարրի դերը՝ ցուցաբերելով հարգանք այլ ազգերի խոհանոցների հանդեպ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Իմ նախընտրած խոհանոցը 2. Ուսումնասիրվող երկրի խոհանոցի հանրահայտ ուտեստը 3. Իմ ընտանիքի ավանդական բաղադրատոմսը 4. Հանրահայտ շեֆ-խոհարարները | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Պաստառ՝ «Աշխարհի խոհանոցները» • Սահիկաշար՝ «Աշխարհի լավագույն ուտեստները» • Աշխարհի խոհանոցների մասին տեսաֆիլմի դիտում և քննարկում • Նախագիծ՝ ուտեստի պատրաստման տեսահոլովակի ստեղծում • Բազմամշակութային ճաշկերույթի կազմակերպում • Այց սրճարան/ուտեստրան | <p>Գլոբալիզացիա և կայուն զարգացում (մշակութային փոխազդեցություններ և փոխառություններ)</p> <p>Անհատական և մշակութային արտահայտում (ինքնաարտահայտում)</p> |

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու, Գրականություն, Օտար լեզու, Աշխարհագրություն, Հասարակագիտություն, Ինֆորմատիկա, Պատմություն, Տեխնոլոգիա, Արվեստ

Կապը հանրակրթության չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 42, Հ 43

| | |
|---|--|
| Թեմա 3 | |
| Աշխարհի շուրջը (14 Ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել ճամփորդության՝ որպես աշխարհճանաչողության միջոցի գաղափարը, • Ներմուծել և ընդլայնել ճամփորդության թեմային առնչվող բառապաշարը, • Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ջարգացնել վերաբերմունք անձի զարգացման գործում ճամփորդության կարևորության հանդեպ: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Իր և ուսումնասիրվող երկրի տեսարժան վայրերը, մեծ քաղաքները, գյուղական համայնքները, ինչպես նաև դրանց հետ կապված պատումները, պատմական իրադարձությունները | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ «Աշխարհի շուրջը» թեմայով տեղեկատվական ֆիլմերի, տեսահոլովակների, հեռուստատեսային և ռադիո լուրերի և հաղորդումների հիմնական բովանդակությունը, • Կարդալ և հասկանալ տարբեր աղբյուրներում աշխարհի տարբեր վայրերի մասին պատմող տեղեկատվական տեքստերի (ճամփորդական գրքույկներ, ուղեցույցներ, հայտարարություններ, գովազդային թռուցիկներ) հիմնական բովանդակությունը և որոշ մանրամասներ՝ ճամփորդություն կատարելու նպատակով, |

| | |
|---|--|
| | <ul style="list-style-type: none"> • Նկարագրել իրական կամ վիրտուալ ճամփորդության իր փորձը, տպավորությունները և այլն՝ համեմատելով տարբեր տեղերից ստացած իր տպավորությունները, • Քննարկում ծավալել իրական կամ վիրտուալ ճամփորդության թեմայով՝ պատասխանելով իրեն ուղղված հարցերին և տալով ճշգրտող կամ նոր տեղեկություն հայցող հարցեր, • Կազմել նկարագրական/տեղեկատվական տեքստ՝ (100-120 բառերի շրջանակներում) ուղևորություն/ճամփորդություն թեմայով, • Կարևորել անձի զարգացման գործում ճամփորդելու (իրական և վիրտուալ) դերը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Աշխարհի բացահայտում 2. Իրական /վիրտուալ ճամփորդություն 3. Ճանապարհորդություն դեպի ուսումնասիրվող լեզվի երկիր / երկրներ | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Մահիկաշար (ՀՀ և ուսումնասիրվող լեզվի երկրի հրաշալիքները, տեսարժան վայրերը, մեծ քաղաքները) • Աշխարհի շուրջը թեմայով տեսանյութի դիտում և քննարկում • Նախագիծ՝ ճամփորդության նախապատրաստում (տոմսերի և հյուրանոցային համարների ամրագրում, | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ</p> <p>(Քաղաքակրթությունների միջև եղած տարբերությունները, նմանությունները, փոխկապակցվածությունը)</p> |

Ճամփորդական ուղեցույցների կազմում, երթուղիների
մշակում)

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու, Գրականություն, Ինֆորմատիկա, Օտար լեզու, Պատմություն, Աշխարհագրություն, Հասարակագիտություն,
Տեխնոլոգիա

Կապը հանրակրթության չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 42, Հ 43, Հ 45

Թեմա 4

Հաղորդակցություն (խոսքային եվ ոչ-խոսքային) (14 Ժամ)

Նպատակ

- Ներմուծել հաղորդակցությունը խոսքային և ոչ-խոսքային միջոցներով իրականացնելու գաղափարը,
- Ներմուծել հաղորդակցություն թեմային առնչվող բառապաշարը,
- Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ծանոթացնել խոսքի տարբեր ոճերին և զարգացնել դրանք կիրառելու հմտություններ,
- Ջարգացնել խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության (Ժեստեր, միմիկա) ձևերի համադրման հմտություններ,
- Ծանոթացնել հաղորդակցության տարբեր համակարգերին/կողերին /(կենդանիներ, մարդկային լեզու, Մորզեի այբուբեն, Բրայլի այբուբեն և այլն),
- **Ձևավորել հանդուրժողականություն տարբեր մշակույթներին բնորոշ հաղորդակցության ձևերի (Ժեստեր, ձայնի տոն և առոգանություն և այլն) նկատմամբ:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը,
- Տրված քերականական նյութը,
- Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության ձևերը
- Հաղորդակցման տարբեր համակարգերը,
- Ուսումնասիրվող լեզվի մշակույթին բնորոշ ոչ-խոսքային հաղորդակցության առանձնահատկությունները

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ առօրյա հաղորդակցության/զրույցի (ձայնագրություն, տեսագրություն, ֆիլմ) ընդհանուր իմաստը և որոշ մանրամասներ,
- Լսել և հասկանալ հաղորդակցության՝ տարբեր համակարգերի/կողերի կամ մշակութային առանձնահատկությունների մասին

| | |
|---|--|
| <p>(արտաքին տեսք, հագուստ, տարածություն, ժամանակ, հպում)</p> | <p>գիտահանրամատչելի հաղորդումների հիմնական բովանդակությունը և որոշ մանրամասներ,</p> <ul style="list-style-type: none"> • Կարդալ և հասկանալ գրավոր մեդիաներում (լրագիր, ամսագիր, ինտերնետային աղբյուրներ) պարզ լրատվական տեքստերի հիմնական բովանդակությունը և որոշ մանրամասներ, • Ներկայացնել միջմշակութային հաղորդակցական առանձնահատկությունները՝ համեմատելով սեփական և ուսումնասիրվող լեզվի (ինչպես նաև այլ) մշակույթները, • Գրավոր արձագանքել միջմշակութային հաղորդակցության խնդիրների մասին ֆիլմին/տեսահոլովակին/տեքստին՝ վեր հանելով իր նկատած խնդիրները (100 – 120 բառ), • Գիտակցել խոսքի ոճերը տարբերելու և հաղորդակցության բազմապիսի համակարգերին ծանոթ լինելու կարևորությունը՝ արդյունավետ միջմշակութային հաղորդակցության համար: |
| <p>Բովանդակություն</p> | |
| <ol style="list-style-type: none"> 1. Հաղորդակցության միջոցները և ձևերը (խոսքային և ոչ-խոսքային) 2. Խոսքի տարբեր ոճեր 3. Ոչ-խոսքային հաղորդակցություն (ժեստեր, միմիկա և այլն) 4. Հաղորդակցության տարբեր համակարգեր (կենդանիներ, մարդկային լեզու, Մորզեի այբուբեն, Բրայլի այբուբեն և այլն) | |
| <p>Առաջարկվող գործունեության ձևեր</p> | <p>Ընդհանրական գաղափարներ</p> |

| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Սահիկաշար՝ «Միջմշակութային համեմատություն» • Տեսանյութի/ֆիլմի (խոսքի տարբեր ոճերի կիրառմամբ) դիտում և քննարկում • Տեսանյութի/ֆիլմի գրավոր արձագանքում • Նախագիծ՝ «Միջմշակութային թյուրընկալումներ» | <p>Համակարգեր (Հաղորդակցության համակարգեր)</p> <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ (մշակութային առանձնահատկություններ և փոխազդեցություններ)</p> <p>Անհատական և մշակութային արտահայտչականություն (ՈՃ)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| <p>Հայոց լեզու, Գրականություն, Հասարակագիտություն, Ինֆորմատիկա, Օտար լեզու, Կենսաբանություն</p> | |
| Կապը հանրակրթության չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| <p>Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 44, Հ 45, Հ 46, Հ 52</p> | |

Թեմա 5

Մեդիա եվ լրատվություն (14 Ժամ)

Նպատակ

- Ներմուծել ժողովրդավարական հասարակության կայացման գործում մեդիա դերի և մեդիագրագիտության կարևորության գաղափարը,
- Ներմուծել թեմային համապատասխան բառապաշարը,
- Ներմուծել և ընդլայնել թեմային վերաբերող քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ջարգացնել լրատվության վստահելի աղբյուրներից օգտվելու՝ տեղեկություններ քաղելու կարողություններ,
- **Ձևավորել մեդիա գրագիտություն, լրատվության աղբյուրների հանդեպ քննական վերաբերմունք:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- թեմային բնորոշ բառապաշարը և քերականական կառույցները,
- Վստահելի աղբյուրները ճանաչելու եղանակները,
- Հղումների տարրական կանոնները:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ լրատվության տարբեր աղբյուրներով /ռադիո, հեռուստատեսություն, ինտերնետ/ հաղորդվող լրատվության հիմնական իմաստը և որոշ մանրամասներ:
- Կարդալ և հասկանալ լրատվության գրավոր աղբյուրներում/լրագիր, ամսագիր, տեղեկատվական կայքեր և այլն/ ծանոթ թեմաներով պարզ հոդվածները՝ գտնելով կոնկրետ տեղեկատվությունը,

| | |
|--|--|
| | <p>համեմատելով այն այլ աղբյուրների հետ և գնահատելով դրա հավաստիությունը,</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել օրվա հիմնական լրատվությունը՝ արտահայտելով սեփական կարծիքը իրեն հետաքրքրող կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ, • Քննարկման ընթացքում ներկայացնել իր համար նախընտրելի մեդիան՝ հիմնավորելով իր ընտրությունը և արտահայտելով սեփական կարծիքը այդ աղբյուրի հավաստիության վերաբերյալ, • Համառոտ շարադրել օրվա տեղեկատվությունը՝ օգտվելով վստահելի աղբյուրներից (100 – 120 բառ): • Ձևավորել քննական վերաբերմունք լրատվության տարբեր աղբյուրներով ստացված տեղեկությունների հանդեպ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Ժամանակակից մեդիա հարթակներ 2. Լրատվության հավաստիություն, մեդիա գրագիտություն 3. Իմ նախընտրած մեդիան | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Սահիկաշար՝ «Իմ նախընտրած մեդիան» • Բանավեճ՝ «Հավաստի լրատվություն» • Նամակ հանրային հետաքրքրություն ներկայացնող իրադարձություններ մասին | <p>Արդարություն և զարգացում (աղբյուրների հավաստիություն)</p> |

- Նախագիծ՝ լրատվության հավաստիության վերաբերյալ հասարակական կարծիքի հարցում

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու, Գրականություն, Պատմություն, Ինֆորմատիկա/Հղումներ, Օտար լեզու, Արվեստ, Հասարակագիտություն

Կապը հանրակրթության չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 44

| | |
|--|--|
| Թեմա 6 | |
| Իրավունք (14 Ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների գաղափարը; • Ներմուծել թեմային համապատասխան բառապաշար և պարզ կառույցներ: • Ներմուծել և ընդլայնել թեմային համապատասխան քերականական նյութը: • Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ձևավորել մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հիմքում ընկած արժեքներով և հասկացություններով առաջնորդվելու գիտակցություն: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային բնորոշ բառապաշարը և քերականական նյութը, • Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, • Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ստեղծման նախապատմությունը և նպատակը, • Մարդու իրավունքների պաշտպանությունը (ատյաններ, ՄԻՊ, կազմակերպություններ), • Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի մասին, • Հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների մասին կոնվենցիայի մասին: | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ «Իրավունք» թեմայով հնչող գիտահանրամատչելի, լրատվական հեռուստատեսային կամ ռադիոծրագրերի, ելույթների, զեկույցների հիմնական բովանդակությունը և որոշ մանրամասներ, • Կարդալ և հասկանալ «Իրավունք» թեմայով պարզ և տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը և որոշ մանրամասներ, • Սահուն ներկայացնել նախապես պատրաստված պարզ զեկույց/ելույթ մարդու իրավունքների խախտումներ և պաշտանության կառույցները |

| | |
|--|--|
| | <p>թեմայով՝ հիմնավորելով իր տեսակետը, համեմատելով տարբեր իրադարձություններ, հանգամանքներ, փաստեր,</p> <ul style="list-style-type: none"> • Քննարկել մարդու իրավունքների խախտման որևէ դեպք՝ վերլուծելով հիմքում ընկած պատճառները, դրսևորումները և պաշտպանության միջոցները, • Փոխանցել գրավոր տեղեկություններ (նամակագրության կամ գրառումների տեսքով)(100 – 120 բառ)՝ անդրադառնալով իրեն հուզող խնդիրներին և առաջարկելով պարզ լուծումներ, • Դրսևորել մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հիմքում ընկած արժեքներով և հասկացություններով առաջնորդվելու, իր իրավունքները պաշտպանելու միջոցների գիտակցություն: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները (փաստաթղթերն ու կազմակերպությունները) 2. Երեխայի իրավունք 3. Հավասար իրավունքներ 4. Իրավունքի սահմանները | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Պաստառ՝ Իրավապաշտպան կազմակերպությունները • Սահիկաշար՝ Իրավունքի խախտումներ • Տեսանյութի/ֆիլմի դիտում և քննարկում | <p>Արդարություն և զարգացում (իրավունք և պատասխանատվություն)</p> |

- Նամակ ՄԻՊ-ին կամ իրավապաշտպան այլ կառույցի՝ իրավունքի խախտման դեպքի հաղորդմամբ
- Քննարկում՝ Իրավունքի սահմանները

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու, Գրականություն, Օտար լեզու, Հասարակագիտություն, Աշխարհագրություն, Պատմություն, Ինֆորմատիկա

Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 39, Հ 40, Հ 41

Իններորդ դասարան

| | |
|--|---|
| Թեմա 1 | |
| Կրթություն (14 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել և ամրապնդել կրթության կարևորության գաղափարը, • Ընդլայնել և ամրապնդել կրթությանը վերաբերող բառապաշարը, • Ներմուծել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ձևավորել ինքնուրույն սովորելը և կրթության շարունակականությունը արժևորող վերաբերմունք: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Կրթության տարբեր համակարգերը, • Տարբեր մասնագիտությունների բնորոշումները, դերը ժամանակակից հասարակությունում, • Կրթության շարունակականության ապահովման հնարավորությունները: | <p><i>Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ կրթություն թեմայով ելույթների և տարբեր ոճերի մեդիա բովանդակության ընդհանուր իմաստը և որոշ մանրամասներ, • Կարդալ և հասկանալ կրթություն և կրթական համակարգեր թեմայով տեղեկատվական տեքստերի ընդհանուր բովանդակությունը՝ գտնելով իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը, • Ներկայացնել տարբեր (ՀՀ և ուսումնասիրվող լեզվի երկրի/երկրների) կրթական համակարգեր թեմայով ելույթ՝ |

| | |
|--|---|
| | <p>համեմատելով դրանք, արտահայտելով իր կարծիքը, հիմնավորելով և բացատրելով իր մոտեցումները,</p> <ul style="list-style-type: none"> • Գրել կարճ էսսե՝ նկարագրելով իր փորձը, արտահայտելով և հիմնավորելով իր կարծիքը առավելությունների և բացերի մասին, առաջարկելով համապատասխան լուծումներ, • Ներկայացնել մասնագիտություն թեմայով պատրաստված ելույթ՝ պատասխանելով դրան հաջորդող հարցերին, • Քննարկել կրթության առավելություններն ու թերությունները՝ առաջարկելով լուծումներ • Դրստրել ինքնուրույն սովորելու կարողություն • Արժևորել ինքնուրույն սովորելու շարունակական կրթության կարևորությունը: |
|--|---|

Բովանդակություն

- Ինչու՞ եմ սովորում
- Սովորում եմ սովորել
- Կրթական համակարգեր
- Իմ ապագա մասնագիտությունը

| | |
|---------------------------------------|-------------------------------|
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---------------------------------------|-------------------------------|

| | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> ● Դերախաղ (հարցազրույց, տեղեկատվության հարցում) ● Բանավեճ՝ «Կրթության դերը. սովորե՞լ, թե՞ չսովորել» ● Պաստառ՝ «Կրթական համակարգեր» ● Սահիկաշար՝ «Իմ ապագա մասնագիտությունը» ● Տեսանյութի դիտում և քննարկում ● Տեղեկատվական տոնավաճառ՝ Մասնագիտության օր, հանդիպումներ, հարցազրույցներ | <p>Արդարություն և զարգացում (հուսալի ապագա, հավասար հնարավորություններ)</p> <p>Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն (ինտեգրում կրթական միջազգային համակարգին)</p> |
| <p>Միջառարկայական կապերին</p> | |
| <p>Ինֆորմատիկա: վստահելի աղբյուրներ/կայքեր Հասարակագիտություն՝ կրթության իրավունք Պատմություն՝ կրթական համակարգերի զարգացում</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 52</p> | |

Թեմա 2

Մշակույթ (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել և ամրապնդել մշակութային ժառանգության, ժամանակակից մշակույթի և մշակութային իրադարձությունների կարևորության գաղափարը,
- Ընդլայնել և ամրապնդել մշակույթին վերաբերող բառապաշարը,
- Ներմուծել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն)
- **Ձևավորել պատասխանատու վերաբերմունք՝ ազգային և համաշխարհային մշակույթի, մշակութային ժառանգությունների հանդեպ:**

Վերջնարդյունքներ

Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա

- Թեմային առնչվող բառապաշարը
- Տրված քերականական նյութը
- Ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության հանրահայտ օրինակներ (տարբեր ճյուղերից՝ կինո, թատրոն, օպերա, երաժշտություն, գեղարվեստ, ճարտարապետություն և այլն)
- Ժամանակակից մշակույթի դրսևորումները (տարբեր ճյուղերում՝ կինո, թատրոն, օպերա,

Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ ազգային և համաշխարհային մշակութային իրադարձությունների, մշակութային վայրերի վերաբերյալ զեկույցների, ելույթների, տեսանյութերի/ձայնագրությունների ընդհանուր իմաստը և որոշ մանրամասներ,
- Կարդալ և հասկանալ մշակույթ թեմայով նկարագրական և տեղեկատվական տեքստերի բովանդակությունը՝ ճանաչելով դեպքերի և փաստերի միջև տրամաբանական կապը,

| | |
|---|---|
| <p>Երաժշտություն, գեղարվեստ, ճարտարապետություն և այլն)</p> <ul style="list-style-type: none"> ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներգրավված հայկական ժառանգության օբյեկտները: | <ul style="list-style-type: none"> Ներկայացնել տարբեր երկրների (Հայաստանի և ուսումնասիրվող երկրի/երկրների լեզվի) մշակութային ժառանգությունները՝ գտնելով նմանությունները և տարբերությունները, Գրել մշակույթի/մշակութային ժառանգության ընտրված օբյեկտի մասին կարճ նկարագրական էսսե՝ ներկայացնելով սեփական տպավորությունները և զգացմունքները Քննարկել մշակույթի ոլորտի արդի խնդիրները (պահպանություն, ճանաչում, հարգանք, արժևորում)՝ արտահայտելով իր կարծիքը, հիմնավորելով և բացատրելով իր մոտեցումները, Դրսևորել պատասխանատու վերաբերմունք ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության նկատմամբ: |
|---|---|

Բովանդակություն

- Համաշխարհային և ազգային մշակութային ժառանգություն (ՅՈՒՆԵՍԿՕ)
- Ժամանակակից մշակույթ (կինո, երաժշտություն, գեղարվեստ)
- Մշակութային իրադարձություններ

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> Դերախաղ | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ (ժառանգություն)</p> |

| | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> ● Աուդիոգիդի ձայնագրության ունկնդրում ● Բանավեճ՝ «Պահպանե՞լ, թե՞ ստեղծել նորը» ● Պաստառ՝ «Հայկական ժառանգությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում» ● Սահիկաշար՝ «ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկի ամենահայտնի օբյեկտները» ● Քննարկում՝ «Ժամանակակից մշակութային իրադարձությունները» ● Այցելություն պատմամշակութային վայր/թանգարան | <p>Անհատական և մշակութային արտահայտչականությունը</p> <p>(ՈՃ)</p> |
| <p>Միջառարկայական կապերին</p> | |
| <p>Արվեստ, Պատմություն, Գրականություն</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Հ 3, Հ 13, Հ 14, Հ 16, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 42, Հ 43, Հ 44, Հ 45, Հ 46</p> | |

Թեմա 3

Աղետներ (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել և ամրապնդել աղետների կանխարգելման և դրանց դիմակայման կարևորության գաղափարը,
- Ներմուծել աղետների տեսակները, դրանց առաջացման պատճառները, կանխարգելման և դիմակայման միջոցները (տարահանում, առաջին օգնություն),
- Ընդլայնել և ամրապնդել աղետներին վերաբերող բառապաշարը,
- Ներմուծել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն)

- **Ձևավորել բնական աղետների ռիսկերի նվազեցման և դիմակայման, ինչպես նաև Երկիր մոլորակը տեխնաձին/արհեստաձին աղետներից զերծ պահելու գիտակցություն:**

Վերջնարդյունքներ

Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա

- Թեմային առնչվող բառապաշարը
- Տրված քերականական նյութը
- Բնական և տեխնաձին աղետների տեսակները
- Աղետների ժամանակ ճիշտ կողմնորոշվելու կանոնները
- Աղետների դեպքում առաջին օգնության կանոնները

Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ աղետներ թեմայով գիտահանրամատչելի, փաստավավերագրական, գեղարվեստական տեքստերի կամ հեռուստամեդիայի հիմնական բովանդակությունը և որոշ մանրամասներ,
- Կարդալ և հասկանալ աղետներ թեմայով (բնական և տեխնաձին աղետներ, առաջին օգնություն, աղետների

| | |
|---|--|
| | <p>տեսակներ) տեքստերի հիմնական բովանդակությունը, դեպքերի և փաստերի միջև տրամաբանական կապը,</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել աղետների հիմնական պատճառները, մարդկային գործոնը աղետի կանխման/մեղմման գործում՝ կանխատեսելով հնարավոր զարգացումները, • Գրել որևէ աղետի վերաբերյալ կարճ տեղեկատվական հոդված՝ նկարագրելով պատճառը, դեպքերի զարգացումը և արտահայտելով կարծիք ռիսկերի մեղմման և դիմակայման քայլերի վերաբերյալ, • Քննարկել բնական և տեխնաձին աղետների պատճառները՝ ներկայացնելով փաստեր, կատարելով դատողություններ և եզրահանգումներ, • Դրսևորել բնական աղետների ռիսկերի նվազեցման և դիմակայման, ինչպես նաև Երկիր մոլորակը տեխնաձին/արհեստաձին աղետներից զերծ պահելու գիտակցություն: |
| Բովանդակություն | |
| <ul style="list-style-type: none"> • Աղետների հիմնական տեսակները (բնական, տեխնաձին, էկոլոգիական աղետներ) • Մարդկային գործոնը աղետի կանխման/մեղմման և նրա հետևանքների վերացման գործում | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութ/ձայնագրություն/լուրերի թողարկում | <p>Գլոբալիզացիա և կայունություն (ազդեցություն շրջակա միջավայրի վրա)</p> |

| | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> ● Պաստառ՝ «Բնական աղետներ» ● Սահիկաշար՝ «Տեխնածին աղետներ» ● Տեղեկատվական թերթիկ՝ Աղետների ժամանակ վարքի և առաջին օգնության կանոններ ● Հոդված՝ «Աղետ» ● Բանավեճ՝ «Գիտատեխնիկական առաջընթացը՝ տեխնածին աղետի պատճառ» | <p>Գիտատեխնիկական նորարարություն</p> <p>(փոխազդեցություն մարդկանց և բնական աշխարհի միջև)</p> |
| <p>Միջառարկայական կապերին</p> | |
| <p>ՆԶՊ, Գրականություն, Պատմություն, Հասարակագիտություն, Աշխարհագրություն</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Հ 3, Հ 11, Հ 12, Հ 13, Հ 14, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 51</p> | |

Թեմա 4

Գրքեր և ֆիլմեր (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել և ամրապնդել մարդու կյանքում գրքերի և ֆիլմերի կարևորության գաղափարը,
- Ընդլայնել և ամրապնդել գրքեր և ֆիլմեր թեմային վերաբերող բառապաշարը,
- Ներմուծել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ձևավորել հետաքրքրություն գրքերի և ֆիլմերի նկատմամբ՝ որպես ինքնակրթման և ինքնագարգացման աղբյուր:

Վերջնարդյունքներ

Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա

- Թեմային առնչվող բառապաշարը
- Տրված քերականական նյութը
- Գրքերի և ֆիլմերի ժանրերը, դրանց առանձնահատկությունները

Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ գրական ստեղծագործության էկրանավորված տարբերակից որևէ դրվագի ընդհանուր բովանդակությունը և որոշ մանրամասներ,
- Կարդալ և հասկանալ գեղարվեստական կարճ ստեղծագործության/հատվածի բովանդակությունը, դրանում ներկայացված նկարագրությունները, դեպքերի և փաստերի պատճառահետևանքային կապը,
- Ներկայացնել գրական ստեղծագործությունը և դրա էկրանավորված տարբերակը՝ համեմատելով դրանք, հիմնավորելով իրենց նախընտրությունը,

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Գրել գրքի կամ ֆիլմի ակնարկ՝ երաշխավորելով կամ չերաշխավորելով այն, հիմնավորելով իր դիրքորոշումը, • Քննարկել գրական ստեղծագործությունից կամ ֆիլմից մի դրվագ՝ արտահայտելով իր տպավորությունները, արձագանքելով խոսակցի կարծիքին և տպավորություններին, • Գիտակցել գրքերի և ֆիլմերի դերը որպես ինքնակրթման և ինքնագարգացման միջոց: |
| Բովանդակություն | |
| <ul style="list-style-type: none"> • Ինչ է տալիս մարդուն ընթերցանությունը/կինոն • Ինչ եմ սիրում կարդալ/դիտել (ժանրեր) • Իմ նախընտրած գիրքը/ֆիլմը • Գրքե՞ր, թե՞ ֆիլմեր | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Ֆիլմի դրվագի դիտում և քննարկում • Գրական ստեղծագործության հատվածի ընթերցում և քննարկում • Պաստառ/սահիկաշար՝ «Գրական ժանրեր», «Ֆիլմի ժանրեր» • Բանավեճ՝ «Գրքեր թե՞ Ֆիլմեր» • Գրական կամ ֆիլմի ակնարկ | <p>Անհատական և մշակութային արտահայտչականություն (ժանր, ոճ, արտահայտչամիջոցներ)</p> |

Միջառարկայական կապեր

Գրականություն, Արվեստ, Պատմություն, Օտար լեզու

Կապը հանրակրթության չափորոշիչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ 3, Հ 13, Հ 14, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 44, Հ 45, Հ 46

Թեմա 5

Օրենքներ (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել և ամրապնդել օրենքների կարևորությունը և դերը մեր կյանքում,
- Ներմուծել օրենքով սահմանվող իրավունքների և օրենքի խախտման դեպքում պատասխանատվության գաղափարը,
- Ընդլայնել և ամրապնդել օրենքներ թեմային վերաբերող բառապաշարը,
- Ներմուծել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- **Ձևավորել օրենքի գերակայության գիտակցություն:**

Վերջնարդյունքներ

Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա

- Թեմային առնչվող բառապաշարը
- Տրված քերականական նյութը
- Մայր օրենքի/սահմանադրության էությունը
- Իր՝ որպես քաղաքացի իրավունքներն ու պարտականությունները
- Որոշ տեղեկություններ իր և ուսումնասիրվող լեզվի երկրների օրենքների մասին

Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ օրենքներին վերաբերող տեղեկատվության ընդհանուր իմաստը և որոշ մանրամասներ,
- Կարդալ և հասկանալ օրենքներին վերաբերող տեղեկատվական տեքստերի (կոնկրետ դեպքերի) ընդհանուր բովանդակությունը՝ դուրս բերելով գլխավոր փաստերը, դրանցում բերված հիմնական փաստարկներն ու եզրահանգումները,

| | |
|--|---|
| | <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել իր կարծիքը օրենքի խախտման կոնկրետ դեպքերի վերաբերյալ՝ առաջարկելով օրենքի խախտման չհանգեցնող գործողության այլ ընթացք և բացատրելով իր մոտեցումները, • Վարել կոնկրետ դեպքին (օրինակ՝ երթևեկության կանոնների խախտում, խախտման մասին հաղորդում) վերաբերող կարճ պաշտոնական նամակագրություն՝ նկարագրելով խնդիրը կամ ներկայացնելով հիմնավորումներ, • Քննարկել օրենքի հետ խախտման հետ կապված կոնկրետ խնդիրը՝ առաջարկելով քայլեր դրա լուծման ուղղությամբ, • Դրսևորել օրենքի պահանջներին ենթարկվելու վարքագիծ: |
|--|---|

Բովանդակություն

- Մայր օրենք (Սահմանադրություն) և օրենսդրություն
- Օրենքի կիրառում
- Իրավունքներ և պարտականություններ

| | |
|------------------------------|-------------------------------|
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
|------------------------------|-------------------------------|

| | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութի դիտում և քննարկում • Դեպքի նկարագրության ընթերցում և քննարկում • Սահիկաշար՝ «Օրենքը մեր կյանքում» • Պաստառ՝ «ՀՀ և ուսումնասիրվող լեզվի երկրների հիմնարար օրենքները» | <p>Արդարություն և զարգացում</p> <p>(Օրենքի դերը մարդ-համայնք-հասարակություն հարաբերության մեջ)</p> |
|--|---|

| | |
|---|--|
| • Նամակ կամ հաղորդում | |
| Միջառարկայական կապերին | |
| Գրականություն, Հասարակագիտություն, Պատմություն, ՆԶՊ, Օտար Լեզու | |
| Կապը հանրակրթության չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| Հ 3, Հ 13, Հ 14, Հ 23, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 39, Հ 40, Հ 41 | |

Թեմա 6

Ընտրություն և որոշումներ (14 ժամ)

Նպատակ

- Ներմուծել և ամրապնդել որոշումների և դրանց հետևանքների կարևորության գաղափարը,
- Ընդլայնել և ամրապնդել ընտրություն և որոշումներ թեմային վերաբերող բառապաշարը,
- Ներմուծել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- **Ձևավորել ինքնուրույն, իրազեկված որոշումներ կայացնելու և ընտրություն կատարելու պատասխանատվություն:**

Վերջնարդյունքներ

Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա

- Թեմային առնչվող բառապաշարը
- Տրված քերականական նյութը
- Որոշումների հիմքում ընկած տեղեկությունների կարևորությունը
- Մասնագիտությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները
- Ինքնուրույն ընտրություն և որոշումներ կայացնելու կարևորությունը
- Լավ մասնագետ դառնալու ուղին

Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ ընտրություն և որոշումներ, մասնագիտություններ թեմայով ելույթների, տեսանյութերի, ձայնագրությունների ընդհանուր իմաստը և որոշ մանրամասներ,
- Կարդալ և հասկանալ որոշումներ և մասնագիտության ընտրություն թեմայով տեղեկատվական տեքստերի ընդհանուր բովանդակությունը, գլխավոր փաստերը, դեպքերի տրամաբանական կապը, հիմնական փաստարկներն ու եզրահանգումները,

| | |
|---|--|
| | <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել մասնագիտության ընտրություն թեմայով նախապես պատրաստված պարզ զեկույց/ելույթ՝ հիմնավորելով իր ընտրությունը, • Գրել էսսե՝ ներկայացնելով մասնագիտության իր ընտրությունը և հիմնավորելով դրա դրական և բացասական կողմերը, • Քննարկել տարբեր մասնագիտությունների ընտրության հիմքում ընկած դրդապատճառները, տարբեր մասնագետների հաջողության պատմությունները, հաջողության գրավական հանդիսացած գործոնները, • Դրսևորել ինքնուրույն որոշումներ և ընտրություն կայացնելու կարողություն՝ գիտակցելով կայացրած որոշումների հետևանքները: |
| Բովանդակություն | |
| <ul style="list-style-type: none"> • Ընտրության հնարավորություն • Մասնագիտական կողմնորոշում • Հիմնավորված որոշումներ • Կյանքի իմ հետագա ուղին | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութի դիտում և քննարկում • Հոդվածի/տեքստի ընթերցում և քննարկում | Անհատներ և հարաբերություններ |

| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> ● Հարցազրույց մասնագետի հետ՝ «Իմ հաջողության պատմությունը» ● Հարցում՝ «Որքանո՞վ եմ ինքնուրույն կայացրել մասնագիտության իմ ընտրությունը»/» Որքա՞ն ինքնուրույն եմ իմ որոշումներում» ● Պաստառ/սահիկաշար՝ «Կյանքի իմ հետագա ուղին» ● Էսսե՝ «Իմ ընտրած մասնագիտությունը» | <p>(Անհատի ճիշտ ընտրությունը /որոշումը ուղիղ կապ ունի իր սոցիալական միջավայրի/հասարակության ապագայի հետ)</p> |
| <p>Միջառարկայական կապերին</p> | |
| <p>Հասարակագիտություն, Պատմություն, Օտար Լեզու, Գրականություն</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Հ 3, Հ 13, Հ 14, Հ 22, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 37, Հ 38, Հ 42, Հ 52, Հ 53</p> | |

Տասներորդ դասարան

| | |
|--|---|
| Թեմա 1 | |
| Արվեստ (18 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ընդգծել արվեստի դերը՝ որպես մարդու ստեղծարարության, ինքնաարտահայտման և անձի զարգացման առանցքային գործոն: • Ընդլայնել և ամրապնդել արվեստին վերաբերող թեմատիկ բառապաշարը, • Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ներկայացնել հայ և ուսումնասիրվող լեզվի երկրների արվեստագետներին, • Ջարգացնել արվեստի ճյուղերի մասին հիմնավորված քննարկում վարելու կարողություն, • Լուսաբանել արվեստի գործերի պահպանությունը որպես առանցքային կարևորության խնդիր՝ սերմանելով հարգալից և արժևորող վերաբերմունք արվեստի գործերի հանդեպ: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշար, • Տրված քերականական նյութը, • իր և ուսումնասիրվող լեզվի երկրների արվեստագետներին և նրանց հայտնի գործերը | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ արվեստի թեմայով հայտարարություններ և տեսահաղորդումների հիմնական իմաստը՝ հետևելով նկարագրության կամ փաստարկների զարգացմանը: • Կարդալ և հասկանալ արվեստին վերաբերող տեղեկատվական տեքստերի հիմնական |

| | |
|--|---|
| | <p>բովանդակությունը՝ առանձնացնելով փաստերը, կարծիքը, պատճառահետևանքային կապերը:</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել արվեստին վերաբերող նախապես պատրաստված կապակցված ելույթ՝ ընդգծելով այս կամ այն տեսակետին կողմ կամ դեմ լինելու պատճառները: • Գրել էսսե՝ մանրամասն նկարագրելով արվեստի գործ կամ մշակութային իրադարձություն (այդ թվում՝ ֆիլմ, գիրք, բեմադրություն)՝ ներկայացնելով սեփական կարծիքը և վերաբերմունքը: • Ոչ պաշտոնական քննարկումների ժամանակ ներկայացնել իր կարծիքը արվեստի որևէ գործի վերաբերյալ և այն պաշտպանել՝ բերելով բացատրություններ, փաստարկներ և մեկնաբանություններ: • Գնահատել արվեստի դերը մարդկության զարգացման գործում՝ կարևորելով դրա գեղագիտական արժեքը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Արվեստը մշակույթի մի մասնիկ 2. Արվեստի ճյուղեր / տեսակներ 3. Հայտնի արվեստագետներն ու իրենց գործերը | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |

| | |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Կլոր սեղան-քննարկում՝ «Ժամանակակից արվեստի միտումները» • Տեսանյութի (լուր, գեղարվեստական կամ վավերագրական ֆիլմ) դիտում և քննարկում • Սահիկաշար՝ «Իմ սիրած արվեստի գործ(եր)ը» և այլն • Այց պատկերասրահ/թանգարան • Էսսե՝ «Իմ տպավորությունները» • Նախագիծ՝ «Որևէ ժամանակաշրջանի հայտնի գործերը» | <p>Անհատական և մշակութային արտահայտչականություն (գեղագիտական արժեքների գնահատում)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Գրականություն, Օտար լեզու, Հասարակագիտություն, Պատմություն, Արվեստ | |
| Կապը հանրակրթության չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| Մ2, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ34, Մ40, Մ42 | |

Թեմա 2

Գրականություն (18 ժամ)

Նպատակ

- Ընդգծել գրականության դերը՝ որպես մարդու ստեղծարարության, ինքնաարտահայտման և անձի զարգացման առանցքային գործոն,
- Ընդլայնել և ամրապնդել գրականությանը և գրական ժանրերին վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ներկայացնել ուսումնասիրվող լեզվի երկրների գրողներին՝ արժևորելով նրանց դերն ու ներդրումն իրենց երկրի գրականության ստեղծման և հարստացման մեջ,
- Զարգացնել տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա իր նախընտրած գրողին և նրա ստեղծագործությունը նկարագրելու/ներկայացնելու/վերարտադրելու կարողություն,
- Ընդգծել գրականության առանցքային դերը՝ որպես մարդկային հարաբերությունների արտահայտման և այլ մշակույթների մասին իրազեկվելու միջոց:

Վերջնարդյունքներ

| | |
|--|---|
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը • Տրված քերականական նյութը • Գրական ժանրերը | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ ասմունքի, գրական ստեղծագործության որևէ հատվածի ձայնագրությունը կամ գրական ստեղծագործության հիման վրա նկարահանված ֆիլմի դրվագը, |
|--|---|

- Ուսումնասիրվող լեզվի երկրի/երկրների գրողներին, նրանց կյանքի կարևոր իրադարձությունները և ճանաչված ստեղծագործությունները,
- Ուսումնասիրվող լեզվով գրականությունից մեկ բանաստեղծություն, մեկ պատմվածք և վեպից մեկ հատված

- Կարդալ և հասկանալ տեղեկատվական և գեղարվեստական տեքստերը՝ առանձնացնելով կարևոր տեղեկությունները հետագա քննարկման համար,
- Ներկայացնել ուսումնասիրվող գրողներին և ստեղծագործությունները՝ արտահայտելով իր տպավորությունը, վերաբերմունքը և հիմնավորելով դրա մասին իր կարծիքը,
- Գրել էսսե՝ ներկայացնելով ուսումնասիրված գրական ստեղծագործության նկատմամբ սեփական կարծիքը և վերաբերմունքը,
- Քննարկել ուսումնասիրած ստեղծագործությունը, դրա առանցքային կերպարներին, իրադարձությունների զարգացումը՝ ներկայացնելով և պաշտպանելով իր տեսակետը բացատրությունների և փաստարկների միջոցով, արձագանքելով այլոց կարծիքներին և ընդգծելով դրանց ուժեղ և թույլ կողմերը:
- Արժևորել օտարալեզու գրականությունը որպես այլ մշակույթների և մարդկային հարաբերությունների ճանաչման միջոց:

Բովանդակություն

1. Գրականության դերը մեր կյանքում
2. Գրական ժանրեր և ստեղծագործություններ
3. Հանրաճանաչ գրողներն ու գրական ստեղծագործությունները ուսումնասիրվող լեզվով [ռուս, անգլիական, ֆրանսիական, գերմանական] գրականության մեջ

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութի (գեղարվեստական կամ վավերագրական ֆիլմի) դիտում և քննարկում • Գրական ստեղծագործության քննարկում (վերլուծություն, բառային աշխատանք, թարգմանություն) • Սահիկաշար՝ «Իմ նախընտրած գրողն ու ստեղծագործությունը» • Էսսե-արձագանք գրական ստեղծագործությանը • Նախագիծ՝ Գրական երեկո, բեմադրություն | <p>Անհատներ և հարաբերություններ</p> <p>(մարդկային հարաբերությունների ուսումնասիրություն և վերլուծություն)</p> <p>Անհատական և մշակութային արտահայտչականություն</p> <p>(ստեղծարարություն և գեղագիտություն)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Գրականություն, Օտար լեզու, Հասարակագիտություն, Պատմություն, Արվեստ | |
| Կապը հանրակրթության չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| Մ2, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ34, Մ40, Մ41, Մ42 | |

Թեմա 3

Գիտություն (18 ժամ)

Նպատակ

- Ընդգծել գիտության՝ որպես աշխարհաճանաչման, հասարակության զարգացման և առաջընթացի միջոց,
- Ընդլայնել և ամրապնդել գիտության ճյուղերին, գիտական հայտնագործություններին և հետազոտություններին վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ջարգացնել գիտության տարբեր ճյուղերի և գյուտերի, իր և ուսումնասիրվող լեզվի երկրի նշանավոր գիտնականների, նրանց հանրահայտ բացահայտումների ու հայտնագործությունների վերաբերյալ տեղեկատվության որոնման, հավաքման և վերլուծության կարողություն,
- Ջարգացնել գիտական հայտնագործությունների և հետազոտությունների վերաբերյալ քննարկման մասնակցելու, կարծիք հայտնելու և իր կարծիքը պաշտպանելու կարողություն,
- **Ձևավորել արժևորող վերաբերմունք գիտության՝ որպես մարդկության առաջընթացն ապահովող կարևորագույն գործոնի հանդեպ:**

Վերջնարդյունքներ

| | |
|---|--|
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը • Տրված քերականական նյութը • Գիտության կարևորագույն ճյուղերը | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ գիտության, գիտական հայտնագործությունների թեմայով հայտարարությունները և տեսահաղորդումների (զեղարվեստական/վավերագրական ֆիլմերի) |
|---|--|

- Իր և ուսումնասիրվող լեզվի երկրի ճանաչված գիտնականներին և նրանց կարևորագույն հայտնագործությունները

- հիմնական իմաստը՝ հետևելով նկարագրության կամ փաստարկների զարգացմանը,
- Կարդալ և հասկանալ գիտական թեմաներով տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը՝ առանձնացնելով փաստերը, կարծիքը, պատճառահետևանքային կապերը:
 - Նկարագրել գիտության որևէ ճյուղի հանրահայտ գյուտ՝ ներկայացնելով դրա կիրառականության և առաջընթացի ապահովման դերի մասին սեփական կարծիքը և հիմնավորելով այն փաստարկներով,
 - Կազմել գիտության որևէ նորագույն նվաճման վերաբերյալ թեմաներով փաստարկային շարադրանք՝ անդրադառնալով դրա ազդեցությանը և ներառելով տարբեր աղբյուրներից քաղած տեղեկություններ (150 – 200 բառ):
 - Քննարկել որևէ գյուտ կամ գիտական հայտնագործություն՝ հիմնավորելով իր կարծիքը փաստարկներով, տալով բացատրություններ, մեկնաբանություններ, բերելով հակափաստարկներ:
 - **Դրսևորել գիտությունը՝ որպես մարդկության առաջընթացն ապահովող կարևորագույն գործոնն արժևորող վերաբերմունք:**

Բովանդակություն

1. Գիտության դերը առաջընթացի համար
2. Գիտության ճյուղերը
3. Գիտական հետազոտություններ և հայտնագործություններ

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութի (լուրի, գեղարվեստական կամ վավերագրական ֆիլմի) դիտում և քննարկում • Տեղեկատվական տեքստի ընթերցում և քննարկում • Սահիկաշար՝ «Ռոբոտներն ու մենք. 20 տարի անց» • Բանավեճ՝ «Բջջային հեռախոսներ՝ օգու՞տ, թե՞ վնաս» • Էսսե՝ «Ինտերնետը մեր կյանքում» • Նախագիծ՝ Գիտության բնագավառում վերջին տարիների նորելյան մրցանակակիրները | <p>Գիտատեխնիկական նորարարություն (հասարակություն, տեխնոլոգիական առաջընթաց, զարգացում)</p> <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ (Էվոլյուցիա)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Ինֆորմատիկա, Բնագիտություն, Տիզիկա, Քիմիա, Կենսաբանություն, Մաթեմատիկա, Հասարակագիտություն, Պատմություն, Օտար լեզու | |
| Կապը հանրակրթության չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| Մ2, Մ 7, Մ10, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ21, Մ24, Մ25, Մ27, Մ28, Մ29, Մ31 | |

| | |
|--|---|
| Թեմա 4 | |
| Առեղծվածներ (18 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել առեղծվածների մասին վարկածների և դրանց գիտական մեկնաբանության գաղափարը, • Ընդլայնել և ամրապնդել առեղծվածային երևույթներին և վայրերին վերաբերող թեմատիկ բառապաշարը, • Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ջարգացնել առեղծվածների վերաբերյալ տեղեկատվության որոնման, հավաքման և վերլուծության կարողություն, • Ջարգացնել առեղծվածների և դրանց գիտական բացատրությունների վերաբերյալ քննարկման մասնակցելու, կարծիք հայտնելու և իր կարծիքը պաշտպանելու կարողություն, • Ձևավորել առեղծվածի՝ որպես ապագայում գիտականորեն բացատրելի երևույթի գիտակցություն: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը • Տրված քերականական նյութը • Հանրահայտ առեղծվածներն ու առեղծվածային վայրերը • Բացահայտված առեղծվածների գիտական բացատրությունները | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ առեղծվածների, առեղծվածային վայրերի վերաբերյալ տեսահաղորդումների (գեղարվեստական, վավերագրական ֆիլմերի) հիմնական իմաստը՝ հետևելով նկարագրության ընթացքին կամ փաստարկների զարգացմանը: • Կարողալ և հասկանալ առեղծվածների մասին տեղեկատվական տեքստերի հիմնական |

| | |
|--|---|
| | <p>բովանդակությունը՝ առանձնացնելով փաստերը, կարծիքը, պատճառահետևանքային կապերը,</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել տարբեր գիտահանրամատչելի աղբյուրներից քաղված տեղեկություններ առեղծվածային երևույթների մասին՝ համեմատելով վարկածները, ընդգծելով դրանց ուժեղ և թույլ կողմերը, • Կազմել առեղծվածներ թեմայով փաստարկային շարադրանք՝ ներառելով տարբեր աղբյուրներից քաղած տեղեկությունները (150 – 200 բառ): • Քննարկել որևէ առեղծված՝ ներկայացնելով խնդիրը, դրան անդրադարձող տարբեր վարկածներ, արտահայտելով իր վերաբերմունքը դրանց նկատմամբ: • Դրսևորել առեղծվածի՝ որպես ապագայում գիտականորեն բացատրելի երևույթի գիտակցություն: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Առեղծվածային երևույթներ 2. Առեղծվածային վայրեր 3. Առեղծվածների ուսումնասիրությունը | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութի (հեռուստահաղորդում, լուրեր, վավերագրական, գեղարվեստական ֆիլմ) դիտում և քննարկում | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ</p> <p>(ուսումնասիրություն, հետազոտություն, պեղումներ)</p> |

- Տեղեկատվական տեքստերի ընթերցում և քննարկում
- Սահիկաշար՝ «Բացահայտված և չբացահայտված առեղծվածներ»
- Բանավեճ՝ «Առեղծվածներ. իրականություն, թե՞ միֆ»
- Նամակ գիտահանրամատչելի ամսագրի խմբագրություն՝ անդրադարձ ամսագրում տպված հոդվածին

Գիտատեխնիկական նորարարություն
 (գիտական սկզբունքների ընկալում և կիրառում)

Միջառարկայական կապեր

Գրականություն, Օտար լեզու, Հասարակագիտություն, Պատմություն, Բնագիտություն, Ֆիզիկա, Քիմիա, Կենսաբանություն

Կապը հանրակրթության չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ

Մ2, Մ 7, Մ10, Մ12, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ27, Մ28, Մ29

Թեմա 5

Կոնֆլիկտներ (18 ժամ)

Նպատակ

- Ներմուծել կոնֆլիկտների/կոնֆլիկտային իրավիճակների մշտառկայության և միաժամանակ խաղաղ ճանապարհով լուծելիության գաղափարը,
- Ընդլայնել և ամրապնդել կոնֆլիկտների տեսակներին, դրդապատճառներին և լուծումներին վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ջարգացնել կոնֆլիկտների վերաբերյալ տարբեր աղբյուրներից տեղեկատվության որոնման, հավաքման և վերլուծության կարողություն,
- Ջարգացնել կոնֆլիկտների, դրանց դրդապատճառներին և լուծումների վերաբերյալ քննարկման մասնակցելու, կարծիք հայտնելու և իր կարծիքը պաշտպանելու կարողություն,
- **Ձևավորել կոնֆլիկտների (միջանձնային, միջպետական, միջազգային և այլն) խաղաղ կարգավորումը**

Վերջնարդյունքներ

| | |
|--|--|
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը • Տրված քերականական նյութը • Կոնֆլիկտների հիմնական տեսակներն ու դրանց առաջացման գործոնները (կոնֆլիկտի առարկան, դրդապատճառը և կողմերը) | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ կոնֆլիկտների վերաբերյալ տեսահաղորդումների (գեղարվեստական, վավերագրական ֆիլմերի), զեկույցների հիմնական իմաստը՝ հետևելով նկարագրության ընթացքին կամ փաստարկների զարգացմանը: |
|--|--|

| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Կոնֆլիկտների լուծման/խաղաղ կարգավորման հիմնական ուղիները | <ul style="list-style-type: none"> • Կարողալ և հասկանալ կոնֆլիկտների մասին տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը՝ առանձնացնելով փաստերը, կարծիքը, պատճառահետևանքային կապերը, • Ներկայացնել որևէ կոնֆլիկտի առարկան, դրա պատճառներն ու հետևանքները, լուծման/խաղաղ կարգավորման հիմնական ճանապարհները, • Քննարկել որևէ կոնֆլիկտ՝ ներկայացնելով խնդիրը, դրան անդրադարձող տարբեր վարկածները, արտահայտելով իր վերաբերմունքը դրանց նկատմամբ, առաջարկելով կոնֆլիկտի լուծման եղանակներ: • Կազմել կոնֆլիկտներ թեմայով փաստարկային շարադրանք՝ հիմնավորելով իր կարծիքը (150 – 200 բառ): • Դրսևորել կոնֆլիկտների լուծելիության, խաղաղ կարգավորման հնարավորության/անհրաժեշտության գիտակցություն: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Կոնֆլիկտների տեսակները 2. Կոնֆլիկտների դրդապատճառները 3. Կոնֆլիկտների լուծում/խաղաղ կարգավորում | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |

| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութի (հեռուստահաղորդում, լուրեր, վավերագրական, գեղարվեստական ֆիլմ) դիտում և քննարկում • Տեղեկատվական տեքստերի ընթերցում և քննարկում • Սահիկաշար՝ Կոնֆլիկտների տեսակները և լուծման ուղիները • Բանավեճ Կա՞ն արդյոք անլուծելի կոնֆլիկտներ • Նախագիծ՝ Կոնֆլիկտը մեր առօրյայում (Հարցում՝ Որքա՞ն հաճախ եք խաղաղ լուծում կոնֆլիկտները ձեր կյանքում) • Պաշտոնական նամակ-բողոք՝ արտահայտելով որևէ կոնֆլիկտի/դրա լուծման մասին իր անհամաձայնությունը և առաջարկելով այլ հիմնավոր լուծում | <p>Արդարություն և զարգացում</p> <p>(Ժողովրդավարություն, խաղաղության հաստատում և հակամարտության հաղթահարում)</p> |
| <p>Միջառարկայական կապեր</p> | |
| <p>Գրականություն, Օտար լեզու, Հասարակագիտություն, Պատմություն, ՆԶՊ</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Մ2, Մ14, Մ15, Մ23, Մ24, Մ25, Մ27, Մ28, Մ29, Մ31, Մ37</p> | |

Թեմա 6

Անհատ և հասարակություն (18 ժամ)

Նպատակ

- Ներմուծել քաղաքացու՝ որպես հասարակության անդամի անհատական պատասխանատվության կարևորության գաղափարը,
- Ընդլայնել և ամրապնդել Անհատ և հասարակություն թեմային վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ջարգացնել հասարակության մեջ անհատի դերի մասին տարբեր աղբյուրներից տեղեկատվության որոնման, հավաքման և վերլուծության կարողություն,
- Ջարգացնել հասարակության մեջ անհատի դերի և հասարակական բարքերի վերաբերյալ քննարկման մասնակցելու, իրազեկված կարծիք հայտնելու, այն պաշտպանելու կարողություն,
- **Խթանել ընթացիկ, հասարակական հնչեղության իրադարձությունների նկատմամբ իրազեկված և հիմնավորված դիրքորոշում ձևավորելու/ունենալու գիտակցությունը:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը
- Տրված քերականական նյութը
- Հասարակական հնչեղություն ունեցող հարցերի որոշ մանրամասները

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ հասարակությունում անհատի ունեցած դերի, հասարակական բարքերի վերաբերյալ տեսահաղորդումների (գեղարվեստական, վավերագրական ֆիլմերի), զեկույցների հիմնական

| | |
|--|---|
| | <p>ինաստը՝ հետևելով նկարագրության ընթացքին կամ փաստարկների զարգացմանը:</p> <ul style="list-style-type: none"> • Կարդալ և հասկանալ անհատ և հասարակություն, հասարակական բարքեր թեմային առնչվող տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը՝ առանձնացնելով փաստերը, կարծիքը, պատճառահետևանքային կապերը: • Ներկայացնել հասարակական հնչեղություն ունեցող որևէ հարցի/իրադարձության շուրջ սեփական դիրքորոշումը՝ հղում անելով այլ աղբյուրների, համեմատելով այլ վարկածների/փաստարկների ուժեղ և թույլ կողմերը, հիմնավորելով իր տեսակետը: • Կազմել հասարակական հնչեղության իրադարձության մասին փաստարկային շարադրանք՝ արտահայտելով իր դիրքորոշումը (150 – 200 բառ): • Քննարկել հասարակական հնչեղության իրադարձություն (քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլն)՝ արտահայտելով սեփական վերաբերմունքը դրանց նկատմամբ: • Դրսևորել ընթացիկ, հասարակական հնչեղության իրադարձությունների նկատմամբ իրազեկված և հիմնավորված դիրքորոշում: • |
|--|---|

Բովանդակություն

1. Ես և իմ համայնքը
2. Հասարակական բարքեր

3. Իմ դիրքորոշումը ընթացիկ, հասարակական հնչեղության իրադարձությունների նկատմամբ (քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլն

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութի (հեռուստահաղորդում, լուրեր, վավերագրական, գեղարվեստական ֆիլմ) դիտում և քննարկում • Տեղեկատվական տեքստերի ընթերցում և քննարկում • Սահիկաշար՝ Հասարակական հնչեղության հարցեր/իրադարձություններ • Բանավեճ՝ «Հասարակական նորմե՞ր, թե՞ անհատի ազատություններ» • Նախագիծ՝ «Իմ համայնքի/երկրի հասարակական հնչեղության խնդիրը/իրադարձությունը» • Նամակ/հոդված/բլոգ/վլոգ | <p>Անհատ և հարաբերություններ (մարդու բնույթ և մարդկային արժանապատվություն)</p> <p>Անհատական և մշակութային արտահայտչականություն (համոզմունքներ և արժեքներ)</p> <p>Միջառարկայական կապեր</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Գրականություն, Հասարակագիտություն, Օտար լեզու, Պատմություն | |
| Կապը հանրակրթության չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| Մ2, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ23, Մ24, Մ25, Մ27, Մ28, Մ29, Մ30, Մ32, Մ34, Մ35, Մ36, Մ37, Մ38, Մ39 | |

Տասնմեկերորդ դասարան

| | |
|--|--|
| Թեմա 1 | |
| Մասնագիտություն (18 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել մասնագիտությունների բազմազանությունից սեփական կարողությունների և նախընտրությունների հիման վրա ընտրության կարևորության գաղափարը, • Ջարգացնել մասնագիտություններին վերաբերող թեմատիկ բառապաշարը, • Ներմուծել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ջարգացնել տարբեր մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության որոնման, հավաքման և վերլուծության կարողություն, • Ջարգացնել նախընտրած մասնագիտության կարևորության և արդիականության մասին քննարկման մասնակցելու, կարծիք հայտնելու և իր կարծիքը պաշտպանելու կարողություն, • Ձևավորել աշխատանքը և բոլոր մասնագիտությունները կարևորող, հարգալից վերաբերմունք: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Տեղեկություններ տարբեր մասնագիտությունների մասին, | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ տարբեր մասնագիտությունների և մասնագիտական ոլորտների մասին ելույթների, լեզվակիրների գրույցի, մեդիա նյութերի բովանդակության մեծ մասը, |

- Մանրամասներ իր նախընտրած մասնագիտության մասին:

- Կարդալ և հասկանալ աշխատանքի և մասնագիտությունների մասին տարբեր տեղեկատվական տեքստեր, այդ թվում՝ աշխատանքի հայտարարություններ՝ հասկանալով առաջադրվող պահանջները, պահանջվող հմտությունները, դիմելու ընթացակարգին վերաբերող ցուցումները:
- Ներկայացնել իրենք հետաքրքրող մասնագիտությունը՝ հիմնավորելով այդ ընտրությունը տարբեր աղբյուրներից քաղված տեղեկություններով և սեփական փաստարկներով, արձագանքելով լսարանի ճշգրտող հարցերին,
- Կազմել դիմում-նամակ գործատուին՝ ներկայացնելով իրեն, իր հետաքրքրության շրջանակը և դիմելու մոտիվացիան:
- Քննարկման ընթացքում հանպատրաստից հաղորդակցվել մասնագիտության ընտրության թեմայով՝ հիմնավորելով իր տեսակետը համոզիչ փաստարկներով և արձագանքելով այլոց փաստարկներին:
- Սպառիչ պատասխանել հարցազրույցի ժամանակ տրված հարցերին՝ հղում անելով իր ինքնակենսագրությանը,
- Դրսևորել հարգալից վերաբերմունք աշխատանքի և տարբեր մասնագիտությունների նկատմամբ:
- Գիտակցել սեփական ուժերի ճիշտ գնահատման կարևորությունը մասնագիտության ընտրության հարցում:

Բովանդակություն

1. Մասնագիտությունների տեսակներ
2. Մասնագիտության իմ ընտրությունը
3. Աշխատանք առանց կարծրատիպերի

Առաջարկվող գործունեության ձևեր

Ընդհանրական գաղափարներ

- Դերախաղ
- Մեղիա նյութերի դիտում և քննարկում
- Սահիկաշար՝ «Ինձ հետաքրքրող մասնագիտությունները»
- Բանավեճ՝ «Աշխատանք և կարծրատիպեր»
- Հետազոտական նախագիծ՝ «Արդի մասնագիտություններ»
- Դիմում-նամակ գործատուին
- Ինքնակենսագրություն
- Հարցազրույց աշխատանքի ընդունվելիս (կամավորական, մասնագիտական և այլն)

Արդարություն և զարգացում

(ապագա մասնագիտության ճիշտ ընտրությունը և աշխատանքի կարևորությունը որպես հասարակության զարգացման գրավական)

Միջառարկայական կապեր

Գրականություն, Պատմություն, Հասարակագիտություն, Օտար լեզու, Ինֆորմատիկա

Կապը հանրակրթության չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ

Մ2, Մ12, Մ14, Մ15, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ31, Մ32, Մ33, Մ34, Մ35, Մ47, Մ48

| Թեմա 2 | |
|--|--|
| Բժշկություն (18 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել գիտական առաջընթացի շնորհիվ բժշկության շարունակական զարգացման գաղափարը, • Ջարգացնել բժշկությանը վերաբերող թեմատիկ բառապաշարը, • Ներմուծել թեմային համապատասխան քերականական նյութը, • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն), • Ջարգացնել բժշկության զարգացման պատմության, հիվանդությունների կանխարգելման և առողջության պահպանման վերաբերյալ տեղեկատվության որոնման, հավաքման և վերլուծության կարողություն, • Ջարգացնել հիվանդությունների կանխարգելման և առողջության պահպանման կարևորության մասին քննարկման մասնակցելու, կարծիք հայտնելու և իր կարծիքը պաշտպանելու կարողություն, • Ամրապնդել առողջությունը, առողջ ապրելակերպի շնորհիվ հիվանդությունների կանխարգելումը կարևորող գիտակցությունը: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Տեղեկություններ բժշկության ճյուղերի, մասնագիտացումների, բժշկագիտության առաջընթացի և առողջ ապրելակերպի մասին: | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ բժշկության և հիվանդությունների թեմայով մեդիա հաղորդումների և էլույթների բովանդակության մեծ մասը՝ տարանջատելով հիմնական մտքերը և փաստերը, ախտանշանների նկարագրությունը, զարգացումը, բուժման մեթոդները, ցուցումները, կանխատեսումները, |

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Կարդալ և հասկանալ բժշկության ճյուղերի և մասնագիտացումների, բժշկագիտության առաջընթացի, հիվանդությունների կանխարգելման, առողջ ապրելակերպի մասին տեղեկատվական տեքստերի հիմնական բովանդակությունը՝ մանրամասների միջոցով ճանաչելով հեղինակի մտադրությունը, • Կարդալ և հասկանալ բժշկի հրահանգները և դեղորայքի օգտագործման եղանակի ցուցումները և հակացուցումները, • Ներկայացնել ելույթ բժշկության ճյուղերին կամ զարգացման պատմությանը վերաբերող որևէ թեմայով՝ բերելով փաստարկներ և հղումներ անելով սկզբնաղբյուրներին, • Կազմել շարադրանք՝ հստակ և մանրամասն նկարագրելով առողջական վիճակը, գանգատները, ախտանշանները, նախկինում ստացած բուժումը՝ պահպանելով մտքերի տրամաբանական և իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը, • Քննարկել բժշկագիտության առաջընթացը փաստող որևէ զարգացում՝ արտահայտելով իր կարծիքը, բերելով փաստարկներ, արձագանքելով այլոց փաստարկներին, • Գիտակցել հիվանդությունների կանխարգելման և առողջ ապրելակերպի կարևորությունը: |
| Բովանդակություն | |
| 1. Բժշկության ճյուղեր և մասնագիտացումներ | |

2. Հիվանդությունների կանխարգելում, առողջ ապրելակերպ
3. Բժշկագիտության առաջընթացը

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Դեղորայքի օգտագործման ցուցումների (ներդիր-թերթիկի) ընթերցում և քննարկում • Մեղիա նյութերի դիտում և քննարկում • Սահիկաշար՝ «Բժշկության ուղղություններն ու ճյուղերը» • Քննարկում՝ «Առողջ ապրելակերպը որպես հիվանդությունների կանխարգելման միջոց» • Հետազոտական նախագիծ՝ «Բժշկագիտության առաջընթացը» • Նամակ բժշկին (հեռաբժշկություն) • Էսսե՝ «XXI դարի մարտահրավերները» | <p>Գիտատեխնիկական նորարարություն (բժշկագիտության առաջընթացը և մարդու առողջ ապրելակերպի անհրաժեշտությունը)</p> <p>Միջգիտակարգայնություն՝ տարբեր գիտական ուղղությունների փոխկապակցվածությունը բժշկագիտության զարգացման նպատակով</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Գրականություն, Օտար լեզու, Պատմություն, Մաթեմատիկա, Կենսաբանություն, Քիմիա, Ֆիզիկա, Ինֆորմատիկա | |
| Կապը հանրակրթության չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| Մ2, Մ7, Մ8, Մ10, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ31, Մ43, Մ44, Մ45 | |

Թեմա 3

Քաղաքական համակարգեր (18 ժամ)

Նպատակ

- Ներմուծել քաղաքական համակարգերի մասին գաղափարը,
- Ջարգացնել քաղաքական համակարգերին վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- Ընդլայնել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ջարգացնել քաղաքական համակարգերի վերաբերյալ տեղեկատվության որոնման և հավաքման կարողություն,
- Ջարգացնել քաղաքական համակարգերի համեմատական վերլուծության կարողություն,
- Ջարգացնել քաղաքական իրադարձությունների մասին տարբեր աղբյուրներից հավաստի տեղեկությունների հավաքման և վերլուծության կարողություն,
- **Ձևավորել քաղաքականության մասին իրազեկ լինելու կարևորության գիտակցություն:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը,
- Տրված քերականական նյութը,
- Ուսումնասիրվող լեզվի երկր(ներ)ի և Հայաստանի քաղաքական համակարգերը,
- Պատմության մեջ հետք թողած հայտնի քաղաքական գործիչներին, նրանց ունեցած ներդրումը:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ քաղաքական իրադարձությունների և գործիչների մասին մեդիա հաղորդումների կամ ձայնագրված այլ նյութերի բովանդակության հիմնական մասը,
- Կարդալ և հասկանալ քաղաքական թեմայով տեղեկատվական նյութերի/մամուլի հոդվածների

| | |
|--|--|
| | <p>բովանդակության հիմնական մասը՝ առանձնացնելով հիմնավորող փաստարկները,</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել Հայաստանի կամ ուսումնասիրվող լեզվի երկր(ներ)ի քաղաքական համակարգերը՝ համեմատելով դրանց տարրերը, և որևէ ընթացիկ քաղաքական իրադարձություն՝ անդրադառնալով առանցքային մանրամասներին և արտահայտելով իր կարծիքը դրանց մասին, • Կազմել գրավոր շարադրանք քաղաքական որևէ հարց վերաբերյալ՝ ներկայացնելով խնդրի նկատմամբ իր մոտեցումը և առաջադրելով լուծման տարբերակ (200 – 250 բառ), • Քննարկել որևէ քաղաքական իրադարձություն՝ իր կարծիքը հիմնավորելով նաև տարբեր աղբյուրներից քաղված տեղեկություններով, տալով հարցեր և պատասխանելով իրեն ուղղված հարցերին, • Դրսևորել ընթացիկ քաղաքական իրադարձությունների մասին իրազեկ լինելու գիտակցություն: |
| | |
| <ol style="list-style-type: none"> 1. Քաղաքական համակարգերի տեսակները (ուսումնասիրվող լեզվի երկիր, Հայաստան) 2. Պատմության մեջ հետք թողած հայտնի քաղաքական գործիչներ | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |

| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ՝ «Քաղաքական լրահոս» • Տեսահոլովակի/ֆիլմի դիտում և քննարկում • Տեքստի ընթերցում և քննարկում • Սահիկաշար՝ «Քաղաքական համակարգը տարրերը Հայաստանում/ուսումնասիրվող լեզվի երկր(ներ)ում» • Քննարկում՝ «Ժողովրդավարության մասին իմ պատկերացումները»/ «Նշանակալի ընթացիկ քաղաքական իրադարձություն» • Հոդված/բլոգ՝ «Շարաթվա/ամսվա կարևորագույն քաղաքական իրադարձության վերլուծություն» • Հետազոտական նախագիծ՝ «Մարդկության պատմության կարևոր քաղաքական գործիչներն ու իրադարձությունները» | <p>Գլոբալիզացիա և կայուն զարգացում</p> <p>(քաղաքական համակարգերը և անհատները համաշխարհային գործընթացներում)</p> |
| <p>Միջառարկայական կապեր</p> | |
| <p>Գրականություն, Օտար լեզու, Աշխարհագրություն, Պատմություն, Հասարակագիտություն, Ինֆորմատիկա</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Մ2, Մ12, Մ14, Մ15, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ35, Մ36, Մ38</p> | |

Թեմա 4

Էկոլոգիա (18 ժամ)

Նպատակ

- Ջարգացնել բնության և մարդու կապի, բնության վրա մարդու ազդեցության և բնապահպանական խնդիրների գաղափարը,
- Ամրապնդել և ընդլայնել էկոլոգիային վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ջարգացնել բնության և մարդու կապի, բնության վրա մարդու ազդեցության և բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության որոնման, հավաքման և վերլուծության կարողություն,
- Ջարգացնել բնապահպանական խնդիրների կարևորության մասին քննարկման մասնակցելու, կարծիք հայտնելու և իր կարծիքը պաշտպանելու կարողություն,
- **Ձևավորել հոգատար և պատասխանատու վերաբերմունք բնության հանդեպ:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը,
- Տրված քերականական նյութը,
- Տեղեկություններ և փաստեր մարդու՝ բնության վրա ունեցած ազդեցության մասին,
- Էկոլոգիպես մաքուր վայրերի/երկրների մասին:

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ մարդու և բնության կապը կամ մարդու՝ բնության վրա ունեցած ազդեցությունը նկարագրող մեղիա հաղորդումների և ելույթների հիմնական իմաստը,
- Կարդալ և հասկանալ բնապահպանական խնդիրների մասին տեղեկատվական և այլ

| | |
|---|--|
| | <p>տեքստերի հիմնական բովանդակությունը՝ վեր հանելով կարևոր մտքերը, առանձնացնելով փաստերը կարծիքից, ճանաչելով հեղինակի մտադրությունը,</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել Հայաստանի արդի բնապահպանական խնդիրները՝ համեմատելով դրանք այլ (այդ թվում նաև ուսումնասիրվող լեզվի երկր(ներ)ի խնդիրների հետ), բերելով այդ խնդիրների լուծման օրինակներ, • Կազմել փաստարկային շարադրանք իր համայնքում առկա էկոլոգիական խնդրի մասին՝ ներկայացնելով խնդրի նախապատմությունը, պատճառները, խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկված և ձեռնարկվելիք քայլերը, • Քննարկել բնապահպանական գլոբալ խնդիրներ՝ դիտարկելով դրանք պատճառահետևանքային փոխկապակցվածության մեջ, հղումներ անելով գիտական փաստերին, • Դրսևորի հոգատար և պատասխանատու վերաբերմունք բնության հանդեպ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Բնության և մարդու կապը, մարդու ազդեցությունը բնության վրա 2. Գլոբալ խնդիրներ, էկոլոգիապես մաքուր վայրեր/երկրներ | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |

| | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսահոլովակի/ֆիլմի դիտում և քննարկում • Տեքստի ընթերցում և քննարկում • Սահիկաշար՝ «Էկոլոգիապես մաքուր կամ աղտոտված երկրներ/վայրեր» • Բանավեճ՝ «Տնտեսական օգուտն ընդդեմ բնությանը հասցված վնասի» • Նախագիծ՝ «Իմ համայնքի բնապահպանական խնդիրները» • Էսսե/հոդված՝ «Իմ համայնքի բնապահպանական խնդիրները» | <p>Կայունություն և փոփոխություն</p> <p>(Էկոլոգիական խնդիրներ, մարդու ազդեցությունը բնության վրա)</p> |
| <p>Միջառարկայական կապեր</p> | |
| <p>Աշխարհագրություն, Պատմություն, Ինֆորմատիկա, Օտար լեզու, Կենսաբանություն, Քիմիա, Ֆիզիկա, Հասարակագիտություն</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Մ2, Մ8, Մ9, Մ10, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ30</p> | |

Թեմա 5

Պատմություն (18 ժամ)

Նպատակ

- Ընդգծել հասարակական կյանքում պատմական նշանակալի իրադարձությունների, պատմական դեմքերի և պատմագրության հավաստիության կարևորության գաղափարը,
- Ջարգացնել պատմությանը վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ջարգացնել պատմության ընթացքի և պատմական նշանակալի իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվության որոնման, հավաքման և վերլուծության կարողություն,
- Ջարգացնել պատմական նշանակալի իրադարձությունների ազդեցության, պատմական փաստերի հավաստիության մասին քննարկման մասնակցելու, կարծիք հայտնելու և իր կարծիքը պաշտպանելու կարողություն,
- Ձևավորել հասարակական կյանքում պատմական իրադարձությունների ու օրինաչափությունների նկատմամբ քննական մոտեցում ունենալու կարևորությունը,
- Ձևավորել պատմագրության հավաստիության կարևորման գիտակցություն:

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը,
- Տրված քերականական նյութը,
- Համաշխարհային և հայոց պատմության նշանակալի իրադարձությունների, հայ ու ուսումնասիրվող լեզվի

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ պատմական նշանակալի իրադարձությունների թեմաներով մեղիա հաղորդումների (փաստավավերագրական ֆիլմերի) և էլույթների հիմնական միտքը,

երկրի պատմության մեջ նշանակալի դեր ունեցած/ունեցող դեմքերի մասին:

- Կարդալ և հասկանալ պատմական իրադարձություններին վերաբերող հոդվածների հիմնական բովանդակությունը ճանաչելով փաստերը, վեր հանելով հեղինակի արտահայտած տեսակետը,
- Ներկայացնել ելույթ պատմական նշանակալից որևէ իրադարձության մասին՝ պահպանելով մտքերի տրամաբանական հաջորդականությունը, բերելով փաստարկներ և պատշաճ կերպով հղում անելով սկզբնաղբյուրներին:
- Վարել նամակագրություն (թղթային կամ էլեկտրոնային) կարևոր նշանակություն ունեցող որևէ արդի իրադարձության մասին շեշտելով դրա նշանակությունը,
- Քննարկել պատմական որևէ իրադարձության նախապայմանները, պատճառը, առիթը, զարգացումը և հետագա ազդեցությունը՝ հղում անելով հավաստի աղբյուրների, տրամաբանորեն շաղկապելով հավաքված տեղեկությունները, արտահայտելով իր կարծիքը պատմական տվյալ իրադարձության ազդեցության վերաբերյալ,
- Քննարար մոտենալ պատմական առանցքային իրադարձությունների և պատմություն կերտողների՝ հասարակական կյանքում ունեցած դերին:
- Կարևորել պատմական իրադարձության մասին մի քանի, այդ թվում՝ առաջնային աղբյուրներից (օրինակ՝ ականատեսներ, արխիվային փաստաթղթեր և այլն) տեղեկատվության ստացումը:

Բովանդակություն

1. Համաշխարհային պատմության նշանակալի իրադարձություններ
2. Պատմություն կերտողները,
3. Պատմագրության հավաստիությունը

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսահոլովակի/ֆիլմի դիտում և քննարկում • Տեքստի ընթերցում և քննարկում • Սահիկաշար՝ «Պատմություն կերտողները» • Նախագիծ՝ «Պատմության նշանակալի իրադարձությունները. հավաստի պատմագրություն» • Նամակ պատմական հերոսին կամ դերակատարին | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ (անհատների և պատմական իրադարձությունների ազդեցությունը)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| Գրականություն, Պատմություն, Աշխարհագրություն, Հասարակագիտություն, Ինֆորմատիկա. Օտար լեզու | |
| Կապը հանրակրթության չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| Մ2, Մ7, Մ11, Մ12, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ40, Մ41, Մ42 | |

Թեմա 6

Տիեզերք (18 ժամ)

Նպատակ

- Ներմուծել տիեզերքի ծագման շուրջ տարբեր մոտեցումների, դրա անսահմանության մասին ընկալումների գաղափարը,
- Ջարգացնել տիեզերքին վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- Ընդլայնել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ջարգացնել տիեզերքի վերաբերյալ տեղեկատվության որոնման, հավաքման և վերլուծության կարողություն,
- Ջարգացնել տիեզերքի մասին քննարկման մասնակցելու, կարծիք հայտնելու և իր կարծիքը պաշտպանելու կարողություն,
- Խթանել տիեզերքի մասին քննարկումներում երևակայության հիման վրա ստեղծագործական մտածական կարողությունները,
- **Ձևավորել մարդու, Երկիր մոլորակի և տիեզերքի միջև անքակտելի կապի գիտակցությունը:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը,
- Տրված քերականական նյութը,
- Տեղեկություններ տիեզերքի առաջացման մասին տարբեր տեսությունների, դրա կառուցվածքի մասին,

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ տիեզերքի մասին տեսանյութերի և ելույթների հիմնական իմաստը՝ ճանաչելով փաստերի հաջորդականությունը և տրամաբանական կապը:
- Կարդալ և հասկանալ տիեզերքի, հայտնի տիեզերագնացների և նրանց առօրյայի մասին տեղեկատվական տեքստերի հիմնական

| | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • հայտնի տիեզերագնացների և նրանց առօրյայի մասին: | <p>ինաստը՝ վեր հանելով կարևոր մտքերը, առանձնացնելով փաստերը կարծիքից, ճանաչելով հեղինակի մտադրությունը,</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել էլույթ «Կյանքը տիեզերքում» թեմայով՝ բերելով տեղեկույթ գիտահանրամատչելի աղբյուրներից, անելով պատշաճ հղումներ և բերելով սեփական մոտեցումները հիմնավորող փաստարկներ: • Կազմել փաստարկային, նկարագրական կամ երևակայական շարադրանք՝ տիեզերքի ուսումնասիրությունների կամ որևէ առեղծվածային դեպքի մասին՝ ըստ անհրաժեշտության համադրելով տարբեր աղբյուրներից ստացած տեղեկությունները և պատշաճ հղումներ անելով այդ աղբյուրներին (200-250 բառ), • Պատասխանել տիեզերքի ուսումնասիրությունների, առեղծվածների, հայտնի տիեզերագնացների մասին հարցերին, հիմնավորելով իր կարծիքը, և հարցեր ուղղել զրուցակցին, • Գիտակցել մարդու, Երկիր մոլորակի և տիեզերքի անքակտելի կապի կարևորությունը: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Տիեզերքի առեղծվածը 2. Հայտնի տիեզերագնացներ 3. Կյանքը տիեզերքում 4. Տիեզերագնացների առօրյան | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |

| | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսահոլովակի/ֆիլմի դիտում և քննարկում • Տեքստի ընթերցում և քննարկում • Սահիկաշար/Էլ. պաստառ՝ «Հայտնի տիեզերագնացները» • Էսսե՝ «Տիեզերքում» • Քննարկում՝ «Կյանքը այլ մոլորակի վրա» • Նախագիծ՝ «Տիեզերքի գաղտնիքները» /խմբային աշխատանք/ | <p>Գիտատեխնիկական նորարարություն</p> <p>(մարդու և տիեզերքի կապը, գիտության ազդեցությունը և տիեզերքի նվաճումը մարդկության կողմից)</p> |
| <p>Միջառարկայական կապեր</p> | |
| <p>Գրականություն, Պատմություն, Օտար լեզու, Աշխարհագրություն, Ֆիզիկա, Քիմիա, Կենսաբանություն</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Մ2, Մ7, Մ10, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29</p> | |

Տասներկուերորդ դասարան

| | |
|---|---|
| Թեմա 1 | |
| Քաղաքակրթություն (18 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել քաղաքակրթության՝ որպես մարդկության զարգացման աստիճանի գաղափարը: • Ծանոթացնել քաղաքակրթություն, քաղաքակրթական էվոլյուցիա եզրույթին, ինչպես նաև մարդկությանը հայտնի անցյալի ու ժամանակակից քաղաքակրթություններին: • Ներմուծել քաղաքակրթություններ/ քաղաքակրթական էվոլյուցիա թեմային բնորոշ բառապաշարը : • Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը: • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն): • Ջարգացնել մարդկությանը հայտնի հին ու ժամանակակից քաղաքակրթությունների վերաբերյալ տեղեկատվություն որոնելու, հավաքելու, համեմատելու /համադրելու, ինչպես նաև քաղաքակրթական էվոլյուցիան վերլուծելու հմտություն, • Ջարգացնել քաղաքակրթական էվոլյուցիայի մասին քննարկման մասնակցելու, կարծիք հայտնելու և իր կարծիքը պաշտպանելու կարողություն, • Ձևավորել հին և ժամանակակից քաղաքակրթությունների կապի և շարունակականության գիտակցությունը: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը • Տրված քերականական նյութը | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ քաղաքակրթություն թեմային առնչվող մեղիա հաղորդումների բովանդակությունը, խոսողի տեսակետը և |

| | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Հին (Հին Եգիպտոս, Հին Հունաստան, Հին Հռոմ, ացտեկներ, մայաներ և այլն) ու ժամանակակից քաղաքակրթությունները, դրանց առանձնահատկությունները և էվոլյուցիոն զարգացումը: | <p>վերաբերմունքը՝ ճանաչելով առանձին մանրամասների և մտքերի միջև տրամաբանական կապը:</p> <ul style="list-style-type: none"> • Կարդալ և հասկանալ քաղաքակրթություն թեմայի շրջանակում գիտահանրամատչելի հոդվածներ՝ ճանաչելով տեքստում առաջ քաշված վարկածների և եզրահանգումների միջև կապը: • Հանդես գալ «Քաղաքակրթություն» թեմայով զեկուցումով՝ ամփոփելով այն սեփական և այլ տեսակետների վերլուծության և համադրության հիման վրա ձևակերպված եզրահանգումներով: • Կազմել «Քաղաքակրթություն» թեմայով շարադրանք՝ համադրելով և գնահատելով տարբեր աղբյուրներից քաղած տեղեկություններն ու փաստարկները, անելով պատշաճ հղումներ սկզբնաղբյուրներին (250 – 280 բառ): • Քննարկել քաղաքակրթության էվոլյուցիան՝ պատասխանելով իրեն ուղղված հարցերին, նախապես հավաքված փաստերի հիման վրա ձևակերպելով իր կարծիքը, հիմնավորելով իր մոտեցումները, և տալով հարցեր խոսակիցներին: • Արժևորել հին քաղաքակրթությունների ձեռքբերումները ժամանակակից քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման գործում: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Մարդկությանը հայտնի քաղաքակրթությունները 2. Քաղաքակրթական էվոլյուցիա 3. Ժամանակակից քաղաքակրթությունը | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |

| | |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութի (լուրի, գեղարվեստական կամ վավերագրական ֆիլմի) դիտում և քննարկում • Տեղեկատվական տեքստի ընթերցում և քննարկում • Սահիկաշար՝ «Այլ քաղաքակրթություններ, այլ բարքեր»/ «Մարդկությանը հայտնի քաղաքակրթությունները» • Բանավեճ՝ «Արդի քաղաքակրթություն՝ հնարավորություններ, թե՞ սահմանափակումներ» • Նախագիծ՝ «Արդի քաղաքակրթական նորմերը» • Փաստարկային էսսե՝ «Քաղաքակիրթ հասարակություն՝ ինչպիսի՞ն է այն» • Այցելություն թանգարան (վիրտուալ) | <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ (դարաշրջաններ, նորմեր, զարգացում)</p> |
| <p>Միջառարկայական կապեր</p> | |
| <p>Գրականություն, Համաշխարհային պատմություն, Հասարակագիտություն, Օտար լեզու</p> | |
| <p>Կապը հանրակրթության չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</p> | |
| <p>Մ2, Մ7, Մ10, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ18, Մ21, Մ23, Մ24, Մ25, Մ28, Մ29, Մ35, Մ40, Մ41, Մ42</p> | |

| Թեմա 2 | |
|--|--|
| Թարգմանության արվեստը (18 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել թարգմանությունը որպես միջմշակութային հաղորդակցության և փաստագրության միջոցի գաղափարը: • Ներմուծել թեմային բնորոշ բառապաշարը: • Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն): • Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը: • Ձևավորել թարգմանության ենթակա տեքստի վերլուծության և հեղինակի մտադրությունը ճանաչելու կարողություններ: • Ձևավորել մասնագիտական/տեխնիկական և գեղարվեստական տեքստեր թարգմանելու հմտությունները՝ ծանոթացնելով այդ տեքստերի թարգմանության յուրահատկություններին: • Զարգացնել բնագիրն ու թարգմանությունը/թարգմանությունները իրար հետ համեմատելու հմտությունները: • Ձևավորել թարգմանության՝ որպես միջմշակութային հաղորդակցության միջոցի և ազգային մշակույթի անբաժանելի մասի գիտակցությունը: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը • Տրված քերականական նյութը • Թարգմանության տեսակների մասին որոշ գիտելիքներ (գեղարվեստական և ոչ-գեղարվեստական թարգմանություն) | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ նույն ստեղծագործության/տեքստի երկու լեզուներով կենդանի հնչող կամ հեռարձակվող բնագիրն ու թարգմանությունը՝ համադրելով դրանք իրար հետ և վեր հանելով թարգմանության մեջ հանդիպող յուրահատկությունները: |

- Թարգմանության արվեստի որոշ առանձնահատկություններ (փոխակերպումներ):
- Թարգմանչաց տոնի/ «Կանթեղ» մրցանակաբաշխության մասին:
- Ուսումնասիրվող լեզվից հայերեն և հակառակը թարգմանչական արվեստի որոշ գոհարներ:

- Կարդալ և հասկանալ ստեղծագործության/տեքստի բնօրինակը՝ վեր հանելով հեղինակի մտադրությունը, առանձնացնելով գեղարվեստական/փաստացի արժեք ներկայացնող հատվածները:
- Կարդալ և հասկանալ տարբեր թեմաներով վերլուծական/գիտահանրամատչելի/մասնագիտացված հոդվածներ՝ տերմինաբանությունը ճշգրիտ հասկանալու համար պարբերաբար օգտագործելով բառարան,
- Ներկայացնել որևէ ստեղծագործության թարգմանության իր տարբերակը՝ բացատրելով իր մոտեցումները:
- Կատարել պարզ գրավոր թարգմանություններ՝ բառարանի օգտագործմամբ, ըստ անհրաժեշտության:
- Կատարել պարզ կենցաղային գրույցների բանավոր թարգմանություն:
- Վերարտադրել օտար լեզվով բնագիր տեքստի բովանդակությունը մայրենիով և հակառակը:
- Քննարկել տրված միևնույն ստեղծագործության սեփական թարգմանությունները՝ առաջարկելով իրենց անհատական տարբերակները, հիմնավորելով իրենց մոտեցումները:
- **Կարևորել թարգմանության դերը որպես միջմշակութային հաղորդակցության միջոց և ազգային մշակույթի տարր:**

Բովանդակություն

1. Թարգմանությունը որպես միջմշակութային հաղորդակցություն
2. Թարգմանչական արվեստի գոհարները
3. Թարգմանչաց տոն
4. Ես թարգմանիչ եմ

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Թարգմանությունների ունկնդրում • Թարգմանությունների ընթերցում և քննարկում • Գրավոր թարգմանություն երկլեզու բառարաններով/ առցանց բառարանով • Թարգմանչական մրցույթ՝ «Ես թարգմանիչ եմ» • Նախագիծ՝ «Թարգմանչաց տոն» (գրական-երաժշտական ցերեկույթ) • Վիկիպեդիայի հոդվածների թարգմանություն | <p>Անհատական և մշակութային արտահայտչականություն (լեզվական համակարգերի միջոցով գաղափարների և զգացմունքների բացահայտում)</p> <p>Կողմորոշում ժամանակի և տարածության մեջ (միջմշակութային հաղորդակցություն)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| <p>Հայոց լեզու, Գրականություն, Օտար լեզու, Հասարակագիտություն, Պատմություն</p> | |
| Կապը հանրակրթության չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| <p>Մ1, Մ2, Մ12, Մ14, Մ15, Մ23, Մ24, Մ28, Մ29, Մ40, Մ41, Մ42</p> | |

| Թեմա 3 | |
|---|---|
| Կրոններ (18 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> Ներմուծել կրոնի՝ որպես հասարակական գիտակցության ձևի ու աշխարհայացքի գաղափարը: Լուսաբանել կրոնը ժամանակակից հասարակությունում Ծանոթացնել աշխարհի գերիշխող կրոններին, նրանց ծեսերին, սովորույթներին, ավանդույթներին: Ընդլայնել թեմային բնորոշ բառապաշարը: Ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը: Զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն) Զարգացնել աշխարհի կրոնների վերաբերյալ տեղեկատվություն որոնելու, հավաքելու, համեմատելու /համադրելու, վերլուծելու հմտություն, Զարգացնել կրոնի (դրա դրսևորումների, դերի) մասին հիմնավորված քննարկում վարելու կարողություն, Ձևավորել հարգալից վերաբերմունք այլ կրոնների հանդեպ: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է հիմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> Թեմային առնչվող բառապաշարը Տրված քերականական նյութը Համաաշխարհային կրոնների, նրանց ծեսերի, սովորույթների մասին որոշ տեղեկություններ | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> Լսել և հասկանալ կրոններին, սովորույթներին, ավանդույթներին առնչվող մեղիա հաղորդումների կամ ձայնագրված նյութերի բովանդակությունը՝ մտքերի տրամաբանական կառուցվածքի հիման վրա ընկալելով խոսողի տեսակետը և վերաբերմունքը: |

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> • Կարդալ և հասկանալ թեմայի շրջանակում լրագրային, վերլուծական հոդվածներ՝ ճանաչելով տեքստում առաջ քաշված վարկածների և եզրահանգումների միջև կապը: • Ներկայացնել ելույթ «Կրոնը ժամանակակից հասարակությունում» կամ «Օեսեր, ավանդույթներ, սովորույթներ» թեմաներով՝ անելով հղումներ տարբեր աղբյուրներին, արտահայտելով և հիմնավորելով իր տեսակետը: • Կազմել վերլուծական շարադրանք՝ հավաքելով, համադրելով և գնահատելով տարբեր աղբյուրներից քաղված տեղեկությունները կրոնը ժամանակակից հասարակությունում թեմայի շուրջ: • Քննարկել աշխարհի գերիշխող կրոնների միջև ընդհանրությունները և տարբերությունները նախապես քաղված տեղեկությունների հիման վրա՝ ցուցաբերելով մտքերի հստակ փոխկապվածություն, բերելով համոզիչ մեկնաբանություններ և արձագանքելով այլոց կարծիքներին: • Դրսևորել հարգալից վերաբերմունք այլ կրոնների հանդեպ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Աշխարհի կրոնները 2. Օեսեր, սովորույթներ, ավանդույթներ 3. Կրոնը ժամանակակից հասարակությունում | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Մահիկաշար «Աշխարհի կրոնները» • Տեսանյութի (լուրի, գեղարվեստական կամ վավերագրական ֆիլմի) դիտում և քննարկում | <p>Անհատ և հարաբերություններ (մարդկային հարաբերություններ, համոզմունքներ, դավանանքներ, պաշտամունքներ)</p> |

- Տեղեկատվական տեքստի ընթերցում և քննարկում
- Բանավեճ՝ «Աշխարհի կրոններ. նմա՞ն, թե՞ տարբեր»
- Նախագիծ՝ «Ծեսերը, սովորույթները, ավանդույթները ժամանակակից հասարակությունում»

Միջառարկայական կապեր

Պատմություն, Գրականություն, Հասարակագիտություն, Օտար լեզու, Ինֆորմատիկա

Կապը հանրակրթության չափորոշի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ

Մ2, Մ7, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ18, Մ23, Մ24, Մ28, Մ29, Մ40, Մ41, Մ42

| Թեմա 4 | |
|---|--|
| Կամավորություն (18 ժամ) | |
| Նպատակ | |
| <ul style="list-style-type: none"> • Ներմուծել կամավորությունը որպես անհատի սոցիալական պատասխանատվության դրսևորման գաղափար: • Ջարգացնել և ընդլայնել կամավորությանը վերաբերող թեմատիկ բառապաշարը: • Ամրապնդել թեմային համապատասխանող քերականական նյութը: • Ջարգացնել կամավորական աշխատանք կատարելու և ծագող խնդիրներին լուծումներ առաջարկելու հմտություններ: • Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն): • Ջարգացնել կամավոր աշխատանքի վերաբերյալ տեղեկատվություն որոնելու, հավաքելու և վերլուծելու կարողություն, • Ջարգացնել կամավորական աշխատանքի տեսակների մասին քննարկման մասնակցելու, կարծիք հայտնելու և իր կարծիքը պաշտպանելու կարողություն, • Արժևորել կամավորական աշխատանքի դերը որպես սոցիալական պատասխանատվություն, անհատի ինքնաճանաչման դրսևորում ի շահ հասարակության: | |
| Վերջնարդյունքներ | |
| <p><i>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</i></p> <ul style="list-style-type: none"> • Թեմային առնչվող բառապաշարը, • Տրված քերականական նյութը, • Կամավորական աշխատանքի տեսակները, առանձնահատկությունները, նպատակներն ու սկզբունքները: | <p><i>Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա</i></p> <ul style="list-style-type: none"> • Լսել և հասկանալ կամավորության թեմային վերաբերող ելույթների, դասախոսությունների, զեկույցների, մեդիա հաղորդումների հիմնական միտքը՝ վեր հանելով խոսողի տեսակետը և վերաբերմունքը, • Կարդալ և հասկանալ կամավորությանը վերաբերող լրագրային կամ տեղեկատվական տեքստերի բովանդակությունը՝ |

| | |
|---|---|
| | <p>ճանաչելով առաջադրված փաստարկների և եզրակացությունների միջև կապը,</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել ելույթ (սեփական կամ այլոց) կամավորական գործունեության մասին՝ բերելով փաստարկներ և առաջադրելով նոր մոտեցումներ, պահպանելով մտքերի տրամաբանական հաջորդականությունը, • Կազմել գրավոր տեքստ՝ ներկայացնելով իր կատարած (կամ ենթադրյալ) կամավորական աշխատանքը և դիտարկելով այն համաշխարհային կամավորական աշխատանքի համատեքստում, • Մասնակցել կամավորություն (կամավորական աշխատանք) թեմայի շուրջ քննարկումներին՝ ճշգրտորեն արտահայտելով սեփական կարծիքը, բերելով համոզիչ փաստարկներ, անելով մեկնաբանություններ և արձագանքելով այլոց փաստարկներին: • Կարևորել կամավորական աշխատանքի դերը սոցիալական զարգացման և ինքնաճանաչման գործում: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Կամավորության կարևորությունն ու դերը 2. Կամավորական աշխատանքների տեսակներ 3. Իմ կամավորական գործունեությունը | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութի (լուրի, գեղարվեստական կամ վավերագրական ֆիլմի) դիտում և քննարկում | <p>Գլոբալիզացիա և կայունություն</p> <p>(կամավորական աշխատանք, պատասխանատվություն, ինքնաճանաչում)</p> |

- Տեղեկատվական տեքստի ընթերցում և քննարկում
- Էլեկտրոնային պաստառ/Մահիկաշար՝ «Կամավորական իմ քայլերը», «Տեղական/համաշխարհային կամավորական կազմակերպություններ»
- Հանդիպում-քննարկում կամավորների/կամավորական կազմակերպությունների հետ
- Նախագիծ «Կամավորությունը որպես ինքնաճանաչման միջոց»
- Կամավորական աշխատանք

Միջառարկայական կապեր

Հասարակագիտություն, Պատմություն, Օտար լեզու, Ինֆորմատիկա, ՆԶՊ

Կապը հանրակրթության չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ

Մ2, Մ8, Մ9, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ18, Մ28, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ33, Մ34, Մ35, Մ46

Թեմա 5

Հաջողության գրավականը (18 ժամ)

Նպատակ

- Ներմուծել հաջողության հասանելու համար աշխատասիրության և ստեղծարարության անհրաժեշտության գաղափարը,
- Ջարգացնել հաջողությանը վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- Ամրապնդել թեմային համապատասխանող քերականական նյութը,
- Լուսաբանել հաջողության հասած մարդկանց կյանքի պատմությունները՝ որպես նպատակասլացության և կամքի ուժի օրինակներ,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ջարգացնել սեփական ուժերն ու հնարավորությունները ճիշտ ճանաչելու և գնահատելու կարողությունները,
- **Ձևավորել ձախողումներից դաս քաղելու և խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ ստեղծագործականություն դրսևորելու կարողություն:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը,
- Տրված քերականական նյութը,
- Տեղեկություններ հաջողության հասնելու նախապայմանների, ուղիների, ձախողումների և ձեռքբերումների մասին

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ հաջողության պատմություններ, բանաձևեր և մոտիվացնող մեղիա հաղորդումների կամ ձայնագրված նյութերի բովանդակությունը, խոսողի տեսակետը և վերաբերմունքը,
- Կարդալ և հասկանալ լրագրային և գիտահանրամատչելի տեքստեր, հոդվածներ հաջողության հասած մարդկանց , նրանց ձախողումների, ձեռքբերումների, հաջողության հասնելու

| | |
|---|--|
| | <p>ուղիների մասին՝ ճանաչելով քայլերի հաջորդականությունը, տրամաբանական կապերը և եզրահանգումները,</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել հաջողության հասած մարդկանց կյանքի պատմություններ՝ վերլուծելով նրանց հաջողության հասնելու սկզբունքները, դժվարությունները, դրանք հաղթահարելու պատրաստակամությունն ու ձեռնարկված քայլերը, • Կազմել գրավոր շարադրանք (250 – 280 բառ)՝ սեփական դատողությունների ու մոտեցումների, ուժերի ու հնարավորությունների, նպատակների և դրանց հասնելու ուղիների, հնարավոր դժվարությունների և դրանց հաղթահարման քայլերի վերաբերյալ, • Քննարկել հաջողության բանաձևերը՝ արտահայտելով սեփական կարծիքը, բերելով համոզիչ փաստարկներ, մեկնաբանություններ, առաջադրելով վարկածներ, արձագանքելով այլոց փաստարկներին: • Վերցնել հարցազրույց «Հաջողություն» թեմայով՝ նախապես մշակված հարցաշարով, ըստ անհրաժեշտության հեռանալով դրանից և կողմնորոշվելով ըստ պատասխանների: • Դրսևորել հաջողության հասնելու համար սեփական ուժերն ու հնարավորությունները ճիշտ ճանաչելու և գնահատելու կարողությունը: • Դրսևորել ձախողումներից դաս քաղելու և խոչընդոտները ստեղծագործաբար հաղթահարելու կարողություն: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Հաջողության հասնելու ուղիները 2. Ձախողումներ և ձեռքբերումներ 3. Հաջողության հասած մարդկանց կյանքի պատմություններ | |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Դերախաղ • Տեսանյութի (լուրի, գեղարվեստական կամ վավերագրական ֆիլմի) դիտում և քննարկում • Տեղեկատվական տեքստի ընթերցում և քննարկում • Սահիկաշար՝ «Հաջողած մարդիկ» • Փաստարկային էսսե՝ «Հաջողության իմ ուղին» • Հարցազրույց՝ «Ձեր հաջողության գրավականը» • Նախագիծ՝ «Հաջողության պատմություններ» | <p>Արդարություն և զարգացում</p> <p>(հաջողության բանաձևը հիմնված ձախողումներ ու ձեռքբերումների վրա)</p> |
| Միջառարկայական կապեր | |
| <p>Հայ գրականություն, Համաշխարհային պատմություն, Հայոց պատմություն, Հասարակագիտություն, Քիմիա, Ֆիզիկա, Հանրահաշիվ, Երկրաչափություն, Ֆիզկուլտուրա, Օտար լեզու, ՀԵՊ, Ինֆորմատիկա:</p> | |
| Կապը հանրակրթության չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ | |
| <p>Մ2, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ18, Մ19, Մ20, Մ25, Մ26, Մ27, Մ28, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ33, Մ34, Մ35, Մ36, Մ37, Մ38, Մ39, Մ47, Մ48</p> | |

Թեմա 6

Իմ հետագա քայլերը (18 ժամ)

Նպատակ

- Ներմուծել հաջողության համար գործողությունների պլանավորման և դրանց հետահայաց վերլուծության անհրաժեշտության գաղափարը,
- Ջարգացնել ապագայի ծրագրերին, դրանց իրականացման քայլերին, հաջողության հասնելու համար անհրաժեշտ գործոններին վերաբերող թեմատիկ բառապաշար,
- Ամրապնդել թեմային համապատասխանող քերականական նյութը,
- Ջարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն),
- Ջարգացնել ապագայի ծրագրերը հաջողությամբ իրականացնելուն ուղղված մի շարք սկզբունքային հմտություններ (ճանաչել շրջապատող աշխարհը, սեփական հնարավորություններն ու քայլերը, իմանալ քայլերի հաջորդականությունը),
- **Ձևավորել ինքնաճանաչման հիման վրա հետագա գործողությունների պլանավորման և ինքնուրույն որոշում կայացնելու գիտակցություն:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- Թեմային առնչվող բառապաշարը,
- Տրված քերականական նյութը,
- Ծրագիր կազմելու սկզբունքները

Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա

- Լսել և հասկանալ ապագայի ծրագրերին առնչվող մեղիա հաղորդումների կամ ձայնագրված նյութերի բովանդակությունը, ինչպես նաև խոսողի տեսակետն ու վերաբերմունքը:
- Կարդալ և հասկանալ լրագրային և գիտահանրամատչելի տեքստեր/հոդվածներ իրենց ծրագրերը հաջողությամբ պսակած

| | |
|---|--|
| | <p>անհատների, նրանց իրականացրած քայլերի մասին՝ դուրս բերելով անհրաժեշտ տեղեկատվությունը, հեղինակների տեսակետներն ու կարծիքները,</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել «Իմ հետագա քայլերը» թեմայով ելույթ՝ առաջադրելով իր մտքերը հետագա անելիքների վերաբերյալ և հիմնավորելով դրանց իրագործմանն ուղղված քայլերը, • Կազմել գրավոր շարադրանք՝ ներկայացնելով իր ակնկալիքները, իդձերը, դրանց իրագործման ծրագրերը և կոնկրետ քայլերը, • Քննարկել ապագայի ծրագրերն ու հետագա քայլերը՝ պատասխանելով իրեն ուղղված հարցերին, արտահայտելով սեփական կարծիքը, բերելով համոզիչ փաստարկներ, մեկնաբանություններ և փոխադարձ հարցեր ուղղելով զրուցակցին, • Կարևորել ներկայի ճիշտ պլանավորումը որպես ապագայի հաջողության գրավական: • Պլանավորել հետագա գործողությունների ինքնաճանաչման հիման վրա և կայացնել ինքնուրույն որոշումներ: |
| Բովանդակություն | |
| <ol style="list-style-type: none"> 1. Ապագայի իմ ծրագրերը 2. Ծրագրիս իրականացման քայլերը 3. Հաջողելու համար անհրաժեշտ գործոնները | |
| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական գաղափարներ |

- Դերախաղ
- Տեսանյութի (լուրի, գեղարվեստական կամ վավերագրական ֆիլմի) դիտում և քննարկում
- Տեղեկատվական տեքստի ընթերցում և քննարկում
- Սահիկաշար/Էլ. պաստառ՝ «Հաջողության իմ բանաձևը»
- Էսսե՝ «Հաջողության իմ ճանապարհը»
- Այցելություն՝ «Ամրագրիք քո ապագան» մետաղյա քանդակին/Քանդակի մասին պատմող հոլովակի դիտում
- Հարցազրույց՝ «Ապագայի ծրագրեր»
- Բանավեճ՝ «Ռիսկը որպես հաջողության գրավական»
- Նախագիծ՝ «Հաջողության մեխանիկա»

Արդարություն և զարգացում

(ապագա ծրագրերի մշակում և իրականացում)

Գլոբալիզացիա և կայունություն

(անհատ և գլոբալ հասարակություն)

Միջառարկայական կապեր

Գրականություն, Պատմություն, Հասարակագիտություն, Քիմիա, Ֆիզիկա, Հանրահաշիվ, Երկրաչափություն, Ֆիզկուլտուրա, Օտար լեզու, Արվեստ

Կապը հանրակրթության չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ

Մ2, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ18, Մ19, Մ20, Մ25, Մ26, Մ27, Մ29, Մ30, Մ31, Մ32, Մ33, Մ34, Մ35, Մ36, Մ37, Մ38, Մ39, Մ47, Մ48

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՆԳԼԵՐԵՆ

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱՊԱՇԱՐ և

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

| | 2-րդ դասարան | 3-րդ դասարան | 4-րդ դասարան |
|--------------------|--|--|---|
| Հնչյունաբանություն | Letters (A-Z) | Letters and sounds (-th, -ch, -sh, -oo etc.) | |
| Քերականություն | <ul style="list-style-type: none"> ● Adjectives: common and demonstrative ● Imperatives ● Modals: Can/ can't ● Prepositions: common prepositions ● Prepositions of place ● Verb + ing: like/hate/love ● Have got/has got | <ul style="list-style-type: none"> ● How much/how many and very ● There is/are ● Possessive adjectives ● Possessive 's ● Common uncountable nouns ● Present simple: to be ● Present simple ● Comparative adjectives: short adjectives ● Superlative adjectives: short adjectives ● I'd like ● Modals: Can/ can't/ could/ couldn't | <ul style="list-style-type: none"> ● Present simple, Adverbs of frequency (always, usually sometimes, never) ● Comparative and superlative adjectives (short adjectives) ● Going to ● Past simple of "to be" ● Past Simple "regular verbs" ● Past Simple "irregular verbs" ● Prepositions of time, including in/on/at ● Present continuous ● Intensifier: Too |
| Բառապաշար | <ul style="list-style-type: none"> ● Ordinal numbers (1-12) ● Colours (black golden orange red blue) ● Body parts (head, ears, mouth, eyes) ● Family (mother, father, mum, dad, sister, brother, grandpa, grandma) ● Hobbies and Leisure (barbecue CD (player) go shopping music beach club guitar musician bicycle collect (v) hobby paint (n & v) bike computer holidays | <ul style="list-style-type: none"> ● Ordinal numbers (1-100) ● Family and Friends/ family tree (aunt girl group mum(my) boy grandchild guest neighbour brother grand(d)ad guy parent child granddaughter husband pen-friend) ● Opinion adjectives: beautiful free noisy sweet better friendly old tall big funny pleasant terrible bored good poor tired boring great pretty unhappy brave happy | <ul style="list-style-type: none"> ● Ordinal numbers (1-100) ● Countries and Nationalities (Armenian, Russian, English, German, French) ● Time and daily routine (afternoon evening morning tonight a.m./p.m. half (past) night week appointment holidays noon weekday autumn hour o'clock weekend birthday January - December past weekly calendar) ● Weather and seasons (e.g. cloud hot sun wet cloudy ice sunny |

| | | | |
|--|---|---|--|
| | <p>park book cycling join party)</p> <ul style="list-style-type: none"> ● School (board, desk, pen, pencil case, pencil, etc.) | <ul style="list-style-type: none"> ● Food and Drink/ Measurements ● (apple chocolate hungry pizza bake coffee ice plate banana cola ice cream potato barbecue cook (n & v) jam rice biscuit cooker juice roast (v & adj), centimetre / half metre / meter temperature centimeter / cm hour minute weekday kilo(gram[me])/kg moment year degree kilometre/kilometre) ● House and Home (address clock furniture oven apartment computer garage pillow armchair cooker garden refrigerator) ● At school (subjects, rooms, places) ● Animals (dog, cat, mouse, horse, cow) | <p>wind cold rain thunderstorm windy fog snow warm foggy storm weather)</p> <ul style="list-style-type: none"> ● Sport (ball football riding swimming badminton football player rugby swimming costume baseball game run (v) swimming pool basketball goal) ● Shopping/ Clothes and Accessories (assistant close (v) for sale shop bill closed go shopping shop assistant bookshop cost (n & v) open (v & adj) shopper buy (v) credit card pay (for) shopping cash (n & v)) ● Holidays/ Leisure activities (Go camping, fishing, roller skating, climbing, hiking, doing sports, watching films) |
|--|---|---|--|

| | 5-րդ դասարան | 6-րդ դասարան |
|----------------|---|---|
| Քերականություն | <ul style="list-style-type: none"> ● Comparative and Superlative Adjectives: long and short adjectives, exceptions ● Adverbs of frequency: always, often, usually, sometimes, seldom, hardly ever, never ● Articles – with countable and uncountable nouns ● Countable and Uncountable nouns: much/many/some/any ● Imperative forms: directions, orders, requests ● Going to ● Past simple ● Wh- questions in the past simple ● Past continuous ● Wh- questions in the past continuous ● Modal verbs: can/could/ should ● Possessives: use of 's, s' ● Prepositional phrases: place, time and movement ● Prepositions of time: on/in/at | <ul style="list-style-type: none"> ● Adverbial phrases of time, place and frequency: first, then, after, afterward ● Future Time: will and going to ● Modals: have to/should ● Present simple and present continuous ● Past simple and past continuous ● Phrasal verbs: common (get up, get on with, look out, look after, look forward, looking forward to, go out with, etc.) ● Present continuous for future arrangements ● Present perfect ● Verb + ing/infinitive: like/want-would like ● Wh- questions in the present |
| Բառապաշար | <ul style="list-style-type: none"> ● Ordinal and Cardinal Numbers ● Travel and Transport: (air)plane explorer park (v) street airport far passenger suitcase ambulance flight passport taxi backpack) ● Work and Jobs (actor diploma | <ul style="list-style-type: none"> ● Appearance: dark, blond, fair, attractive, thin, fit, strong, good-looking, handsome, toddler) ● Personality adjectives: pleased, happy, angry, lazy, hard-working, helpful, upset) |

journalist secretary artist doctor king
shop assistant boss Dr letter shopper
break (n) driver manager singer
business earn mechanic staff
businessman email (n & v) meeting
student businesswoman)

- **Places:Town and City** (bank doctor petrol station theatre cafe / café garage post office tourist information cafeteria hotel restaurant centre cinema library sports centre dentist museum swimming pool, area forest path sky beach hill railway village campsite)
- **Countryside/ neighbourhood:** (field, forest, desert, farm, jungle, rainforest)
- **Health, Medicine and Exercise** (accident danger hair problem ambulance dangerous hand rest (n) appointment deadhead run arm dentist health sick)
- **Hobbies and Entertainment** (adventure disco museum project advertisement drum music radio art DVD (player) musician read (v) article exhibition news rock (concert) board game festival newspaper)
- **Wild and farm animals** (monkey, insects, duck, elephant, snake, rat, bear, baby elephant, lion, rabbit)

- **Sports and games:** athletics, badminton, coach, referee, pitch, goalkeeper, tennis racket, competition, win, lose, score, draw
- **Lifestyle adjectives:** dangerous, carefree, healthy, unhealthy, lazy, famous, married, single, clever, careful
- **Dates:** be born, die, in 1999, 2 April 1865
- **Holidays:** family celebrations, festivals, tradition, costume, carnival, ceremony, culture, firework, local, souvenir, decoration
- **Birthplace/homeland:** citizen, citizenship, common, sights, go sightseeing, historical places, monuments, sculptures, art
- **England/ Britain:** language, accent, communicate, ideas, translate, pronunciation, history, historical heritage

| | 7-րդ դասարան | 8-րդ դասարան | 9-րդ դասարան |
|----------------|--|---|--|
| Քերականություն | <ul style="list-style-type: none"> ● Comparatives and superlatives ● Adverbs: Comparison ● Intensifiers: far, much, too, enough ● Zero and 1st conditional ● Connecting words: cause and effect, contrast etc.(first, second, next, to sum up etc.) ● Future simple: will/ going to, predictions and intentions ● Future continuous ● Modals: must/have to ● Past continuous vs past simple: when and while ● Reported speech: Orders and requests ● Passive voice: present and past simple ● | <ul style="list-style-type: none"> ● Conditionals: 2nd and 3rd ● Connecting words: cause and effect, contrast etc.(because of, due to etc) ● Future continuous ● Future simple and future continuous ● Modals: might, may, will, probably ● Present perfect vs past simple ● Past perfect ● Used to ● Phrasal verbs: Basic ● Reported speech: Statements/questions ● Passive voice: present, past and future simple ● Question tags | <ul style="list-style-type: none"> ● Connecting words: linkers(though, although, in spite of, despite, however, moreover, in addition to, etc.) ● Modals of deduction- must/can't ● Modals: should have/might have/etc ● Present perfect continuous ● Be used to and get used to ● Phrasal verbs: Extended ● Reported speech: Orders and requests, statements questions and reporting verbs ● Passive voice: present/ /past/future continuous and perfect simple |
| Բառապաշար | <ul style="list-style-type: none"> ● Time machine/Time: afternoon evening night weekday a.m. / p.m. half (past) noon weekend ages (for ages) holidays o'clock weekly appointment hour past winter approximately January - December quarter (past / to) working hours ● Sport/ Olympic and Paralympic: basketball bat bathing suit beach bicycle bike boat boxing catch (v) champion championship changing | <ul style="list-style-type: none"> ● Communication/verbal/ non-verbal/ Technology: access address app at / @ blog blogger by post calculator call (v) call back CD (player) cell phone chat chat room click (v) computer connect connection data delete dial dial up digital digital camera disc/disk dot download (n & v) drag DVD (play) Language: advanced answer argue ask beginner chat | <ul style="list-style-type: none"> ● Education/ absent advanced arithmetic art beginner bell biology blackboard board book bookshelf break(time) break up certificate chemistry class classroom Work and Jobs: application apply architect army artist assistant astronaut athlete babysitter banker barber |

room climb (v) climbing club coach
(n) compete competition competitor

Health, Medicine and Exercise:

accident ache ambulance ankle
appointment arm aspirin baby
bandage bleed (v) blood (n) body
bone brain break breath breathe
check chemist chin clean cold (n)
comb cough (n & v) cut damage
danger dangerous dead dentist die
diet doctor ear earache emergency
exercise eye face fall

- **Weather/Environment:** bottle bank
climate change gas (Am Eng) litter
petrol (Br Eng) pollution prohibited
public transport recycle recycled
recycling rubbish (bin) blow breeze
centigrade cloud cloudy cold cool
degrees dry forecast fog foggy
freezing frozen gale get wet heat hot
humid ice icy lightning mild rain
shower snow snowfall storm sun
sunny sunshine temperature
- **Fashion/style/Shopping/:** ad advert
advertise advertisement assistant
bargain bill book buy cash cent
change cheap cheque choose close (v)
Colours (dark/light/pale) black blue
brown gold golden green grey / gray
Clothes and Accessories backpack
bag belt blouse boot bracelet button
cap chain clothes coat collar
- **Inventions/ House and Home**

communicate communication
elementary email grammar
intermediate joke letter mean
meaning

- **Around the world/ Travel and Transport :** abroad
accommodation (aero) / (air)plane
airline airport ambulance
announcement arrival arrive
astronaut at sea backpack
backpacker backpacking
Places: Countryside area bay
beach campsite canal cliff desert
earth farm field forest harbour
hill island lake land mountain
- **Personal Feelings, Opinions and Experiences** (Adjectives) able
afraid alone amazed amazing
amusing angry annoyed anxious
ashamed awesome awful bad
beautiful
- **World cuisine/ Food and Drink**
apple bake (v) banana barbecue
(n & v) bean biscuit bitter (adj)
boil (v) boiled bottle bowl box
bread break breakfast burger
butter cabbage café / cafe
cafeteria cake can (of beans)
candy canteen carrot cereal
cheese chef chicken
- **Entertainment and Media** act (v)
action actor actress ad admission
adventure advert advertisement

boss break (n)

- **Disasters/The Natural World:**
air animal autumn beach
bee bird branch bush
butterfly cave cliff climate
coast continent country
countryside desert dolphin
donkey duck earth east
human made disasters and
natural disasters
- **Cultural Heritage/Places:
Town and City** apartment
building airport booking
office bridge bus station
Places: Buildings apartment
block / apartment building
bank bookshop bookstore
building cafe / café
- **Books/films:** documentary,
fantasy detective story
horror film western author
review director genres
Hobbies and Leisure:
barbecue beach bicycle bike
camera camp camping
campsite CD (player) chess
club collect(or) collection
computer cruise dance
- **Law/ crime and
punishment:** murder arrest

| | | | |
|--|---|--|--|
